

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2010 թվականի

թիվ 317

քաղ. Սանկտ Պետերբուրգ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ՄԱՍԻՆ

Մաքսային միության հանձնաժողովը *որոշեց*

1. Հաստատել՝

- Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների միասնական ցանկը (այսուհետ՝ Միասնական ցանկ, հավելված թիվ 1),

- «Մաքսային միության մաքսային սահմանին և Մաքսային միության մաքսային տարածքում անասնաբուժական հսկողություն իրականացնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթը (հավելված թիվ 2),

- «Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտների համատեղ ստուգումներ անցկացնելու և ապրանքների (արտադրանքի) փորձանմուշներ վերցնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթը (հավելված թիվ 3),

- Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջները (այսուհետ՝ Միասնական պահանջներ, հավելված թիվ 4),

- Անասնաբուժական սերտիֆիկատների միասնական ձևերը (հավելված թիվ 5):

2. Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի

Դաշնության Կառավարություններին՝ 2010 թվականի հուլիսի 1-ից կիրառել Միասնական ցանկը և Միասնական պահանջները:

3. Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության լիազոր մարմիններին՝ 2010 թվականի հուլիսի 1-ից իրականացնել՝

- անասնաբուժական հսկողություն Մաքսային միության մաքսային սահմանին և մաքսային տարածքում՝ սույն Որոշման թիվ 2 հավելվածին համապատասխան,

- անցկացնել անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտների և ապրանքների (արտադրանքի) փորձանմուշների վերցման համատեղ ստուգումներ՝ Մաքսային միության անդամ պետությունների և երրորդ երկրների տարածքներում՝ սույն Որոշման թիվ 3 հավելվածին համապատասխան:

4. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում 2010 թվականի հուլիսի 1-ից:

Մաքսային միության հանձնաժողովի անդամներ՝

Բելառուսի
Հանրապետությունից

Ա. Կոբյակով

Ղազախստանի
Հանրապետությունից

Ու. Շուկեն

Ռուսաստանի
Դաշնությունից

Ի. Շուվալով

[Հավելվածներ](#)

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մաքսային միության
հանձնաժողովի 2010 թվականի
հունիսի 18-ի թիվ 317 որոշմամբ

Անասնաբուժական հսկողության (վերահսկողության)* ենթակա ապրանքների

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՑԱՆԿ

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Ապրանքի անվանումը	Ծանոթագրություն
0101	Ձիեր, ավանակներ, ջորիներ և կիսագրաստներ՝ կենդանի	
0102	Խոշոր եղջերավոր անասուններ՝ կենդանի	
0103	Խոզեր՝ կենդանի	
0104	Ոչխարներ և այծեր՝ կենդանի	
0105	Ընտանի թռչուն՝ կենդանի, այսինքն՝ ընտանի հավեր (Gallus domesticus), բադեր, սագեր, հնդկահավեր և խայտահավեր	
0106	Կենդանի կենդանիներ՝ այլ ⁽¹⁾	
0201	Խոշոր եղջերավոր անասունների միս՝ թարմ կամ պաղեցրած	
0202	Խոշոր եղջերավոր անասունների միս՝ սառեցրած	
0203	Խոզի թարմ միս՝ պաղեցրած կամ սառեցրած	
0204	Ոչխարի կամ այծի միս՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած	
020500	Ձիու, ավանակի, ջորու կամ կիսագրաստի միս՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած	
0206	Խոշոր եղջերավոր անասունների, խոզերի, ոչխարների, այծերի, ձիերի, ավանակների, ջորիների կամ կիսագրաստների սննդային ենթամթերք՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած	
0207	0105 ապրանքային դիրքում նշված ընտանի թռչունների միս և սննդային ենթամթերք՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած	
0208	Այլ միս և մսից սննդային ենթամթերք՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած	
020900	Անյուղ մսից առանձնացված խոզի ճարպ և չհալեցրած կամ այլ եղանակով չստացված ընտանի թռչունների ճարպ՝ թարմ, պաղեցրած, սառեցրած, աղ դրված**, աղաջրի մեջ դրված**, չորացրած** կամ ապխտած	
0210	Միս և մսից սննդային ենթամթերք՝ աղ դրված**, աղաջրի մեջ դրված**, չորացրած**	** - անասնահամաճարակային

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Ապրանքի անվանումը	Ծանոթագրություն
	կամ ապխտած**, մսից կամ մսի սննդային ենթամթերքից ստացված սննդային ալյուր	բարեկեցության առումով
0301	Կենդանի ձուկ	
0302	Ձուկ՝ թարմ կամ պաղեցրած՝ բացառությամբ 0304-րդ ապրանքային դիրքում ընդգրկված ձկան ֆիլեի և այլ ձկան մսի	
0303	Ձուկ՝ սառեցրած՝ բացառությամբ 0304-րդ ապրանքային դիրքում ընդգրկված ձկան ֆիլեի և ձկան մսի	
0304	Ձկան ֆիլե և այլ ձկան միս (ներառյալ խճողակը)՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած	
0305	Ձուկ՝ չորացրած, աղ դրված կամ աղաջրի մեջ դրված, ձուկ՝ տաք կամ սառը ապխտման, ձկնալյուր՝ մանր և խոշոր աղացվածքի, և ձկներից հատիկներ՝ սննդի մեջ օգտագործելու համար պիտանի.	** - անասնահամաճարակային բարեկեցության առումով
0306	Խեցգետնակերպեր՝ զրահի մեջ կամ առանց զրահի, կենդանի, թարմ, պաղեցրած, սառեցրած, չորացրած**, աղ դրված** կամ աղաջրի մեջ դրված**, խեցգետնակերպեր՝ ապխտած՝ զրահի մեջ խեցգետնակերպեր՝ զրահի մեջ՝ շոգեխաշած** կամ եռացող ջրի մեջ եփած**, պաղեցրած կամ չպաղեցրած, սառեցրած, չորացրած**, աղ դրված** կամ աղաջրի մեջ դրված**, ալյուր՝ մանր և խոշոր աղացվածքի, և խեցգետնակերպերից հատիկներ՝ սննդի մեջ օգտագործելու համար պիտանի**	** - անասնահամաճարակային բարեկեցության առումով
0307	Կակղամորթեր՝ խեցու մեջ կամ առանց խեցու, կենդանի, թարմ, պաղեցրած, սառեցրած, չորացրած**, աղ դրված** կամ աղաջրի մեջ դրված**, ջրային այլ անողնաշարավորների՝ բացի խեցգետնակերպերից և կակղամորթերից, կենդանի, թարմ, պաղեցրած, սառեցրած, չորացրած**, աղ դրված** կամ աղաջրի մեջ դրված**, ալյուր՝ մանր և խոշոր աղացվածքի, և հատիկներ՝ ջրային այլ անողնաշարավորներից՝ սննդի մեջ օգտագործելու համար պիտանի**	** - անասնահամաճարակային բարեկեցության առումով
0401-ից	Հում կաթ և հում սերուցք՝ չխտացրած ու շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր չավելացրած	
0402	Կաթ և սերուցք՝ խտացրած կամ շաքար կամ քաղցրացնող այլ նյութեր ավելացրած**	** - անասնահամաճարակային բարեկեցության առումով
0403	Թան, կտրված կաթ և սերուցք, յոգուրտ, կեֆիր և այլ խմորման ենթարկված կամ	** - անասնահամաճարակային

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Ապրանքի անվանումը	Ծանոթագրություն
	թթվեցրած կաթ ու սերուցք՝ խտացրած կամ չխտացրած, շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած, համաբուրավետիչ հավելումներով կամ առանց դրանց, մրգեր, ընկույզ կամ կակաո ավելացրած կամ չավելացրած**.	բարեկեցության առումով
0404	Կաթնային շիճուկ՝ խտացրած կամ չխտացրած, շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած, մթերքներ կաթի բնական բաղադրիչներից՝ շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած, այլ տեղում չնշված կամ չներառված**	** - անասնահամաճարակային բարեկեցության առումով
0405	Կարագ և կաթից պատրաստված այլ ճարպեր ու յուղեր. կաթնային մածուկներ**	** - անասնահամաճարակային բարեկեցության առումով
0406	Պանրի տեսակներ և կաթնաշոռ**	** - անասնահամաճարակային բարեկեցության առումով
040700	Թռչնի ձվեր՝ կճեպով, թարմ, պահածոյացված** կամ եփված**	** - անասնահամաճարակային բարեկեցության առումով
0408	Թռչունների ձվեր առանց կճեպի և դեղնուցներ՝ թարմ, չորացրած, եփված եռացրած ջրում** կամ շոգեխաշած**, կաղապարած**, սառեցրած կամ այլ կերպ պահածոյացրած**, շաքար կամ քաղցրացնող այլ նյութեր ավելացրած կամ չավելացրած	** - անասնահամաճարակային բարեկեցության առումով
0409 00 000 0	Բնական մեղր	
0410 00 000 0	Կենդանական ծագում ունեցող սննդամթերք՝ այլ տեղ չնշված կամ չներառված	
0502	Խոզի կամ վարազի ստև. փորսուղի կամ այլ մազ՝ օգտագործվող խոզանակային իրերի արտադրության համար, դրանց թափոնները	
0504 00 000 0	Կենդանիների (բացի ձկներից) աղիքներ, պարկեր և ստամոքսներ՝ ամբողջական և կտորներով, թարմ, պաղեցրած, սառեցրած, աղ դրված, աղաջրի մեջ դրված, չորացրած կամ ապխտած	
0505	Թռչունների մորթիկներ և այլ մասեր՝ փետուրներով կամ աղվափետուրով, փետուրներ և փետուրների մասեր (կտրված կամ չկտրված եզրերով) և աղվափետուր՝ պահելու համար մաքրված, ախտահանված կամ մշակված, սակայն հետագա մշակման չենթարկված, փետուրների և դրանց մասերի փոշին և	

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Ապրանքի անվանումը	Ծանոթագրություն
	թափոնները	
0506	Ոսկորներ և եղջյուրների կոթուն՝ չմշակված, ճարպագրկված, առաջնային մշակման ենթարկված (առանց ձև տալու), թթվով մշակված կամ ապաժելատինացված, այդ մթերքի փոշին և թափոնները	
0507	Փղոսկր, կրիաների զրահներ, կետոսկր կամ ծովային այլ կաթնասունների բեղեր, կոտոշներ, եղջերուի եղջյուրներ, սմբակներ, եղունգներ, մագիլներ և կտուցներ՝ չմշակված կամ առաջնային մշակման ենթարկված, սակայն առանց ձև տալու, այդ մթերքի փոշին և թափոնները	
0508 00 000 0	Մարջան և նույնանման նյութեր՝ չմշակված կամ առաջնային մշակման ենթարկված, կակղամորթների, խեցգետնանմանների կամ փշամորթների խեցիներ և զրահներ, սիպենների կմախքների կիսաններ՝ չմշակված կամ առաջնային մշակման ենթարկված, առանց ձև տալու, այդ մթերքի փոշին և թափոնները	Անասնաբուժության մեջ, այդ թվում՝ կենդանիների կերերի մեջ օգտագործումը հայտարարագրելու դեպքում
0510 00 000 0	Համապար մոխրագույն, կղբեշիթ, ցիվետա և մուշկ, իսպանական բզեզ լեղի, այդ թվում՝ չոր, գեղձեր և դեղագործական ապրանքների արտադրության մեջ օգտագործվող կենդանական ծագման այլ մթերք՝ թարմ, պահեցված, սառեցված կամ կարճաժամկետ պահպանման համար այլ ձևով մշակված	
0511	Կենդանական ծագման մթերք՝ այլ տեղ չնշված կամ չներառված, 01 կամ 03 խմբում նշված սատկած կենդանիներ՝ ոչ պիտանի սննդի մեջ օգտագործելու համար	
0511 99 310 0, 0511 99 390 0	Կենդանական ծագում ունեցող բնական սպունգներ	
0511 99 809 2	Ձիու մազ և դրա թափոնները, այդ թվում՝ որպես քաթան՝ հիմնաշերտով կամ առանց դրա	
0511-ից, 9601-ից, 9705 00 000 0-ից	Որսորդական հաղթանշաններ, խրտվիլակ, այդ թվում՝ տաքսիդերմիկ մշակում անցած կամ կոնսերվացված	
1001 10 000 0 (միայն ֆուրաժային հատիկ)	Ցորեն՝ կարծր	
1001 90 990 0 (միայն ֆուրաժային)	Ցորեն՝ փափուկ	

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Ապրանքի անվանումը	Ծանոթագրություն
հատիկ)		
1002 00 000 0 (միայն ֆուրաժային հատիկ)	Աշորա	
1003 00 900 0 (միայն ֆուրաժային հատիկ)	Գարի	
1004 00 000 0 (միայն ֆուրաժային հատիկ)	Վարսակ	
1005 90 000 0 (միայն ֆուրաժային հատիկ)	Եգիպտացորեն՝ այլ	
1201 00 900 0 (միայն ֆուրաժային հատիկ)	Սոյայի հատիկներ	
1208-ից	Մանր և խոշոր աղացվածքի այլոր՝ ստացված յուղատու մշակաբույսերի սերմերից կամ պտուղներից (բացի մանանեխի սերմերից), որոնք օգտագործվում են կենդանիներին կերակրելու համար	
1211-ից	Բույսեր և դրանց մասերը (ներառյալ սերմերն ու պտուղները), օգտագործվում են որպես միջատասպան միջոցներ կամ նույնանման նպատակներով, կամ անասնաբուժության մեջ՝ թարմ կամ չորացրած, ամբողջական կամ մանրացրած, մանրատած կամ աղացած	Անասնաբուժության մեջ, այդ թվում՝ կենդանիների կերերի մեջ օգտագործումը հայտարարագրելու դեպքում
1212 99 700 0-ից	Այլ (ծաղկափոշի)	
1213 00 000 0	Հացահատիկային բույսերի ծղոտ և մղեղ՝ չվերամշակված, մանրացրած կամ չմանրացրած, աղացած կամ չաղացած, մամլած կամ գրանուլների տեսքով	
1214	Շաղգամ, տերևավոր ճակնդեղ (մանգոլդ), կերային արմատապտուղներ, խոտ, առվույտ, երեքնուկ, կորնգան, տերևակաղամբ, լուպին, գլուկ և նույնանման կերամիջոցներ, հատիկավոր (գրանուլացված) կամ ոչ հատիկավոր	
1301 90 900 0-ից	Այլ (Ակնամոմ)	

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Ապրանքի անվանումը	Ծանոթագրություն
1501 00	Խոզաճարպ (ներառյալ հալած խոզաճարպը) և ընտանի թռչունների ճարպ՝ բացի 0209 կամ 1503 ապրանքային դիրքերում նշված ճարպից	
1502 00	Խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների կամ այծերի ճարպ՝ բացի 1503 ապրանքային դիրքում նշված ճարպից	
1503 00	Հալած խոզաճարպ-բնաճարպ, հալած խոզաճարպ-օլ, օլեոստեարին, օլեո-օլ և կենդանական յուղ, էմուլսիայի չվերածած կամ չխառնուրդած, կամ որևէ այլ ձևով չպատրաստված	
1504	Ձկան կամ ծովային կաթնասունների ճարպեր, յուղեր և դրանց զտամասեր՝ չռաֆինացված կամ ռաֆինացված, սակայն առանց փոփոխելու քիմիական կազմը	
1505 00	Ճարպաքրտինք և դրանից ստացվող ճարպանյութեր (ներառյալ լանոլինը)	
1506 00 000 0	Կենդանական այլ ճարպեր, յուղեր և դրանց զտամասերը՝ չռաֆինացված կամ ռաֆինացված, սակայն առանց փոփոխելու քիմիական կազմը	
1516 10	Կենդանական ճարպեր և յուղեր ու դրանց զտամասերը՝ լրիվ կամ մասնակի հիդրոգենացված, ընդթերացված, վերաթերացված կամ էլաիդինացված, չռաֆինացված կամ ռաֆինացված, սակայն հետագա մշակման չենթարկված	
1516 20	Բուսական ճարպեր և յուղեր ու դրանց զտամասերը	Անասնաբուժության մեջ, այդ թվում՝ կենդանիների կերերի մեջ օգտագործումը հայտարարագրելու դեպքում
1517-ից	Մարգարին** (բացի բուսական ծագում ունեցող մարգարինից). սննդի մեջ օգտագործելու համար պիտանի խառնուրդներ կամ պատրաստի մթերքներ՝ կենդանական ճարպերից կամ յուղերից կամ տվյալ խմբի տարբեր կենդանական ճարպերի կամ յուղերի զտամասերից՝ անկախ կենդանական ճարպերի տոկոսային պարունակության՝ բացի 1516 ապրանքային դիրքում նշված սննդային ճարպերից կամ յուղերից կամ դրանց զտամասերից	** - անասնահամաճարակային բարեկեցության առումով
1518 00	Կենդանական կամ բուսական ճարպեր և յուղեր ու դրանց զտամասերը՝ եփված, թթվեցրած, ջրազրկված, սուլֆացված, օդային փչումով թթվեցրած, պոլիմերացված տաքացումով վակուումում կամ իներտ գազի մեջ, կամ քիմիապես վերափոխված այլ եղանակով՝ բացի 1516 ապրանքային դիրքում ընդգրկված մթերքներից. սննդի մեջ	Անասնաբուժության մեջ, այդ թվում՝ կենդանիների կերերի մեջ օգտագործումը հայտարարագրելու դեպքում

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Ապրանքի անվանումը	Ծանոթագրություն
	օգտագործելու համար ոչ պիտանի խառնուրդներ կամ պատրաստի մթերքներ՝ կենդանական կամ բուսական ճարպերից կամ յուղերից կամ տվյալ խմբի տարբեր ճարպերի կամ յուղերի գտամասերից, այլ տեղում չնշված կամ չընդգրկված	
1521 90	Մեղվամոմ և այլ միջատների մոմ ու կետածարպ՝ ներկած կամ չներկած, ռաֆինացված կամ չռաֆինացված	
1601 00	Երշիկներ և մսից, մսային ենթամթերքներից կամ արյունից պատրաստված համանման մթերքներ. դրանց հիմքով պատրաստված պատրաստի սննդամթերքներ**	** - անասնահամաճարակային բարեկեցության առումով
1602	Մսից, մսային ենթամթերքներից կամ արյունից պատրաստի կամ պահածոյացված այլ մթերք**	** - անասնահամաճարակային բարեկեցության առումով
1603 00	Լուծամզվածքներ և հյութեր մսից, ձկնից կամ խեցգետնանմաններից, կակղամարմիններից կամ ջրային այլ անողնաշարավորներից	
1604	Պատրաստի կամ պահածոյացված ձուկ. թառափազգիների ձկնկիթ և դրա փոխարինիչներ՝ պատրաստած ձկան ձկնկիթի հատիկներից**	** - անասնահամաճարակային բարեկեցության առումով
1605	Պատրաստի կամ պահածոյացված խեցգետնանմաններ, կակղամարմիններ և ջրային այլ անողնաշարավորներ**	** - անասնահամաճարակային բարեկեցության առումով
1902 20-ից	Մակարոնային արտադրատեսակներ միջուկով՝ ջերմային մշակման ենթարկված կամ չենթարկված կամ այլ եղանակով պատրաստված, ձկան, խեցգետնանմանների, կակղամորթներից կամ ջրային այլ անողնաշարավորների, երշիկների, մսի, մսային ենթամթերքների, արյան կամ 04 խմբի մթերքների կամ այդ մթերքների ցանկացած համադրության պարունակությամբ**	** - անասնահամաճարակային բարեկեցության առումով
1904 20-ից	Հատիկաբույսեր (բացի եգիպտացորենի հատիկից) հատիկի կամ փաթիլների կամ հատիկի տեսքով՝ այլ եղանակով մշակված (բացառությամբ մանր և խոշոր աղացված ալյուրի, ձավարի), նախապես խաշված կամ այլ եղանակով պատրաստված, ձկան, խեցգետնանմանների, կակղամորթներից կամ ջրային այլ անողնաշարավորների, երշիկների, մսի, մսային ենթամթերքների, արյան կամ 04 խմբի մթերքների կամ այդ մթերքների ցանկացած համադրության պարունակությամբ**	** - անասնահամաճարակային բարեկեցության առումով
20-րդ խմբից	Մթերքներ՝ բանջարեղենի, մրգերի, ընկույզների կամ բույսերի այլ մասերի	** - անասնահամաճարակային

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Ապրանքի անվանումը	Ծանոթագրություն
	վերամշակումից ստացվող և դրանց խառնուրդները՝ երշիկների**, մսի**, մսային ենթամթերքների**, արյան**, ձկան** կամ խեցգետնանմանների**, կակղամորթների** կամ ջրային այլ անողնաշարավորների**, կամ 04 խմբի մթերքների ** կամ այդ մթերքների ցանկացած համադրության պարունակությամբ**	բարեկեցության առումով
2102 20-ից	Ոչ ակտիվ խմորասնկեր. այլ մեռած միաբջիջ միկրոօրգանիզմներ, որոնք օգտագործվում են կենդանիներին կերակրելու համար	
2104-ից	Պատրաստի ապուրներ ու արգանակներ և նախապատրաստուկներ (բացառությամբ բանջարեղենային նախապատրաստուկների) դրանք պատրաստելու համար. հոմոգենացված բաղադրամասային պատրաստի սննդամթերք՝ երշիկի**, մսի**, մսային ենթամթերքների**, արյան**, ձկան**, խեցգետնանմանների**, կակղամորթների** կամ այլ անողնաշարավորների**, կամ 04 խմբի մթերքների ** կամ այդ մթերքների ցանկացած համադրության պարունակությամբ	** - անասնահամաճարակային բարեկեցության առումով
2105 00-ից	Պաղպաղակ՝ բացառությամբ պտուղ-հատապտղային հիմքով մշակված պաղպաղակի, մրգային և սննդային սառույցի**	** - անասնահամաճարակային բարեկեցության առումով
2106-ից	Հալած պանիրներ և այլ պատրաստի սննդամթերք, որոնք պարունակում են երշիկ, միս, մսային ենթամթերք, արյուն, ձուկ, խեցգետնանմաններ, կակղամորթներ կամ այլ անողնաշարավորներ կամ 04 խմբի մթերքները կամ այդ մթերքների ցանկացած համադրություն	** - անասնահամաճարակային բարեկեցության առումով
2301	Խոշոր և մանր աղացվածքի այլուր և գրանուկներ (հատիկներ)՝ մսից կամ մսային ենթամթերքից, ձկից կամ խեցգետնանմաններից, կակղամարմիններից կամ ջրային այլ անողնաշարավորներից, որոնք պիտանի չեն սննդի մեջ օգտագործելու համար. ճարպատակուցք	
2302-ից	Հացաբույսերի կամ լրբազգիների հատիկների մաղումից, աղալուց կամ այլ կերպով վերամշակումից ստացված թեփ, մաղուցք, դարման և այլ մնացորդներ՝ չհատիկավորված (չգրանուկացված) կամ հատիկավորված, որոնք օգտագործվում են կենդանիներին կերակրելու համար	
2303-ից	Օսլայի արտադրության թափոններ և համանման թափոններ. բազուկի քուսպ, բազասսա, կամ շաքարեղեգի քուսպ և շաքարի արտադրության այլ թափոններ, տակուցք և գարեջրագործության կամ օղեգործության այլ թափոններ՝	

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Ապրանքի անվանումը	Ծանոթագրություն
	չհատիկավորված կամ հատիկավորված, որոնք օգտագործվում են կենդանիներին կերակրելու համար	
2304 00 000-ից	Կոպտոն և այլ կոշտ թափոններ, որոնք ստացվում են սոյայի յուղի զատման ընթացքում՝ չաղացած կամ աղացած, չհատիկավորված (չգրանուլացված) կամ հատիկավորված, որոնք օգտագործվում են կենդանիներին կերակրելու համար	
2306-ից	Կոպտոն և այլ կոշտ թափոններ, որոնք ստացվում են բուսաճարպերի կամ յուղերի զատման ընթացքում՝ բացի 2304 կամ 2305 ապրանքային դիրքերում ընդգրկված չաղացած կամ աղացած, չհատիկավորված (չգրանուլացված) կամ հատիկավորված թափոններից, որոնք օգտագործվում են կենդանիներին կերակրելու համար	
2308 00	Բուսական ծագում ունեցող մթերք և բուսական թափոններ, բուսական մնացորդներ և կողմնակի մթերք, չհատիկավորված (չգրանուլացված) կամ հատիկավորված, որոնք օգտագործում են կենդանիներին կերակրելու համար, այլ տեղում չնշված կամ չընդգրկված	
2309	Կենդանիներին կերակրելու համար օգտագործվող մթերք	
29-րդ խմբից	Օրգանական քիմիական միացություններ (անասնաբուժության մեջ կիրառելու համար)	
30-րդ խմբից	Դեղագործական արտադրանք (անասնաբուժության մեջ կիրառելու համար)	
3101 00 000 0	Կենդանական կամ բուսական ծագման պարարտանյութեր՝ խառնած կամ չխառնած, քիմիական եղանակով մշակված կամ չմշակված, պարարտանյութեր՝ ստացված բուսական կամ կենդանական ծագման մթերքը խառնելու կամ քիմիական մշակման ենթարկելու միջոցով	
3501-ից	Կազեին, կազեինատներ և կազեինի այլ ածանցյալներ	
3502	Ալբումիններ (սպիտակուցներ) (ներառյալ երկու կամ ավելի շիճուկային սպիտակուցների խտանյութերը, որոնք պարունակում են չոր նյութի հաշվարկով 80.% զանգվ -ից ավելի շիճուկային սպիտակուցներ), ալբումինատներ և ալբումինի այլ ածանցյալներ	
3503 00	Դոնդողանյութ (այդ թվում՝ ուղղանկյուն (այդ թվում՝ քառակուսի) թերթերով, մակերեսային մշակմամբ կամ առանց մշակման, ներկած կամ չներկած) և դոնդողանյութի ածանցյալներ, ձկնասոսիս, կենդանական ծագման այլ սոսիսներ՝	

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Ապրանքի անվանումը	Ծանոթագրություն
	բացի 3501 ապրանքային դիրքում ընդգրկված կազեինի սուսնձից	
3504 00 000 0	Պեպտոններ և դրանց ածանցյալները, սպիտակուցային այլ նյութեր և դրանց ածանցյալները՝ այլ տեղ չնշված կամ չներառված, քրոմապատված կամ չքրոմապատված կաշվի կամ հում կաշվի փոշի	
3507-ից	Ֆերմենտներ (էնզիմ)։ Ֆերմենտային պատրաստուկներ՝ այլ տեղում չնշված կամ չներառված (անասնաբուժության մեջ կիրառման համար)	
3808-ից	Ինսեկտիցիդներ, ռոդենտիցիդներ, ախտահանող ու համանման միջոցներ, որոնք բաժնեծրարված են կաղապարներում կամ փաթեթներով՝ մանրածախ վաճառքի համար կամ ներկայացված են պատրաստի պրեպարատների կամ արտադրատեսակների ձևով, անասնաբուժության մեջ կիրառման համար	
3821 00 000 0-ից	Մշակային միջավայրեր՝ նախատեսված մանրէներ աճեցնելու համար՝ անասնաբուժության մեջ կիրառման համար	
3822 00 000 0-ից	Ախտորոշիչ կամ լաբորատոր ազդանյութեր տակդիրով, պատրաստի ախտորոշիչ կամ լաբորատոր ազդանյութեր տակդիրով կամ առանց տակդիրի՝ բացի 3002 կամ 3006 ապրանքային դիրքում նշված ապրանքներից (անասնաբուժության մեջ կիրառման համար), հավաստագրված չափանմուշային նյութեր (անասնաբուժության մեջ կիրառման համար)	
4101	Խոշոր եղջերավոր անասունների (ներառյալ գոմեշների) կամ ձիազգի կենդանիների (շոգեխոնավ կամ աղադրված, չորացրած, մոխրած, աղջրած կամ այլ կերպ պահածոյացված, բայց չդաբաղած, չմազաղաթացրած կամ հետագա մշակման չենթարկված) չմշակված մորթեր՝ մազածածկույթով կամ առանց մազածածկույթի, կրկնորդված կամ չկրկնորդված	
4102	Ոչխարների չմշակված մորթեր կամ գառների մորթիկներ (թարմ կամ աղադրված, չորացրած, մոխրած, աղջրած կամ այլ կերպ պահածոյացված, բայց չդաբաղած, չմազաղաթացրած կամ հետագա մշակման չենթարկված)՝ բրդյա ծածկույթով կամ առանց բրդյա ծածկույթի, կրկնորդված կամ չկրկնորդված՝ բացի տվյալ խմբի 1գ ծանոթագրությամբ բացառվածներից	
4103	Այլ չմշակված մորթեր (թարմ կամ աղադրված, չորացրած, մոխրած, աղջրած կամ այլ կերպ պահածոյացված, բայց չդաբաղած, չմազաղաթացրած կամ հետագա	

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Ապրանքի անվանումը	Ծանոթագրություն
	մշակման չենթարկած՝ մազաձածկույթով կամ առանց մազաձածկույթի, կրկնորդված կամ չկրկնորդված՝ բացի տվյալ խմբի 1բ կամ 1գ ծանոթագրությամբ բացառվածներից	
4206 00 000 0	Արտադրատեսակներ՝ աղիքներից (բացի շերամի ֆիբրոինից ստացված մանրաթելից), սինյուգայից, պարկերից կամ ջլերից	
4301	Մուշտակամորթ հումք (ներառյալ գլուխները, պոչերը, թաթերը և այլ մասեր կամ կտորտանքը՝ պիտանի մորթուց պատրաստվող արտադրատեսակների արտադրության համար)՝ բացառությամբ 4101, 4102 կամ 4103 ապրանքային դիրքերում նշված չմշակված մորթերի	
5001 00 000 0	Շերամի բոժոժներ, որոնք պիտանի են ետ կծկելու համար	
5002 00 000 0	Հումք-մետաքս (չոլորած)	
5003 00 000 0	Մետաքսե թափոններ (ներառյալ ետ կծկելու համար ոչ պիտանի բոժոժները, բոժոժաթելի թափոններն ու փխրունացրած հումքը)	
5101	Բուրդ՝ չենթարկած սանդերքագզման կամ սանրագզման	
5102	Կենդանիների մազ՝ նուրբ կամ կոշտ, սանդերքագզման կամ սանրագզման չենթարկած	
5103	Կենդանիների բրդի կամ բարակ կամ կոշտ մազի թափոններ՝ ներառյալ մանվածքային թափոնները, բայց բացառելով փխրունացրած հումքը	
9508 10 000 0-ից	Շրջիկ կրկեսների և շրջիկ գազանանոցների կենդանիներ	
9705 00 000 0-ից	Հավաքածուներ և հավաքածուներ կազմելու առարկաներ՝ կենդանաբանության, կենդանիների անատոմիայի և հնէաբանության վերաբերյալ (բացառությամբ թանգարանային պահպանման ցուցանմուշների)	
3923-ից, 3926-ից, 4415-ից, 4416 00 000 0-ից 4421-ից, 7020 00-ից 7309 00-ից	Բոլոր տեսակի կենդանիների փոխադրման, բազմացման, ժամանակավոր գերապահման համար սարքավորումներ և հարմարանքներ, ինչպես նաև կենդանական ծագման հումքի (արտադրանքի) տրանսպորտային փոխադրման համար սարքավորումներ՝ օգտագործված	

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Ապրանքի անվանումը	Ծանոթագրություն
7310-ից, 7326-ից, 7616-ից, 8436 21 000 0-ից 8436 29 000 0-ից 8436 80 910 0-ից 8436 80 990 0-ից 8606 91 800 0-ից 8609 00-ից 8716 39 800-ից		

(1) – սույն խմբում ընդգրկված են նաև ուղտերը

* Սույն ցանկի օգտագործման նպատակներով անհրաժեշտ է առաջնորդվել ինչպես ԱՏԳ ԱԱ ծածկագրով, այնպես էլ ապրանքի անվանմամբ:

** Անասնահամաճարակային բարեկեցության առումով:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մաքսային միության հանձնաժողովի
2010 թվականի հունիսի 18-ի թիվ 317
որոշմամբ

ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

Մաքսային միության մաքսային սահմանին և Մաքսային միության մաքսային տարածքում անասնաբուժական հսկողություն իրականացնելու միասնական կարգի մասին

I Կիրառության ոլորտ

1.1. Ֆաքսային միության մաքսային սահմանին և Մաքսային միության մաքսային տարածքում անասնաբուժական հսկողություն իրականացնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթը (այսուհետ՝ Հիմնադրույթ) մշակված է Եվրասիական տնտեսական համայնքի Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի)՝ պետությունների ղեկավարների մակարդակով ընդունված 2009 թվականի դեկտեմբերի 11-ի որոշման հիման վրա՝ Մաքսային միության անասնաբուժասանիտարական միջոցների վերաբերյալ 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագրի զարգացման նպատակով:

1.2. Սույն Հիմնադրույթի պահանջները կիրառվում են Անասնաբուժական (հսկողության) վերահսկողության ենթակա ապրանքների միասնական ցանկում նշված ապրանքների (այսուհետ՝ հսկողության վերցված ապրանքներ) նկատմամբ:

Սույն Հիմնադրույթով սահմանվում է Մաքսային միության մաքսային սահմանին և մաքսային միության մաքսային տարածքում հսկողության վերցված ապրանքների նկատմամբ Մաքսային միության անդամ պետությունների՝ անասնաբուժության ոլորտում գործունեություն իրականացնող պետական մարմինների և հաստատությունների կողմից (այսուհետ՝ Կողմերի լիազորված

մարմիններ) հսկողության իրականացման կարգը՝ հսկողության վերցված՝ մարդու և կենդանիների առողջության համար վտանգավոր ապրանքների՝ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծումը և տեղափոխումը (փոխադրումը) չթույլատրելու նպատակով:

1.3. Հսկողության վերցված ապրանքների արտադրություն, մշակում և (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների ու անձանց նկատմամբ հսկողության (վերահսկողության) իրականացման կարգն իրականացվում է «Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտների համատեղ ստուգումներ անցկացնելու և ապրանքներից (արտադրանքից) փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթին համապատասխան:

1.4. Սույն Հիմնադրույթի պահանջները ենթակա են պարտադիր կատարման Մաքսային միության անդամ պետությունների գործադիր իշխանության մարմինների (այսուհետ՝ Կողմեր), Կողմերի վարչական տարածքների գործադիր իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ցանկացած կազմակերպատիրավական ձև ունեցող իրավաբանական անձանց, քաղաքացիների, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ կազմակերպություններ և անձինք) կողմից, որոնց գործունեությունը կապված է տրանսպորտի և առաքումների բոլոր տեսակներով հսկողության վերցված ապրանքների արտադրության, վերամշակման, պահպանման, օգտահանման (ուտիլիզացման), ոչնչացման, տեղափոխման (փոխադրման) և իրացման հետ:

II Եզրույթներ և սահմանումներ

2.1. Սույն Համաձայնագրում օգտագործվում են հետ կյալ եզրույթները և սահմանումները՝

2.1.1. անասնաբուժական կանոններ և նորմեր (այսուհետ՝ անասնաբուժական կանոններ)՝ անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) միասնական պահանջներ սահմանող նորմատիվ փաստաթղթեր, ինչպես նաև

կենդանաբանական և հիգիենիկ նորմատիվներ, որոնք չպահպանելը ստեղծում է կենդանիների, այդ թվում՝ մարդկանց և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների առաջացման և տարածման վտանգ,

2.1.2. Միասնական անասնաբուժական պահանջներ՝ հսկողության վերցված ապրանքների նկատմամբ ներկայացվող պահանջներ՝ ուղղված Կողմերի տարածք կենդանիների վարակիչ, այդ թվում՝ մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների հարուցիչների և անասնաբուժասանիտարական առումով վտանգավոր, կենդանական ծագում ունեցող ապրանքների (արտադրանքի) ներմուծումն ու տարածումը չթույլատրելուն,

2.1.3. անասնաբուժական սերտիֆիկատ՝ Կողմի լիազորված մարմնի կողմից հսկողության վերցված՝ տեղափոխման (փոխադրման) ենթակա ապրանքների համար տրվող փաստաթուղթ, որը հավաստում է դրանց անվտանգությունը՝ անասնաբուժասանիտարական առումով և այդ ապրանքների արտադրության վայրերի վարչական տարածքների բարեկեցությունը՝ կենդանիների վարակիչ, այդ թվում՝ մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների առումով,

2.1.4. սահմանային անասնաբուժական հսկիչ կետ (այսուհետ՝ ՍԱՀԿ)՝ լիազորված մարմնի կառուցվածքային ստորաբաժանում, որը Մաքսային միության մաքսային սահմանով անցակետերում և Կողմերի օրենսդրությամբ սահմանված այլ վայրերում իրականացնում է սահմանային անասնաբուժական հսկողություն,

2.1.5. երկիր, որը ներմուծում է (ներմուծող երկիր)՝ հսկողության վերցված ապրանքներ ստացող երկիր,

2.1.6. երկիր, որն արտահանում է (արտահանող երկիր)՝ երկիր, որտեղից հսկողության վերցված ապրանքներն ուղարկվում են ներմուծող երկիր,

2.1.7. ապրանքների տարանցում՝ Մաքսային միության մաքսային տարածքով հսկողության վերցված ապրանքների տեղափոխում (փոխադրում), որոնց ուղարկման և նշանակման կետերը գտնվում են Մաքսային միության մաքսային տարածքից դուրս,

2.1.8. հսկողության վերցված ապրանքների ներմուծման (արտահանման) կամ տարանցման թույլտվություն՝ Կողմի օրենսդրության համաձայն անասնաբուժության ոլորտում լիազորված պաշտոնատար անձի կողմից տրվող փաստաթուղթ, որով սահմանվում են հսկողության վերցված ապրանքների օգտագործման կարգն ու պայմանները՝ ելնելով հսկողության վերցված ապրանքների ներմուծման և տարանցման ժամանակ արտահանող երկրների անասնահամաճարակային վիճակից,

2.1.9. անասնահամաճարակային վիճակ՝ կոնկրետ նշված պահին որոշակի տարածքում առկա անասնաբուժասանիտարական իրադրություն՝ բնորոշվող կենդանիների մոտ հիվանդությունների առկայությամբ, դրանց տարածմամբ ու հիվանդացության մակարդակով,

2.1.10. կարանտինային միջոցառումներ՝ հատուկ և կազմակերպչատնտեսական միջոցների համալիր՝ ուղղված կենդանիների վարակիչ, այդ թվում՝ մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների աղբյուրների տեղայնացմանը և վերացմանը,

2.1.11. անասնաբուժական օգտագործման դեղամիջոցներ (այսուհետ՝ դեղամիջոցներ)՝ կենդանիների հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման և բուժման համար կիրառվող նյութեր, որոնք ստացվել են արյունից, արյան պլազմայից, ինչպես նաև կենդանիների օրգաններից, բույսերից և հանքերից՝ սինթետիկ մեթոդով կամ կենսաբանական տեխնոլոգիաների կիրառմամբ, ինչպես նաև բուսական, կենդանական կամ սինթետիկ ծագման, դեղաբանական ակտիվություն ունեցող նյութեր,

2.1.12. կերեր և կերային հավելումներ՝ բուսական, կենդանական, հանքային, քիմիական և մանրէաբանական ծագման արտադրանք՝ ներառյալ բոլոր տեսակի կենդանիների կերակրման համար կամ որպես կերերի արտադրման բաղադրիչներ օգտագործվող խառնուրդները:

2.2. Սույն Հիմնադրույթում հատուկ չսահմանված եզրույթները կիրառվում են այլ միջազգային պայմանագրերով, այդ թվում՝ Մաքսային միության և Եվրասիական

տնտեսական համայնքի շրջանակներում կնքված պայմանագրերով սահմանված իմաստներով:

III Ընդհանուր դրույթներ

3.1. ՍԱՀԿ պաշտոնատար անձինք, լիազորություններն իրականացնելիս, փոխգործակցում են գործադիր իշխանության այլ մարմինների՝ անցակետերում հսկողություն իրականացնելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձանց, անցակետերի ադմինիստրացիայի (Մաքսային միության մաքսային սահմանով անցակետերում հսկողության մարմինների փոխգործակցության տեխնոլոգիական սխեմաների շրջանակներում), նավատերերի, գործակալ հանդիսացող ընկերությունների և ծառայությունների, այլ հաստատությունների և կազմակերպությունների, ինչպես նաև սահմանակից պետությունների անցակետերի անասնաբուժական մասնագետների հետ:

3.2. Պետական անասնաբուժական տեսուչները, իրենց նց իրավասության սահմաններում, իրավունք ունեն անարգել այցելելու հսկողության վերցված ապրանքների արտադրության, պահպանման և վերամշակման օբյեկտներ:

3.3. Ծառայողական պարտականություններն իրականացնելիս՝ ՍԱՀԿ պաշտոնատար անձինք իրենց մոտ պետք է ունենան ծառայողական վկայական և կրեն Կողմերի օրենսդրությամբ սահմանված նմուշի համազգեստ:

3.4. Մաքսային միության մաքսային սահմանով հսկողության վերցված ապրանքների տեղափոխումը (փոխադրումը) թույլատրվում է այդ նպատակների համար նախատեսված անցակետերում կամ Կողմերի օրենսդրությամբ սահմանված այլ վայրերում, որոնք, Կողմերի օրենսդրությանը համապատասխան, սարքավորվում և հազեցվում են անասնաբուժական հսկողության միջոցներով:

3.5. Մաքսային միության մաքսային սահմանով ռազմական տրանսպորտային միջոցների անցակետերում Կողմի Պաշտպանության նախարարության կողմից ռազմածովային բազաներում, ռազմական օդանավակայաններում և այլ վայրերում ստեղծվում են անասնաբուժական հսկողության կետեր:

3.6. ՍԱՀԿ պաշտոնատար անձինք, հսկողության վերցված ապրանքներ ներկրելիս, Մաքսային միության մաքսային սահմանով անցակետերում իրականացնում են անասնաբուժական հսկողություն (վերահսկողություն)՝ նշանակման Կողմից անկախ:

3.7. Հսկողության վերցված ապրանքները ներմուծման, տարանցման, ինչպես նաև Մաքսային միության ներսում մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք տեղափոխման դեպքում տրանսպորտային փոխադրման ամբողջ ընթացքում պետք է ուղեկցվեն Կողմերի լիազորված մարմինների պաշտոնատար անձանց և արտահանող երկրների իրավասու մարմինների կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատներով:

Հսկողության վերցված ապրանքները կարող են տեղափոխվել մեկ Կողմի տարածքի սահմաններում տվյալ Կողմի օրենսդրությամբ նախատեսված կարգով:

3.8. Հսկողության վերցված ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու դեպքում անասնաբուժական սերտիֆիկատները պետք է ձևակերպված լինեն ռուսերենով և արտահանող երկրի լեզվով:

3.9. Կողմերի լիազորված մարմիններն իրականացնում են Կողմերի տարածք ներմուծվող՝ հսկողության վերցված ապրանքների օգտագործման (պահպանում, վերամշակում, կենդանիների կերի մեջ օգտագործում, վերադարձ, ուտիլիզացում, ոչնչացում և այլն) պայմանների սահմանումը և փորձանմուշներ (նմուշներ) վերցնելը:

3.10. Միասնական անասնաբուժական պահանջներին համապատասխանության անասնաբուժական սերտիֆիկատների ձևակերպման համար անասնաբուժական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելիս՝ ընդունվում են լաբորատոր փորձարկումների (հետազոտությունների) արձանագրություններ, որոնք անցկացվել են Կողմերի հավատարմագրման ազգային համակարգերում հավատարմագրված լաբորատորիաներում և ներառվել Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեեստրում՝ «Մաքսային միության մաքսային տարածքում համապատասխանության պարտադիր գնահատման

(հաստատման) ենթակա արտադրանքի շրջանառության մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագրին համապատասխան::

3.11. Անասնաբուժական սերտիֆիկատների, այլ անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի և անասնաբուժական հսկողության բոլոր տեսակների անցկացման ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է Կողմերի օրենսդրությանը համապատասխան:

3.12. Գործունեության սահմանված ոլորտում միջազգային փոխադրումներ իրականացնելիս, ինչպես նաև Մաքսային միության մաքսային տարածքով հսկողության վերցված ապրանքներ տեղափոխելիս (փոխադրելիս)՝ Միասնական անասնաբուժական պահանջների խախտում կատարելու մեջ մեղավոր անձինք պատասխանատվություն են կրում այն Կողմի օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում հայտնաբերվել է խախտումը:

Հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվում է Ակտ՝ համաձայն թիվ 1 հավելվածի ձևի:

3.13. Մաքսային միության մաքսային տարածքում անասնաբուժության մեջ կիրառման համար դեղամիջոցների և կերային հավելումների ներմուծումը, փոխադրումն ու օգտագործումն իրականացվում են Կողմերի լիազորված մարմինների կողմից՝ դրանց գրանցման պայմանով:

Կողմերը փոխադարձաբար ճանաչում են անասնաբուժության մեջ կիրառվող դեղամիջոցների և կերային հավելումների գրանցման արդյունքները:

Դեղամիջոցների, ինչպես նաև քիմիական և մանրէաբանական սինթետիկ կերային հավելումների ներմուծումը, փոխադրումն իրականացվում են առանց անասնաբուժական սերտիֆիկատի՝ պատրաստող ձեռնարկության կողմից տրվող՝ դրանց որակը և անվտանգությունը հաստատող փաստաթղթի ուղեկցությամբ:

3.14. Ներմուծելիս, արտահանելիս և տարանցելիս՝ հսկողության վերցված ապրանքների նկատմամբ կիրառվում են հսկողության հետևյալ տեսակները՝ փաստաթղթային, ֆիզիկական, լաբորատոր:

3.14.1. Փաստաթղթային հսկողության դեպքում ստուգվում են՝

- հսկողության վերցված ապրանքների անվտանգությունը հաստատող փաստաթղթերը,
- հսկողության վերցված ապրանքների ներմուծման (արտահանման) կամ տարանցման թույլտվությունների առկայությունը,
- տրված փաստաթղթերի բովանդակության՝ միասնական անասնաբուժական պահանջներին համապատասխանությունը:

3.14.2. Ֆիզիկական հսկողությունն իր մեջ ներառում է՝

- հսկողության վերցված ապրանքների զննում և կենդանիների տեսազննում,
- ներկայացված փաստաթղթերում նշված տվյալներին՝ հսկողության վերցված ապրանքների համապատասխանության ստուգում՝ ուղեկցող փաստաթղթերում չնշված հսկողության վերցված ապրանքների առկայությունը և անհամատեղելի ապրանքների համատեղ տեղափոխումը բացառելու նպատակով,
- տրանսպորտային միջոցի՝ հսկողության վերցված ապրանքների փոխադրման համար անհրաժեշտ սահմանված անասնաբուժասանիտարական պահանջներին համապատասխանության հսկողություն,
- տեղափոխման (փոխադրման) պայմանների և ռեժիմի հսկողություն,
- սահմանված պահանջներին փաթեթվածքի և դրոշմավորման համապատասխանության հսկողություն:

Մաքսային միության տարածքի սահմաններում կենդանիների ներմուծման, արտահանման, տարանցման և տեղափոխման (փոխադրման) ժամանակ ջրելատեղի և կերակրման կետերում դրանց յուրաքանչյուր խմբաքանակ ենթակա է տեսազննման:

Մաքսային միության մաքսային սահմանով անցակետում թույլատրվում է տեղափոխվող, հսկողության վերցված ապրանքների հասանելի մասի զննում:

Զննության արդյունքներով կազմվում է համապատասխան ակտ՝ համաձայն թիվ 2 հավելվածի ձևի:

3.14.3. Լաբորատոր հսկողությունն իրականացվում է ուսումնասիրությունների անցկացման միջոցով այդ նպատակներով հավատարմագրված լաբորատորիաներում՝ տեղափոխվող հսկողության վերցված ապրանքների զննման ժամանակ զգայորոշման (օրգանոլեպտիկ) տեսանելի փոփոխությունների բացահայտման և կենդանիների վարակիչ հիվանդությունների բացառման դեպքերում:

Լաբորատոր հետազոտությունների համար փորձանմուշների (նմուշների) վերցնումն իրականացվում է «Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտների համատեղ ստուգումներ անցկացնելու և ապրանքներից (արտադրանքից) փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթին համապատասխան:

3.15. ՍԱՀԿ պաշտոնատար անձի կողմից նշված տեսակների հսկողության իրականացման արդյունքներով հսկողության վերցված ապրանքների նկատմամբ ընդունվում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

- բացթողման մասին,
- երթևեկության դադարեցման մասին,
- ներմուծումն արգելելու մասին,
- վերադարձի մասին:

Հսկողության վերցված ապրանքի նկատմամբ ընդունված որոշումը ՍԱՀԿ պաշտոնատար անձի կողմից ձևակերպվում է անասնաբուժական և ապրանքաուղեկից փաստաթղթերի վրա համաձայն թիվ 3 հավելվածի ձևի՝ համապատասխան դրոշմակնիքներ դնելու միջոցով՝ Մաքսային միության մաքսային տարածքով անցակետերում հսկիչ մարմինների փոխգործակցության տեխնոլոգիական սխեմային համապատասխան:

3.16. Հսկողության վերցված ապրանքների ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք թույլատրվում է «Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտների համատեղ ստուգումներ անցկացնելու և

ապրանքներից (արտադրանքից) փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթով նախատեսված կարգով Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող հսկողության վերցված ապրանքների արտադրությունը, մշակումն ու (կամ) պահպանումն իրականացնող կազմակերպությունների և անձանց ռեեստրում ներառված արտահանող ձեռնարկություններից:

3.17. Երրորդ երկրների սահմանակից տարածք գյուղատնտեսական կենդանիների չթույլատրված անցման դեպքերում լիազորված մարմինները ձեռնարկում են կենդանիներին վերադարձնելու միջոցներ կամ այլ միջոցներ՝ պահպանելով Միասնական անասնաբուժական պահանջները:

3.18. Բեռն ումից առաջ (բեռնաթափումից հետո), կախված հսկողության վերցված ապրանքի տեսակից և տարածքի անասնահամաճարակային վիճակից, տրանսպորտը (երկաթուղային վագոն, սառնավագոնային սեկցիա, կոնտեյներ և այլն) ուղարկվում է անասնաբուժասանիտարական մշակման՝ տրամադրելով փաստաթուղթ՝ համաձայն թիվ 4 հավելվածի ձևի :

3.19. Կողմերի՝ պետական անասնաբուժական վերահսկողություն իրականացնող լիազորված մարմնի պաշտոնատար անձանց գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել այն Կողմի օրենսդրությամբ սահմանված կարգով, որի տարածքում կատարվել են գործողությունները (անգործությունը):

3.20. Լիազորված մարմինների պաշտոնատար անձանց որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով:

IV Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններում հսկողության վերցված ապրանքներ տեղափոխելիս (փոխադրելիս) անասնաբուժական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգ

4.1. Մաքսային միության սահմաններում մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք տեղափոխելու (փոխադրելու) դեպքում հսկողության վերցված ապրանքները տեղափոխման (փոխադրման) ամբողջ ընթացքում պետք է ուղեկցվեն

Կողմերի լիազորված մարմինների պաշտոնատար անձանց կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատներով:

Հսկողության վերցված ապրանքները մեկ Կողմի տարածքի սահմաններում կարող են տեղափոխվել տվյալ Կողմի օրենսդրությամբ նախատեսված կարգով:

4.2. Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններում տրանսպորտի բոլոր տեսակներով հսկողության վերցված ապրանքների տեղափոխման (փոխադրման) ընթացքում անասնաբուժական հսկողությունն իրականացվում է Կողմերի լիազորված մարմինների կողմից՝ դրանց արտադրման և բեռնման ժամանակ:

Հսկողության վերցված ապրանքների բեռնումն առանց անասնաբուժական հսկողության իրականացման չի թույլատրվում:

4.3. Կենդանիների նկատմամբ անասնաբուժական հսկողությունն իրականացվում է դրանց բեռնման ժամանակ և դրանց նշանակման վայրում կենդանիներին ուղարկող տնտեսություններում և ստացող տնտեսություններում կարանտինային միջոցառումների պարտադիր անցկացմամբ:

4.4. Անասնաբուժական սերտիֆիկատների ձևակերպումն իրականացվում է հսկողության վերցված ապրանքների զննման (տեսազննման) արդյունքներով բեռնման և տրանսպորտային միջոցի անասնաբուժասանիտարական վիճակի գնահատման ժամանակ՝ հսկողության վերցված ապրանքի ծագման տարածքի անասնահամաճարակային բարեկեցության և Միասնական՝ հսկողության վերցված ապրանքի ծագման տարածքի անասնահամաճարակային բարեկեցության և Միասնական անասնաբուժական պահանջներին դրա համապատասխանության պայմանով:

Մաքսային միության մաքսային տարածքով հսկողության վերցված ապրանքների տեղափոխման (փոխադրման) ժամանակ լիազորված մարմինների թույլտվությունը չի պահանջվում:

4.5. Կողմերից մեկի լիազորված մարմնի կողմից տրված՝ ապրանքների անվտանգությունը հաստատող անասնաբուժական սերտիֆիկատների

վերաձևակերպում և այդ նպատակով Մաքսային միության մաքսային տարածքում արտադրված, (աճեցված) հսկողության վերցված ապրանքների կրկնակի լաբորատոր հետազոտությունների (փորձարկումների) կատարում չի իրականացվում:

4.6. Մաքսային միության մաքսային տարածքում արտադրված, հսկողության վերցված ապրանքի խմբաքանակի՝ նշանակման վայր ժամանելիս ավելի փոքր մասերի մասնատման դեպքում Կողմի լիազորված մարմինը նոր ստացողների համար ձևակերպում է բեռնման վայրում լիազորված մարմնի կողմից տրամադրված անասնաբուժական սերտիֆիկատների պատճենները, որոնցում (թերթի դարձերեսում) ներառվում են հետևյալ տվյալները՝ հսկողության վերցված ապրանքի և նոր տրանսպորտային միջոցի համապատասխանությունը անասնաբուժասանիտարական պահանջներին, տրանսպորտային միջոցի համարը, դրանում հսկողության վերցված վերաբեռնված ապրանքների քանակը, բեռն ստացողի անվանումը և գտնվելու վայրը, վերաբեռնման ամսաթիվը: Այդ տեղեկությունները վավերացվում են լիազորված մարմնի պաշտոնատար անձի ստորագրությամբ և կնիքով:

Անասնաբուժական սերտիֆիկատի բնօրինակը պահվում է խմբաքանակի մասնատումն անցկացրած կազմակերպությունում:

Միևնույն ստացողին ուղարկվող խմբաքանակի մասնատման դեպքում անասնաբուժական սերտիֆիկատի բնօրինակն ուղարկվում է առաջին կամ վերջին տրանսպորտային միջոցով:

Այդպիսի գործողությունների մասին տեղեկությունները ներառվում են Մաքսային միության արտաքին և փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում:

**V Մաքսային միության մաքսային տարածքից հսկողության վերցված
ապրանքներ արտահանելիս անասնաբուժական հսկողության
(վերահսկողության) իրականացման կարգ**

5.1. Մաքսային միության մաքսային տարածքից հսկողության վերցված ապրանքների արտահանման թույլտվության տրամադրումը և անասնաբուժական սերտիֆիկատների ձևակերպումն իրականացվում է լիազորված մարմնի կողմից՝ համապատասխան Կողմի օրենսդրության համաձայն:

5.2. Արտահանողը պարտավոր է հետևել ներկրող երկրի անասնաբուժական օրենսդրության պահանջներին:

**VI Մաքսային միության մաքսային տարածք հսկողության վերցված
ապրանքներ ներմուծելիս անասնաբուժական հսկողության (վերահսկողության)
իրականացման կարգ**

6.1. Հսկողության վերցված ապրանքների ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք իրականացվում է այն Կողմի կողմից տրված ներմուծման թույլտվության առկայության դեպքում, որի տարածք ներմուծվում է հսկողության վերցված ապրանքը: Նշված թույլտվության գործողության ժամկետը ժամկետը կազմում է օրացուցային տարի՝ ներմուծման թույլտվության մեջ սահմանված ծավալներով:

6.2. Թույլտվությունների տրամադրումն իրականացվում է՝ հաշվի առնելով հսկողության վերցված ապրանքների արտադրման (պահպանման) վայրում անասնահամաճարակային իրավիճակը, ինչպես նաև Միասնական ռեեստրում ձեռնարկության կամ անձի առկայության պայմանով:

6.3. Հսկողության վերցված ապրանքների յուրաքանչյուր խմբաքանակ ներմուծվում է Մաքսային միության մաքսային տարածք սույն Հիմնադրույթի 6.1 ենթակետում նշված թույլտվության և (կամ) հսկողության վերցված ապրանքն ուղարկող երկրի իրավասու մարմնի կողմից տրամադրված անասնաբուժական սերտիֆիկատի առկայության դեպքում:

6.4. Արտահանող երկրի անասնաբուժական սերտիֆիկատով ուղեկցվող, հսկողության վերցված ապրանքների խմբաքանակի՝ մի քանի ստացողների ուղարկվող խմբաքանակների մասնատման դեպքում ապրանքի վերաբեռնման երկրի լիազորված կամ իրավասու մարմնի կողմից ձևակերպվում են արտահանող պետության անասնաբուժական սերտիֆիկատի պատճենները, որոնցում (թերթի դարձերեսում) ներառվում են հետևյալ տվյալները՝ բեռի և նոր տրանսպորտային միջոցի համապատասխանությունը անասնաբուժասանիտարական պահանջներին, տրանսպորտային միջոցի համարը, դրանում հսկողության վերցված, վերաբեռնված ապրանքի քանակը, ապրանքն ստացողի անվանումը և հասցեն, վերաբեռնման ամսաթիվը: Այդ տեղեկությունները վավերացվում են անասնաբուժական սերտիֆիկատների պատճենները ձևակերպած, լիազորված կամ իրավասու մարմնի կնիքով և ստորագրությամբ:

Նշված պատճենը կցվում է մյուս ապրանքաուղեկից փաստաթղթերին:

Անասնաբուժական սերտիֆիկատի բնօրինակը պահվում է խմբաքանակի մասնատումն անցկացրած կազմակերպությունում:

6.5. Փաստաթղթային հսկողության ավարտից հետո անցկացվում է հսկողության վերցված ապրանքների զննում: Անցակետով տեղափոխվող, հսկողության վերցված ապրանքների զննումն իրականացվում է՝ ոչ ավելի քան զննման ենթակա մսի կամ ձկան՝ հսկողության վերցված ապրանքի (արտադրանքի) տասը խմբաքանակից մեկ խմբաքանակը, և հսկողության վերցված այլ ապրանքների քսան խմբաքանակից մեկ խմբաքանակը՝ ըստ առանձին վերցված երկրի, իսկ կենդանիների ներմուծման դեպքում իրականացվում է յուրաքանչյուր խմբաքանակի տեսազննում: Ընդ որում, կենդանիների նույնականացման համարները (դաջվածքներ, չիպեր, ականջապիտակներ, դրոշմներ և այլն) համեմատվում են անասնաբուժական սերտիֆիկատում նշվածների հետ:

Հսկողության վերցված ապրանքի զննումն իրականացնելու գործընթացում անասնաբուժասանիտարական պահանջների խախտումների հայտնաբերման դեպքում հետագայում անցկացվում է պատրաստող ձեռնարկության հսկողության

վերցված ապրանքներով բեռնված հինգ անընդմեջ տրանսպորտային միավորների զննում:

6.7. Տեղափոխվող (փոխադրվող) հսկողության վերցված ապրանքների զննման ընթացքում տեսանելի փոփոխությունների հայտնաբերման դեպքում սույն Հիմնադրույթի 3.14.3 ենթակետին համապատասխան, իրականացվում է լաբորատոր հսկողություն:

6.8. Սույն Հիմնադրույթի 3.15 ենթակետի համաձայն՝ անասնաբուժական հսկողության արդյունքներով ընդունվում է համապատասխան որոշում, և ուղեկցող փաստաթղթերի վրա դրվում են դրոշմակնիքներ՝ համաձայն թիվ 3 հավելվածի ձևի՝ «Ներմուծումը թույլատրված է», «Ներկայացնել անասնաբուժական վերահսկողության», «Ներմուծումն արգելված է» կամ «Ապրանքի վերադարձ», որից հետո ՍԱՀԿ պաշտոնատար անձը վավերացնում է դրանք կնիքով և ստորագրությամբ՝ նշելով իր ազգանունը և անվան սկզբնատառերը:

Ապրանքի վերադարձի մասին որոշում ընդունելու դեպքում փաստաթղթերը ձևակերպվում են՝ համաձայն թիվ 5 և թիվ 6 հավելվածների ձևերի:

6.9. Բոլոր անհրաժեշտ տվյալները գրանցվում են անցակետով հսկողության վերցված ապրանքների տեղափոխման գրանցամատյանում՝ համաձայն թիվ 7 հավելվածի ձևի, և մուտքագրվում էլեկտրոնային հաշվառման համակարգ (դրա ներդրմանը զուգընթաց):

6.10. Անցակետերում հսկողության ավարտից հետո հսկողության վերցված ապրանքներն ուղարկվում են նշանակման (առաքման) վայրեր, որտեղ անցկացվում է անասնաբուժական հսկողություն՝ հսկողության վերցված ապրանքի ամբողջական զննմամբ: Անասնաբուժական հսկողության ավարտից հետո արտահանող երկրի անասնաբուժական սերտիֆիկատը վերաձևակերպվում է Մաքսային միության անասնաբուժական սերտիֆիկատի, և ուղեկցող փաստաթղթերի վրա դրվում են դրոշմակնիքներ՝ համաձայն թիվ 3 հավելվածի ձևի՝ «Բացթողումը թույլատրված է» կամ «Բացթողումն արգելված է»:

6.11. Մաքսային միու թյան մաքսային տարածք հսկողության վերցված ապրանքներ ներմուծելիս՝ ներմուծողը պարտավոր է հետևել Մաքսային միության անասնաբուժական օրենսդրության պահանջներին:

6.12. Ծովային անցակետերում հսկողության վերցված ապրանքների ձևակերպման առանձնահատկությունները:

6.12.1. Հս կողության վերցված ապրանքների նավամբարային խմբաքանակի ստացման դեպքում:

ՍԱՀԿ պաշտոնատար անձը անասնաբուժական սերտիֆիկատը ձևակերպում է մեկ ստացողի հասցեին ստացված հսկողության վերցված ապրանքների նավամբարային ամբողջ խմբաքանակի համար:

Ջրային տրանսպորտի միջոցից բեռնաթափման ընթացքում իրականացվում է հսկողության վերցված ապրանքի զննում, հսկվում է բեռնման հանձնված տրանսպորտի (ավտոտրանսպորտ, վագոններ և այլն) անասնաբուժասանիտարական վիճակը:

Ապրանքի նավամբարային խմբաքանակի բեռնաթափումը թույլատրվում է ՍԱՀԿ պաշտոնատար անձի հսկողության ներքո նավամատույցի, էստակադի, բեռնման–բեռնաթափման գույքի ախտահանումից հետո:

6.12.2. Հսկողության վերցված ապրանքների՝ կոնտեյներներով ստացման դեպքում:

ՍԱՀԿ պաշտոնատար անձը պարտավոր է ջրային տրանսպորտային միջոցի նավապետից ստանալ հետևյալ փաստաթղթերը՝

- օվկիանոսային կոնոսամենտի պատճենը,

- ֆիդերային կոնոսամենտը (անասնաբուժական սերտիֆիկատի համարի, ապրանքն ստացողի, ապրանքն ուղարկողի, ապրանքի անվանման, դրա քանակի և քաշի նշմամբ),

- ընդհանուր հայտարարագիրը:

6.12.3. Ծովային տրանսպորտով հսկողության ն վերցված ապրանքների

ներմուծման դեպքում անասնաբուժական հսկողությունն իրականացվում է արտահանող երկրների անասնաբուժական ծառայությունների կողմից, համաձայն թիվ 8 հավելվածի ձևի, Մաքսային միության տարածքում իրենց գործունեությունն իրականացնող ստացողներին ուղղված կոնկրետ խմբաքանակների փաստացի ուղարկման մասին էլեկտրոնային տարբերակով նախնական ծանուցումները ներկայացնելու պայմանով:

VII Մաքսային միության մաքսային տարածքով հսկողության վերցված ապրանքների տարանցելիս անասնաբուժական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգ

7.1. Կենդանիների և կենդանական ծագման հումքի տարանցումը մաքսային միության մաքսային սահմանով իրականացվում է այն Կողմի կողմից տրված տարանցման թույլտվությամբ, որի անցակետով նախատեսվում է Մաքսային միության մաքսային սահմանի հատումը ներմուծման ժամանակ: Թույլտվության մեջ նշվում է երթուղին:

Հսկողության վերցված այլ տեսակի ապրանքների տարանցումն իրականացվում է առանց Կողմերի լիազորված մարմինների թույլտվության:

Կողմի լիազորված մարմնի կողմից Մաքսային միության մաքսային տարածքով հսկողության վերցված ապրանքների տարանցման թույլտվության ստացումը մտնում է հսկողության վերցված ապրանքները տիրապետողի պարտականությունների մեջ:

7.2. Անցակետերում հսկողության վերցված ապրանքների անասնաբուժական հսկողությունն իրականացվում է ապրանքատրանսպորտային բեռնագրի և (կամ) անասնաբուժական սերտիֆիկատը ներկայացնելուց հետո:

7.3. Փաստաթղթային հսկողությունն ավարտելուց հետո իրականացվում է կենդանիների անասնաբուժական տեսազննում, ընդ որում՝ կենդանիների նույնականացման համարները (դաջվածքներ, չիպեր, ականջապիտակներ, դրոշմներ և այլն) համեմատվում են անասնաբուժական սերտիֆիկատում նշված

համարների հետ, ստուգվում են փոխադրման պայմանները, կենդանիների վիճակը և դրանց հետագա տեղափոխման հնարավորությունը:

Մաքսային միության մաքսային տարածքով հսկողության վերցված այլ ապրանքների տարանցումն իրականացվում է առանց զննման:

Հսկողության վերցված ապրանքների (բացառությամբ կենդանիների) զննումը տարանցման ժամանակ անցկացվում է միայն անցակետում հսկողության պետական մարմինների որոշմամբ կամ հայտարարվածին՝ հսկողության վերցված ապրանքի անհամապատասխանության վերաբերյալ տեղեկության առկայության դեպքում:

7.4. Հսկողության արդյունքներով ՍԱՀԿ պաշտոնատար անձն ընդունում է որոշում և, Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելիս, ապրանքաուղեկից փաստաթղթերի և անասնաբուժական սերտիֆիկատի վրա, համաձայն թիվ 3 հավելվածի ձևի, դնում է դրոշմակնիք՝ «Տարանցումը թույլատրված է» կամ «Տարանցումն արգելված է», իսկ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանման կետում՝ «Արտահանումը թույլատրված է» դրոշմակնիք, որից հետո այն վավերացնում է կնիքով և ստորագրությամբ՝ նշելով իր ազգանունը և անվան սկզբնատառերը:

7.5. Բոլոր անհրաժեշտ տվյալները գրանցվում են տարանցումային փոխադրումների գրանցամատյանում՝ համաձայն թիվ 9 հավելվածի ձևի, և մուտքագրվում էլեկտրոնային հաշվառման համակարգ (դրա ներդրմանը զուգընթաց):

7.6. Մաքսային միության մաքսային տարածքով տարանցման թույլտվություն ստացած, հսկողության վերցված ապրանքները տիրապետողը պարտավոր է հետևել Մաքսային միության անասնաբուժական օրենսդրության պահանջներին:

7.7. Երրորդ պետություններով (Մաքսային միության անդամ պետությունների սահմաններից դուրս) տարանցման թույլտվության ստացումը հսկողության վերցված ապրանքը տիրապետողի կողմից իրականացվում է նախապես:

**VIII Պետական սեփականություն դարձրած հսկողության վերցված
ապրանքների նկատմամբ անասնաբուժական հսկողության (վերահսկողության)
իրականացման կարգ**

8.1. Պետական սեփականություն դա ընթացող հսկողության վերցված բոլոր ապրանքները պարտադիր կարգով ենթակա են անասնաբուժական հսկողության:

8.2. Սույն Հիմնադրույթի 8.1 ենթակետում նշված հսկողության վերցված ապրանքների հետագա օգտագործման հնարավորության մասին որոշումն ընդունվում է Կողմի օրենսդրության համաձայն անասնաբուժության ոլորտում լիազորված անձի կողմից՝ հսկողության վերցված ապրանքների արգելապահումը և (կամ) առգրավումն անցկացրած Կողմի պետական մարմնի գրավոր դիմումով:

**IX Միասնական անասնաբուժական պահանջներին
անհամապատասխանության հայտնաբերման պատճառով տեղաշարժը
ժամանակավորապես դադարեցված՝ հսկողության վերցված ապրանքների
նկատմամբ անասնաբուժական հսկողության (վերահսկողության)
իրականացման կարգ**

9.1. Հսկողության վերցված ապրանքի տեղաշարժը դադարեցրած Կողմի լիազորված մարմնի պաշտոնատար անձը, ապրանքի հետագա տեղաշարժի (վերադարձի) վերաբերյալ որոշում չկայացնելու դեպքում, պարտավոր է 24 ժամվա ընթացքում դրա մասին տեղեկացնել Կողմի օրենսդրությանը համապատասխան՝ անասնաբուժության ոլորտում լիազորված պաշտոնատար անձին՝ նշելով հսկողության վերցված ապրանքը տիրապետողին, նշանակման վայրը, արտահանող երկիրը, անասնաբուժական սերտիֆիկատի (կամ ապրանքի անվտանգությունը հաստատող այլ փաստաթղթի) համարը, տրանսպորտային միջոցի տեսակը և դրա գրանցման համարը, չվերթը, հսկողության վերցված ապրանքի տեղաշարժի դադարեցման պատճառները:

Ընդ որում, համաձայն թիվ 5 հավելվածի ձևի, ձևակերպվում է հսկողության վերցված ապրանքների փոխադրման ժամանակ անասնաբուժասանիտարական

պահանջների խախտման մասին ակտը, որը հանձնվում է ապրանքը տիրապետողին (բեռնառաքողին), Կողմի պետական հսկողության այլ մարմինների: Տեղաշարժը դադարեցված, հսկողության վերցված ապրանքների վերաբերյալ տեղեկությունը, համաձայն թիվ 10 հավելվածի ձևի, մուտքագրվում է գրանցամատյանում:

Հսկողության վերցված ապրանքների հետագա տեղափոխման մասին որոշումն ընդունվում է Կողմի օրենսդրությանը համապատասխան անասնաբուժության ոլորտում լիազորված պաշտոնատար անձի կողմից՝ 72 ժամվա ընթացքում:

9.2. Կողմի ազգային օրենսդրության համապատասխան անասնաբուժության ոլորտում լիազորված պաշտոնատար անձի՝ դադարեցված, հսկողության վերցված ապրանքների հետագա տեղափոխման (փոխադրման) մասին որոշումն ստանալուց հետո, նման ապրանքների նկատմամբ բոլոր գործողությունները պետք է կատարվեն Կողմի լիազորված մարմնի պաշտոնատար անձանց ներկայությամբ:

9.3. Հսկողության վերցված այն ապրանքը, որը տիրապետողը չի կարող հաստատել դրա ծագումը՝ անասնաբուժասանիտարական առումով անվտանգությունը հավաստող փաստաթղթերով, ենթակա է ուտիլիզացման (վերացման)՝ առանց նման ապրանքը տիրապետողի հաշվին փորձաքննություն անցկացնելու կամ վերադարձվում է բեռն ուղարկողին (արտահանողին):

9.4. Ներմուծումն արգելված, հսկողության վերցված ապրանքները ենթակա են արտահանման՝ Կողմերի օրենսդրությամբ սահմանված ժամկետներում: Արտահանումն իրականացվում է հսկողության վերցված ապրանքները տիրապետողի կողմից՝ իր հաշվին և Մաքսային միության մաքսային օրենսդրության պահպանմամբ:

9.5. Եթե անհնար է Միասնական անասնաբուժական պահանջներին չհամապատասխանող, հսկողության վերցված ապրանքների՝ սահմանված ժամկետում Մաքսային միության մաքսային սահմաններից արտահանումն այն անցակետով, որով իրականացվել է հսկողության վերցված ապրանքի տեղափոխումը Մաքսային միության մաքսային տարածք, ապա այդպիսի

ապրանքները, Կողմերի օրենսդրությանը համապատասխան, ուտիլիզացվում կամ ոչնչացվում են:

X Ֆիզիկական անձանց կողմից Մաքսային միության մաքսային տարածք ձեռքի ծանրոցում և ուղեբեռում, ինչպես նաև փոստային առաքմամբ հսկողության վերցված ապրանքների ներմուծման ժամանակ անասնաբուժական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգ

10.1. Մաքսային միության մաքսային տարածքը կենդանիների վարակիչ, այդ թվում՝ մարդու և կենդանիների համար ընդհանուր, հիվանդությունների հարուցիչների ներմուծումից պաշտպանելու և անասնաբուժասանիտարական առումով վտանգավոր արտադրանքի շրջանառությունն արգելելու նպատակով Կողմերի լիազորված մարմինները Մաքսային միության մաքսային սահմանի անցակետերում՝ ներառյալ միջազգային փոստային փոխանակման հաստատությունները (վայրերը), կազմակերպում են երրորդ երկրներից առանց ապրանքն ուղարկող երկրի թույլտվության և անասնաբուժական սերտիֆիկատի ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար ձեռքի ծանրոցում, ուղեբեռում և փոստային առաքումներում հսկողության վերցված ապրանքների ներմուծումն արգելելու աշխատանքը, բացառությամբ մեկ ֆիզիկական անձի հաշվարկով մինչև 5 կիլոգրամ՝ ներառյալ գործ արանային փաթեթավորմամբ կենդանական ծագման պատրաստի արտադրանքի ներմուծումը՝ նշված ապրանքն արտադրող երկրի և արտահանման երկրի անասնահամաճարակային տեսանկյունից բարեկեցության պայմանով:

10.2. Ուղարկող երկիր վերադարձնելու անհնարինության դեպքում հսկողության վերցված ապրանքների ուտիլիզացումն (ոչնչացումը) իրականացվում է Կողմերի ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով:

XI Եզրափակիչ և անցումային դրույթներ

11.1. Սույն Հիմնադրույթում փոփոխությունների և լրացումների կատարումն իրականացվում է Մաքսային միության հանձնաժողովի որոշման հիման վրա:

11.2. Կողմերի լիազորված մարմինների տեխնիկական պատրաստվածությանը համապատասխան՝ հսկողության վերցված ապրանքների անասնաբուժական սերտիֆիկատների ձևակերպումը (վերաձևակերպումը) և տրամադրումն իրականացվում են միասնական էլեկտրոնային համակարգի կիրառմամբ:

Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմին

«__» _____ 20__ թ.

Հասցե _____

հեռախոսահամար _____

Էլ.փոստի հասցե _____

Ակտ թիվ

**պետական անասնաբուժական վերահսկողության ենթակա ապրանքների
փոխադրման ժամանակ Միասնական անասնաբուժասանիտարական
պահանջների խախտման մասին**

Սույն ակտը կազմված է

(պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)

_____ անձի ներկայությամբ

բեռն ստացողի (բեռնառաքողի) ներկայացուցչի

գործող _____ թվականի թիվ _____ լիազորագրի հիման վրա

առ այն, որ _____

Ժամը _____ ըրոպ. «__» _____ թ.

_____ -ին տրված թիվ _____ ապրանքատրանսպորտային
փաստաթղթով

Ժամանել է _____ ապրանքը

բեռի անվանումը

_____ քանակությամբ _____ տեղով (գլխաքանակով) _____ քաշով

Անասնաբուժական սերտիֆիկատ/անասնաբուժական վկայական, որակի
(անվտանգության) սերտիֆիկատ թիվ _____

«__» _____ 20__ թվականի

տրված է _____

(արտահանող երկիրը, կազմակերպությունը, պաշտոնը, ազգանունը,
անունը, հայրանունը)

Ուղարկման վայր (երկիր) _____

Ուղարկող _____

_____ **հասցեով ուղարկվող**

(բեռի պահպանման կամ վերամշակման, կարանտինացման
և այլնի համար նախատեսված՝ տնտեսավարող սուբյեկտի
անվանումը, հասցեն)

Պարզվեց՝

Անասնաբուժության ոլորտում Մաքսային միության օրենսդրության հիման վրա
ընդունված որոշումը

Լիազորված մարմնի ստորաբաժանման

ներկայացուցիչ _____

(պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)

Ներկա գտնվող պաշտոնատար անձինք

(պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)

Տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցիչ

(ապրանքը տիրապետողը)

(պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)

Ակտը կազմվում է երեք օրինակից:

Ստորագրվում է անասնաբույժի և ակտի կազմման համար հիմք հանդիսացած հանգամանքների հավաստմանը մասնակցող անձանց (երկուսից ոչ պակաս) կողմից:

Կ.Տ.

Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմին

Հասցե _____

Հեռախոսահամար _____

Էլ փոստի հասցե _____

Անասնաբուժասանիտարական զննման ակտ

թիվ

«__» _____ 20__ թ.

Սույն ակտը կազմված է

(պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)

_____ ներկայությամբ

(նշել անձի ազգանունը, անունը, հայրանունը և պաշտոնը)

Ապրանքը տիրապետողի կամ ապրանքը տիրապետողի՝ լիազորագրի հիման վրա
հանդես եկող ներկայացուցչի

_____ -ին տրված թիվ _____

առ այն, որ ժամը _____ ժամ. «__» _____ թ.

Անցկացման վայր _____

Անցկացված է ապրանքի զննում (տեսազննում)

ապրանքը ժամանել է ըստ _____ին տրված
թիվ _____ անասնաբուժական և

ապրանքատրանսպորտային փաստաթղթերի _____

_____ քանակությամբ _____ տեղով (գլխաքանակով) _____ քաշով

Տրանսպորտի տեսակ

Ծագման երկիր (ուղարկման) _____

Ուղարկող _____

Հասցեով ուղարկվող _____

(բեռի պահպանման կամ վերամշակման, կարանտինացման և այլնի
համար նախատեսված տնտեսավարող սուբյեկտի անվանումը, հասցեն)

Պարզվեց հետևյալը՝

Ապրանքի համապատասխանությունը ապրանքաուղեկից փաստաթղթերին

(համապատասխանում է/չի համապատասխանում)

Տրանսպորտային միջոցի (կոնտեյների) ներսի ջերմաստիճան

(համապատասխանում է/չի համապատասխանում)

Ապրանքի ջերմաստիճան

(կենդանիների ջերմաչափում) _____

(համապատասխանում է/չի համապատասխանում)

Զգայորոշման ցուցանիշներ _____

(համապատասխանում է/չի համապատասխանում)

Արտադրման ամսաթիվ _____

(համապատասխանում է/չի համապատասխանում)

Իրացման ժամկետ

(պահպանման) _____

Փաթեթվածք _____

(համապատասխանում է/չի համապատասխանում)

Դրոշմավորում _____

(համապատասխանում է/չի համապատասխանում)

Տրանսպորտային միջոցի (կոնտեյների) անասնաբուժասանիտարական վիճակ

(համապատասխանում է/չի համապատասխանում)

Այլ տեղեկություններ (կապարակնիքի համար, կենդանիների հիվանդության կլինիկական հատկանիշների բացակայություն, կենդանիների դիերի առկայություն, կողմնակի ներդրվածքներ և այլն) _____

Լիազորված մարմնի ստորաբաժանման ներկայացուցիչ _____

(պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)

Ներկա գտնվող պաշտոնատար անձինք _____

(պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)

Տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցիչ

(ապրանքը տիրապետողը)

(պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)

Ակտը կազմվում է երեք օրինակից

Կ.Տ./դրոշմակնիք

4.

BY	ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆ	01
Անասնաբուժական վերահսկողություն Ներմուծումն արգելված է Պետական անասնաբուժական տեսուչ		
<hr/>		
<hr/>		
ամսաթիվ		ստորագրություն

5.

BY	ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆ	01
Անասնաբուժական վերահսկողություն Տարանցումը թույլատրված է Պետական անասնաբուժական տեսուչ		
<hr/>		
<hr/>		
ամսաթիվ		ստորագրություն

6.

BY	ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆ	01
Անասնաբուժական վերահսկողություն Տարանցումն արգելված է Պետական անասնաբուժական տեսուչ		
<hr/>		
<hr/>		
ամսաթիվ		ստորագրություն

7.

BY	ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆ	01
Անասնաբուժական վերահսկողություն Բեռի վերադարձ Պետական անասնաբուժական տեսուչ		
<hr/>		
<hr/>		
ամսաթիվ		ստորագրություն

8.

BY	ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆ	01
Անասնաբուժական վերահսկողություն Ներկայացնել անասնաբուժական վերահսկողության Պետական անասնաբուժական տեսուչ		
<hr/>		
<hr/>		
ամսաթիվ		ստորագրություն

9.

BY	ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆ	01
Անասնաբուժական վերահսկողություն Բեռնաթափում ժամանակավոր պահպանման պահեստներում (ԺՊՊ) (Մաքսային պահեստներ/ՄՊ) Պետական անասնաբուժական տեսուչ		
<hr/>		
<hr/>		
ամսաթիվը		ստորագրություն

ԿԻՐԱՌՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Դրոշմակնիքների չափսերը՝ 60 մմ x 30 մմ:

Անասնաբուժական վերահսկողության դրոշմակնիքների պատրաստման ժամանակ օգտագործվող պայմանական նշաններ՝

Վերին աջ անկյունում նշվում է՝ տարածաշրջանի ծածկագիրը:

Վերին ձախ անկյունում՝ Մաքսային միության անդամ պետությունների պայմանական նշաններից մեկը՝ BY, KZ, RU:

Դրոշմակնիք 1 «Բացթողումը թույլատրված է»՝ դրվում է ուղեկցող փաստաթղթերի վրա ամբողջական մաքսային ձևակերպման վայրերում Մաքսային միության անասնաբուժասանիտարական պահանջներին ապրանքի (արտադրանքի) համապատասխանության դեպքում:

Դրոշմակնիք 2 «Բացթողումն արգելված է»՝ դրվում է ուղեկցող փաստաթղթերի վրա ամբողջական մաքսային ձևակերպման վայրերում Մաքսային միության անասնաբուժասանիտարական պահանջներին ապրանքի (արտադրանքի) անհամապատասխանության դեպքում:

Դրոշմակնիք 3 «Ներմուծումը թույլատրված է»՝ դրվում է ուղեկցող փաստաթղթերի վրա Մաքսային միության մաքսային սահմանով անցակետերում ներմուծման թույլտվության առկայության և Մաքսային միության անասնաբուժասանիտարական պահանջներին ապրանքի (արտադրանքի) համապատասխանության դեպքում:

Դրոշմակնիք 4 «Ներմուծումն արգելված է»՝ դրվում է ուղեկցող փաստաթղթերի վրա Մաքսային միության մաքսային սահմանով անցակետերում ներմուծման երկրի լիազորված մարմնի թույլտվության բացակայության կամ Մաքսային միության անասնաբուժասանիտարական պահանջներին ապրանքի (արտադրանքի) անհամապատասխանության դեպքում:

Դրոշմակնիք 5 «Տարանցումը թույլատրված է»՝ դրվում է ուղեկցող փաստաթղթերի վրա Մաքսային միության մաքսային սահմանով անցակետերում՝

Մաքսային միության մաքսային տարածքով կենդանիների և կենդանական ծագման հումքի տարանցման թույլտվության առկայության, Մաքսային միության անասնաբուժասանիտարական պահանջներին ապրանքի (արտադրանքի) համապատասխանության դեպքում և կենդանիների տեսազննման արդյունքներով:

Դրոշմակնիք 6 «Տարանցումն արգելված է»՝ դրվում է ուղեկցող փաստաթղթերի վրա Մաքսային միության մաքսային սահմանով անցակետերում՝ Մաքսային միության մաքսային տարածքով կենդանիների և կենդանական ծագման հումքի տարանցման թույլտվության բացակայության, Մաքսային միության անասնաբուժասանիտարական պահանջներին ապրանքի (արտադրանքի) անհամապատասխանության դեպքում կամ կենդանիների տեսազննման արդյունքներով:

Դրոշմակնիք 7 «Բեռի վերադարձ»՝ դրվում է ուղեկցող փաստաթղթերի վրա Մաքսային միության անասնաբուժասանիտարական անվտանգության պահանջներին ներմուծվող բեռի անհամապատասխանության դեպքում:

Դրոշմակնիք 8 «Ներկայացնել անասնաբուժական վերահսկողությանը»՝ դրվում է ուղեկցող փաստաթղթերի վրա Մաքսային միության մաքսային սահմանով անցակետերում՝ նշանակման վայրում տրանսպորտային միջոցից ապրանքի բեռնաթափման ժամանակ անցակետերում ամբողջական զննում անցկացնելու որոշման դեպքում:

Դրոշմակնիք 9 «Բեռնաթափում ժամանակավոր պահպանման պահեստներում (ԺՊՊ) (Մաքսային պահեստներ/ՄՊ)»՝ դրվում է ուղեկցող փաստաթղթերի վրա Մաքսային միության մաքսային սահմանով անցակետերում, երբ ապրանքի ձևակերպման ժամանակ առաջանում են կասկածներ անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի իսկության մեջ կամ կասկածանքներ ներմուծվող (մաքսային միության շրջանակներում տեղափոխվող) ապրանքների որակի և անվտանգության հարցում:

Թույլատրվում է Կողմերի ազգային օրենսդրությանը համապատասխան այլ դրոշմակնիքների կիրառումը:

Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմին

Ե.գ. կայարան, բնակավայր, շրջան, օդանավակայան, նավահանգիստ

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԹԻՎ

«_____» _____ 20__ թվականի

նշել տրանսպորտային միջոցը, **կոնտեյները՝**

ազատված _____ բեռնաթափումից հետո

բեռի տեսակը

նույնպիսի է անասնաբուժասանիտարական մշակման՝ ըստ _____ կատեգորիայի, ախտահանման-վազման կայան (ախտահանման-վազման կետ, սանիտարական տարածք) (նշել պահանջվողը):

Ե.գ. կայարան, օդանավակայան, նավահանգիստ, նշանակման այլ վայրեր

Լիազորված պաշտոնատար անձ

Ստորագրություն ազգանուն, անուն, հայրանուն

Կ.Տ.

Քեռի վերադարձի մասին հայտարարագիր/Non-manipulation declaration*

Ա. Քեռի նկարագիր/Consignment details

1. Ապրանքի տեսակ/Consignment type

2. Ծագման երկիր/Country of origin

3. Տրանսպորտային միջոց/Means of transport

(վագոնի, ավտոմեքենայի, կոնտեյների համարը, ինքնաթիռի չվերթը, նավի անվանումը/the number of railway carriage, truck, container, flight-number, name of the ship)

4. Կապարակնիքի համարը/Seal No

5. Տեղերի թիվը/Quantity of goods _____ Քաշ/Weight _____

6. Դրոշմավորում/Labelling

7. Անասնաբուժական սերտիֆիկատի համար / Veterinary Certificate No

Տրման ամսաթիվ/date of issue _____

8. Սերտիֆիկատը տրված է իրավասու մարմնի կողմից / Issued by Competent authority

9. ԵՄ վերջին երկիր, որտեղից ուղարկված է ապրանքը/Member state in the EU from which consignment last dispatched

10. Բեռի համապատասխանությունը ներկայացված փաստաթղթերին/Consignment corresponds to documents presented _____

(այո/ոչ) (yes/no)

11. Տրանսպորտային միջոցի և տրանսպորտային փոխադրման ռեժիմի համապատասխանություն/Means of transport and regime of transportation meets the relevant requirements

(այո/ոչ) (yes/no)

Բ. Հայտարարություն / Statement

Վերոնշյալ ապրանքը թույլատրված չէ ընդունման/The consignment mentioned above has been refused acceptance in _____

ներմուծման ժամանակ Մաքսային միության** հետևյալ անասնաբուժական պահանջները չկատարելու պատճառով /because it does not meet the following Customs union** veterinary import requirements:

Ես՝ պետական անասնաբույժս, հաստատում եմ, որ վերադարձվող ապրանքը, որն ընդունվել է Մաքսային միության մաքսային տարածք թիվ _____ կապարակնիքի տակ,

/The state veterinary inspector, confirm that the returned consignment which entered the customs territory of the Customs union with the seal No _____,

չի ենթարկվել որևէ գործողության, որը փոփոխել է դրա վիճակը՝ ներառյալ տրանսպորտային փոխադրումն ու պահպանումը/has not undergone any handling altering its status including transport and storage.

Տրանսպորտային միջոց, որով ապրանքը վերադարձվում է, կապարակնքված է թիվ _____ կապարակնիքով

/The means of transport which contains the returned consignment is resealed with the seal No _____

Հայտարարագիրը հաստատող անձի կարգավիճակը/Status of person confirming the declaration

Ազգանուն, անուն, հայրանուն՝ տպատառերով / Name in capital letters _____

Ստորագրությունը/ Signature

Պաշտոն/Position _____

Իրավասու մարմին/Competent authority _____

Ամսաթիվ/Date _____

*նշված հայտարարագիրը ձևակերպվում է միայն Եվրոպական միության պետությունների համար,

**նշել Մաքսային միության մաքսակետը/Indicate the customs entry point in the Customs union

Մաքսային միության վարչական միավոր

Վերադարձի մասին ակտը ձևակերպած լիազորված մարմին

«___» _____ 20 __ թ.

Հասցե _____

Հեռախոս _____

Էլ.փոստի հասցե _____

ԱԿՏ ԹԻՎ

ԲԵՌԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ*

Իմ՝ անասնաբուժական տեսուչի կողմից

(պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)

բեռն ստացողի ներկայացուցչի, այլ անձանց ներկայությամբ

(ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը, կազմակերպության
անվանումը)

Ընդունված է վերադարձի մասին որոշում

(ապրանքի անվանումը, տեղերի թիվը, քաշը)

Ստացված _____-ից

(Մաքսային միության երկրի, տարածաշրջանի անվանումը)

(ստացողի անունը և հասցեն, հեռախոսահամարը)

Տրանսպորտի տեսակը _____

(տրանսպորտային միջոցի համարը և անունը)

_____ ուղեկցող փաստաթղթերով

(անասնաբուժական սերտիֆիկատը, որակի և անվտանգության հավաստագիրը)

Ներմուծման/արտահանման թույլտվություն, համար և

ամսաթիվ _____

(անհրաժեշտության դեպքում)

Ուղարկող _____

Ստացող _____

Վերադարձի պատճառներ

Կ.Տ.

Ստորագրություններ՝

1 Լիազորված պաշտոնատար անձ

2 Բեռն ստացողի ներկայացուցիչ

3 Այլ պատասխանատու անձինք

Ակտը կազմված է _____ օրինակից:

Թիվ _____ վերադարձի մասին ակտի 1-ին օրինակ.

ստացել է _____

(պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)

Թիվ _____ վերադարձի մասին ակտի 2-րդ օրինակ.

ստացել է _____

Թիվ _____ վերադարձի մասին ակտի 3-րդ օրինակ

ստացել է _____

* Վերադարձի մասին տվյալները մուտքագրվում են Մաքսային միության միասնական տեղեկատվական համակարգ՝ վերադարձն իրականացրած լիազորված մարմնի կողմից:

**_____ անցակետով պետական անասնաբուժական վերահսկողության ենթակա, արտահանման և ներմուծման
ապրանքների տեղափոխման գրանցամատյան**

Համարը՝ ը/կ	Ձևակերպման ամսաթիվ	Ներկրող երկիր, կազմակերպության անվանում, հասցե, ստացողի հեռախոսահամար	Արտահանող երկիրը, արտադրողը և դրա հասցեն	Ապրանքի անվանում	Քանակ		Տրանսպորտային միջոցի տեսակ և համար
					Տեղ	Քաշ/գլխ	
1	2	3	4	5	6	7	8

Ապրանքատրանսպորտային բեռնագրի համար	Անասնաբուժական ուղեկցող փաստաթղթի տրամադրման համար և ամսաթիվ	Իրավասու մարմնի՝ ներմուծման և արտահանման թույլտվության համար	Բժշկի ստորագրություն
	10	11	13

_____ անցակետով տարանցիկ փոխադրումների ժամանակ պետական անասնաբուժական վերահսկողության ենթակա ապրանքների (արտադրանքի) տեղափոխման գրանցամատյան

Համարը՝ ը/կ	Ձևակերպման ամսաթիվ	Ստացող կազմակերպության անվանում, հասցե, հեռախոսահամար	Ապրանքի անվանում	Քանակ		Արտահանող երկիրը, արտադրողը և դրա հասցեն	Ներկրող երկիր	Տրանսպորտային միջոցի տեսակ և համար
				տեղ	Քաշ/գլխ			
1	2	3	4	5	6	7	8	9

Ապրանքատրանսպորտային բեռնագրի համար	Անասնաբուժական ուղեկցող փաստաթղթի տրամադրման համար և ամսաթիվ	Իրավասու մարմնի՝ տարանցման թույլտվության համարը (անհրաժեշտության դեպքում)	Տեսազննման արդյունքներ: (կենդանիների համար)	Բժշկի ստորագրություն
10	11	12	13	14

Անցակետում արգելապահված պետական անասնաբուժական վերահսկողության ենթակա ապրանքների (արտադրանքի) և դրանց վերաբերյալ կայացված որոշումների գրանցամատյան

Համարը՝ ը/կ	Ապրանքի արգելապահ- ման ամսաթիվ և ժամանակ	Ընկերության անվանումը, դրա հասցեն	Հսկողության վերցված ապրանքի տեսակ և քանակ՝ (կենդանիներ, ապրանքներ, կերեր և այլն)	Արտահանող, ներկրող երկիր	Արգելապահ- ման պատճառ	Կիրառված միջոցներ՝ պատասխանա- տու պահպանու- թյուն, կարանտի- նացում, ուտիլիզացում, վերադարձ (հիմքը, ում կողմից է որոշումը կայացված)	Հաղորդագրու- թյուն՝ լիազորված մարմնի ստորաբաժա- նում (ամսաթիվ, ժամանակ, ով է ընդունել)	Հաղորդագրու- թյունը փոխանցած Պետական անասնաբու- ժական տեսուչի ստորագրությունը
1	2	3	4	5	6	7	8	9

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

Մաքսային միության հանձնաժողովի
2010 թվականի հունիսի 18-ի թիվ 317
որոշմամբ

ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

**Օբյեկտների համատեղ ստուգումներ անցկացնելու և անասնաբուժական
հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներից (արտադրանքից)
փորձանմուշներ վերցնելու միասնական կարգի մասին**

I. Ընդհանուր դրույթներ

1. «Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտների համատեղ ստուգումներ անցկացնելու և ապրանքներից (արտադրանքից) փորձանմուշներ վերցնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթը (այսուհետ՝ Հիմնադրույթ) մշակվել է «Անասնաբուժասանիտարական միջոցների վերաբերյալ» Մաքսային միության 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագիրն իրականացնելու, ինչպես նաև կենդանիների առողջությունը և կենդանական ծագմամբ մթերքների և հումքի, կերերի ու կերային հավելումների անվտանգությունն ապահովելու, կենդանիների հիվանդությունների, այդ թվում՝ մարդկանց և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների ներթափանցումն ու տարածումը կանխելու, ինչպես նաև անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող՝ Միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջներին չհամապատասխանող ապրանքների (արտադրանքի) ներմուծումն ու տարածումը կանխելու նպատակով:

2. Սույն Հիմնադրույթով սահմանվում է Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների միասնական ցանկում ներառված՝

Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող, ինչպես նաև մեկ Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք տեղափոխվող ապրանքների (արտադրանքի) արտադրություն, վերամշակում և (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների ու անձանց համատեղ ստուգումներ (տեսչական ստուգումներ) անցկացնելու և հետագա լաբորատոր հետազոտության անցկացման և ստուգումների (տեսչական ստուգումների) արդյունքների ձևակերպման համար նշված ապրանքներից (արտադրանքից) փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու կարգը:

Տվյալ Հիմնադրույթում «Կողմեր» ասելով՝ ենթադրվում են Մաքսային միության անդամ պետությունները:

II. Սույն Հիմնադրույթում գործածվող հասկացությունները

3. Սույն Հիմնադրույթում գործածվում են հետևյալ հասկացությունները՝

1) «հսկողության վերցված ապրանքներ»՝ Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների միասնական ցանկում ներառված ապրանքներ (արտադրանք).

2) «հսկողության օբյեկտ»՝ կազմակերպություն և անձ, որոնք իրականացնում են հսկողության վերցված ապրանքների արտադրությունը, վերամշակումը և (կամ) պահպանումը.

3) լիազորված մարմին»՝ Կողմերի պետական մարմիններ և հաստատություններ, որոնք համապատասխան գործունեություն են իրականացնում անասնաբուժության բնագավառում.

4) «տեսուչ»՝ Կողմի լիազորված մարմնի պաշտոնատար անձը.

5) Աֆասնական անասնաբուժական պահանջներ»՝ անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող՝ Միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջներ.

6) «հումք»՝ ապրանքներ (արտադրանք), որոնք նախատեսված են իրացնելու

համար և (կամ) օգտագործվում են արդյունաբերական կամ ոչ արդյունաբերական հետազա վերամշակման նպատակով.

7) կարանտին»՝ կենդանիների կարանտինային և հատուկ վտանգավոր հիվանդությունների տարածումը կանխելուն և վերացնելուն ուղղված հատուկ և կազմակերպական այնպիսի միջոցառումների ռեժիմ, որոնք սահմանվում են Կողմերի օրենսդրությանը համապատասխան.

8) «ստուգում»՝ անասնաբուժական հսկողության ձև, որն անցկացվում է տեսուչի կողմից՝ ստուգվող հսկողության օբյեկտ այցելելու և հսկողության վերցված ապրանքներից փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու միջոցով՝ սույն Հիմնադրույթով սահմանված դեպքերում:

III. Համատեղ ստուգումներ անցկացնելու կարգը

4. Երրորդ երկրների տարածքում տեղակայված հսկողության օբյեկտների համատեղ ստուգումներն իրականացվում են այդ երկրների իրավասու մարմինների կողմից պահանջով դիմելու հիման վրա այդպիսի օբյեկտները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող՝ հսկողության վերցված ապրանքների արտադրություն, վերամշակում և (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների և անձանց ռեեստրում (այսուհետ՝ Երրորդ երկրների ձեռնարկությունների ռեեստր) ընդգրկելու նպատակով:

Կողմի լիազորված մարմինը երրորդ երկրների տարածքում տեղակայված հսկողության օբյեկտի ծրագրված համատեղ ստուգման գործընթացն սկսելուց ոչ ուշ, քան երկու ամիս առաջ (եթե Կողմերն ավելի կարճ ժամկետ չեն համաձայնեցրել) մյուս Կողմերին տեղեկացնում է առաջիկա համատեղ ստուգում անցկացնելու մասին՝ տեսուչների խումբ ձևավորելու և համատեղ ստուգում անցկացնելու ժամկետները համաձայնեցնելու համար:

Կողմերից մեկի տեսուչների կողմից հսկողության օբյեկտների ստուգում անցկացնելը թույլատրվում է մնացած Կողմերի լիազորված մարմիններ հետ համաձայնեցմամբ: Ընդ որում, վերջինների կողմից ճանաչվում է ստուգող Կողմի

լիազորված մարմնի կողմից ստուգման արդյունքներով ընդունված որոշումը:

Այն Կողմերի լիազորված մարմինները, որոնց տարածք երրորդ երկրներից նախատեսվում է ներմուծել հսկողության վերցված ապրանքները, Կողմերի օրենսդրությամբ նախատեսված կարգով իրականացնում են Երրորդ երկրների ձեռնարկությունների ռեեստրի վարում: Կողմերի լիազորված մարմինները Երրորդ երկրների ձեռնարկությունների ռեեստրում առկա տեղեկություններն ուղարկում են Մաքսային միության հանձնաժողով՝ Մաքսային միության արտաքին և փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում (այսուհետ՝ Ինտեգրված տեղեկատվական համակարգ) դրանք տեղադրելու համար:

Երրորդ երկրների տարածքում տեղակայված հսկողության օբյեկտը կարող է ընդգրկվել Երրորդ երկրների ձեռնարկությունների ռեեստրում առանց համատեղ ստուգում անցկացնելու՝ մնացած Կողմերի լիազորված մարմինների հետ համաձայնեցմամբ՝ անասնաբուժության ոլորտում երրորդ երկրի իրավասու մարմնի երաշխավորությամբ ընդունված՝ այն Կողմի լիազորված մարմնի որոշման հիման վրա, որի տարածքում նախատեսվում է իրականացնել հսկողության վերցված ապրանքների ներմուծումը: Ընդ որում, այդպիսի որոշում ընդունած Կողմի լիազորված մարմինն իրավասու է իրականացնելու նշված հսկողության օբյեկտի հետագա համատեղ ստուգումը:

Միասնական անասնաբուժական պահանջներին երրորդ երկրների հսկողության օբյեկտներում արտադրված և Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող՝ հսկողության վերցված ապրանքների անհամապատասխանության կրկնակի բացահայտման դեպքում, անհամապատասխանությունը բացահայտած Կողմի լիազորված մարմինը երրորդ երկրի իրավասու մարմնին, որի տարածքում տեղակայված է հսկողության օբյեկտը, և մյուս Կողմերի լիազորված մարմիններին ծանուցում է բացահայտված անհամապատասխանությունների և հսկողության վերցված այդ ապրանքների ներմուծումը ժամանակավորապես դադարեցնելու մասին: Հսկողության վերցված ապրանքների ներմուծումը ժամանակավորապես դադարեցնելու մասին որոշումը ենթակա է մյուս Կողմերի լիազորված մարմինների հետ համաձայնեցման ոչ ուշ,

քան այն ընդունելու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում: Նշված որոշումը տեղադրվում է այդպիսի որոշում ընդունած Կողմի լիազորված մարմնի պաշտոնական կայքում:

5. Կողմերից յուրաքանչյուրի լիազորված մարմինները Կողմերի օրենսդրությամբ նախատեսված կարգով իրականացնում են հսկողության օբյեկտների ստուգումներ՝ դրանք մեկ Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք տեղափոխվող՝ հսկողության վերցված ապրանքների արտադրություն, վերամշակում և (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների և անձանց ռեեստրում (այսուհետ՝ Մաքսային միության ձեռնարկությունների ռեեստր) ընդգրկելու նպատակով: Կողմերի լիազորված մարմինները Մաքսային միության ձեռնարկությունների ռեեստրում առկա տեղեկություններն ուղարկում են Մաքսային միության հանձնաժողով Ինտեգրված տեղեկատվական համակարգում դրանք տեղադրելու համար:

Կողմերը փոխադարձաբար ճանաչում են իրենց տարածքում տեղակայված հսկողության օբյեկտները Մաքսային միության ձեռնարկությունների ռեեստրում ընդգրկելու մասին Կողմերի լիազորված մարմինների որոշումները:

Մաքսային միության ձեռնարկությունների ռեեստրում ընդգրկված հսկողության օբյեկտների համատեղ ստուգումները, անհրաժեշտության դեպքում և Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ, կարող են իրականացվել հետևյալ դեպքերում՝

1) Միասնական անասնաբուժական պահանջներին հսկողության օբյեկտներում արտադրված՝ հսկողության վերցված ապրանքների անհամապատասխանությունը կրկնակի բացահայտելու դեպքում.

2) կարանտինն այն տարածքից հանելու դեպքում, որտեղ տեղակայված է հսկողության օբյեկտը.

3) հսկողության օբյեկտը՝ այն տարածքին (գոտուն) սահմանակից տարածքում գտնվելու դեպքում, որտեղ սահմանված է կարանտին:

6. Միասնական անասնաբուժական պահանջներին հսկողության վերցված

ապրանքների անհամապատասխանության կրկնակի բացահայտման դեպքում այդպիսի անհամապատասխանությունն բացահայտած՝ Կողմի լիազորված մարմինը (այսուհետ՝ ծանուցող Կողմ) բացահայտված փաստի մասին ծանուցում է հսկողության վերցված ապրանքի ծագման Կողմի լիազորված մարմնին:

Միասնական անասնաբուժական պահանջներին չհամապատասխանող ճանաչված՝ հսկողության վերցված ապրանքի ծագման Կողմի լիազորված մարմինը, ըստ ծանուցման փաստի, ինքնուրույն անցկացնում է հսկողության օբյեկտի ստուգում: Այդպիսի ստուգման արդյունքներով կազմվում է ակտ, որն ուղարկվում է ծանուցող Կողմին:

Հսկողության օբյեկտի ստուգում անցկացնելիս Միասնական անասնաբուժական պահանջներին հսկողության վերցված ապրանքների անհամապատասխանության համար հիմք հանդիսացող պատճառների բացակայության դեպքում, ծանուցող Կողմը ճանաչում է ստուգման արդյունքները կամ, ստուգման արդյունքների շուրջ անհամաձայնության դեպքում, իրավասու է նախաձեռնելու նշված հսկողության օբյեկտի համատեղ ստուգման անցկացում:

Ստուգման արդյունքներով Միասնական անասնաբուժական պահանջների այնպիսի խախտումներ հայտնաբերելու դեպքում, որոնք հիմք են հանդիսացել Միասնական անասնաբուժական պահանջներին չհամապատասխանող՝ հսկողության վերցված ապրանքների բացթողնման համար, Կողմի լիազորված մարմինը, որի տարածքում տեղակայված է հսկողության օբյեկտը, որոշում է ընդունում հսկողության վերցված ապրանքների՝ շրջանառության մեջ դնելը դադարեցնելու մասին մինչև ստուգման ակտում նշված՝ հայտնաբերված խախտումները վերացնելը:

Եթե հայտնաբերված խախտումները չեն վերացվում ստուգման ակտում նշված ժամկետում այն Կողմի լիազորված մարմնի կողմից, որի տարածքում տեղակայված է այդպիսի հսկողության օբյեկտը, ապա որոշում է ընդունվում Մաքսային միության ձեռնարկությունների ռեեստրից հսկողության օբյեկտը հանելու մասին: Նշված որոշումը կարող է բողոքարկվել Կողմի օրենսդրությամբ սահմանված կարգով: Մաքսային միության ձեռնարկությունների ռեեստրից հանված հսկողության օբյեկտը

նշված ռեեստրում ընդգրկվում է սույն Հիմնադրույթի 5-րդ կետով նախատեսված կարգով:

Մաքսային միության ձեռնարկությունների ռեեստրում ընդգրկված հսկողության օբյեկտների համատեղ ստուգումն իրականացվում է Կողմերի լիազորված մարմինների կողմից համաձայնեցված ժամկետներում:

Մաքսային միության ձեռնարկությունների ռեեստրում ընդգրկված հսկողության օբյեկտների համատեղ ստուգում իրականացնելը թույլատրվում է սույն Հիմնադրույթի 5-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում այն Կողմի լիազորված մարմնի կողմից, որի տարածքում տեղակայված է հսկողության օբյեկտը՝ մնացած Կողմերի լիազորված մարմինների հետ համաձայնեցմամբ: Ընդ որում, վերջիններիս կողմից ճանաչվում է ստուգող Կողմի լիազորված մարմնի կողմից ստուգման արդյունքներով ընդունված որոշումը:

7. Երրորդ երկրների ձեռնարկությունների ռեեստրում և Մաքսային միության ձեռնարկությունների ռեեստրում ընդգրկված հսկողության օբյեկտների համատեղ ստուգումների անցկացման ժամկետը չի կարող գերազանցել հինգ աշխատանքային օրը:

8. Համատեղ ստուգումների (տեսչական ստուգումների) անցկացման հետ կապված ֆինանսական ծախսերը կատարվում են Կողմերի համապատասխան բյուջեներից յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար այլ կարգ սահմանված չլինելու դեպքում:

9. Տեսուչները, ժամանելով հսկողության օբյեկտ, իրականացնում են՝

1) այն փաստաթղթերի ուսումնասիրությունը, որոնք բնութագրում են՝ հսկողության օբյեկտի գործունեության տեսակը, պլան-սխեման, արտադրության տեխնոլոգիական սխեմաները, հսկողության վերցված ապրանքների արտադրության և շրջանառության մեջ դնելու ծավալները, արտադրվող՝ հսկողության վերցված ապրանքների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ պետական և արտադրական հսկողության առկայությունն ու իրականացումը, հսկողության օբյեկտի տեղակայման վայրի վարչական տարածքի

անասնահամաճարակային բարեկեցությունը,

2) հսկողության օբյեկտների ստուգումը՝ սույն Հիմնադրույթի IV - VII գլուխներին համապատասխան,

3) հսկողության վերցված ապրանքներից փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու գործընթացը:

IV. Կենդանիների բուծում, կարանտինացում իրականացնող՝ հսկողության օբյեկտների ստուգում (տեսչական ստուգում)

10. Տեսուչը կենդանիների բուծում, կարանտինացում իրականացնող հսկողության օբյեկտներում ստուգում է՝

1) Կողմի՝ կարանտինային և հատուկ վտանգավոր հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդությունների մասով, իսկ երրորդ երկրների հսկողության օբյեկտներում՝ Միասնական անասնաբուժական պահանջներում նշված հիվանդությունների մասով պարտադիր հակաանասնահամաճարակային միջոցառումների իրականացումը.

2) կերերի և կերային հավելումների որակի ու անվտանգության հսկողություն իրականացնելու կարգը.

3) կենդանիների առողջության դիտանցումն ու հսկողությունն ապահովող մատյանների և այլ փաստաթղթերի վարումը.

4) կրկին ժամանած կենդանիների նկատմամբ կարանտին սահմանելու կարգը Կողմերի օրենսդրությամբ նախատեսված դեպքերում.

5) հսկողության օբյեկտի անասնաբուժական շինությունների ախտահանման (դեզինֆեկցիայի), կրծողազերծման (դեռատիզացիայի) և միջատազերծման (դեզինսեկցիայի) գործընթացների կազմակերպումը.

6) կենդանիներին պահելու, կերակրելու և դրանց վերարտադրության մասով անասնաբուժական և զոոտեխնիկական նորմերի պահպանումը.

7) անասնաբուժության մեջ կիրառելու համար դեղամիջոցների օգտագործման նկատմամբ հսկողությունը:

V. Կենդանիների մթերում (սպանդ) իրականացնող՝ հսկողության օբյեկտների ստուգում (տեսչական ստուգում)

11. Տեսուչը կենդանիների մթերում (սպանդ) իրականացնող հսկողության օբյեկտներում ստուգում է՝

1) բաց թողնվող՝ հսկողության ներքո վերցված ապրանքների ծավալն ու տեսականին՝ հսկողության օբյեկտի ծրագրային չափորոշիչների մասով.

2) ախտահանիչ խոչընդոտների (այդ թվում՝ ձմեռային ժամանակահատվածում ջեռուցման առկայությունը) և այն անցատեղերի անասնաբուժասանիտարական վիճակը, որոնցով իրականացվում են կենդանիների ներմուծումն ու բեռնաթափումը.

3) մթերման (սպանդի) համար ստացվող կենդանիներին և հսկողության օբյեկտի կողմից բաց թողնվող՝ հսկողության վերցված ապրանքներին առնչվող ապրանքաուղեկից անասնաբուժական փաստաթղթերը.

4) կենսաբանական թափոնների օգտահանման կամ ոչնչացման գործընթացի պայմանները.

5) սպանդի ենթակա կենդանիների ընդունում և բեռնաթափում իրականացնելու պայմանները.

6) նախասպանդային պահման տեղերի անասնաբուժասանիտարա կան վիճակը, սպանդի համար ստացված կենդանիների զննում անցկացնելու և դրանք սպանդի կամ սանիտարական սպանդանոց ուղարկելու կարգը.

7) հսկողության օբյեկտի տարածքների, շինությունների, սարքավորումների, հատուկ տրանսպորտային միջոցների ախտահանման (դեզինֆեկցիայի), միջատազերծման (դեզինսեկցիայի) և կրծողազերծման (դեռատիզացիայի) գործընթացների կազմակերպումը.

8) անասնաբուժական նշանակության օբյեկտների, տեխնոլոգիական և սառնարանային սարքավորումների, արտադրական և պահեստային շինությունների, սառնարանային և սառցարանային խցիկների, գույքի, ինչպես նաև հսկողության օբյեկտի տարածքի անասնաբուժասանիտարական վիճակը.

10) հսկողության վերցված ապրանքներն ընդունելու և սառնարանային ու սառցարանային խցիկներում պահելու պայմանները.

11) սպանդային մթերքի (գլուխների, մսեղիքի և օրգանների) հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննություն անցկացնելու կարգը.

12) անհրաժեշտության դեպքում, հսկողության վերցված ապրանքների հետազոտության համար փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու գործընթացի կազմակերպումը.

13) մսի դրոշմակնքումն անասնաբուժասանիտարական փորձաքննության արդյունքներով.

14) պետական և արտադրական լաբորատոր հսկողության իրականացման կարգը.

15) արտադրանքի որակի և անվտանգության հսկողության համակարգերի (HACCP, ISO, CMP) գործառությունը դրանց առկայության դեպքում:

VI. Հսկողության վերցված ապրանքների վերամշակում իրականացնող հսկողության օբյեկտների ստուգում (տեսչական ստուգում)

12. Տեսուչը հսկողության վերցված ապրանքների վերամշակում իրականացնող հսկողության օբյեկտներում ստուգում է՝

1) վերամշակման համար ստացվող հումքի համար ապրանքաուղեկից անասնաբուժական փաստաթղթերի առկայությունը,

2) բաց թողնվող՝ հսկողության վերցված ապրանքների ծավալն ու տեսականին հսկողության օբյեկտի ծրագրային չափորոշիչների մասով,

3) անասնաբուժական նշանակության օբյեկտների, տեխնոլոգիական և սառնարանային սարքավորումների, արտադրական և պահեստային շինությունների, սառնարանային և սառցարանային խցիկների, գույքի, ինչպես նաև հսկողության օբյեկտի տարածքի անասնաբուժասանիտարական վիճակը,

4) արտադրական շինությունների, տեխնոլոգիական սարքավորումների, գույքի, տարայի ախտահանման (դեզինֆեկցիայի), միջատազերծման (դեզինսեկցիայի) և կրծողազերծման (դեռատիզացիայի) գործընթացների կազմակերպումը,

5) վերամշակման համար ստացվող հումքի և բաց թողնվող՝ հսկողության վերցված ապրանքների պետական և արտադրական լաբորատոր հսկողության իրականացման կարգը,

6) արտադրանքի որակի և անվտանգության հսկողության համակարգերի (HACCP, ISO, CMP) գործառությունը՝ դրանց առկայության դեպքում:

VII. Հսկողության վերցված ապրանքների պահպանում իրականացնող հսկողության օբյեկտների ստուգում (տեսչական ստուգում)

13. Տեսուչը հսկողության վերցված ապրանքների պահպանում իրականացնող հսկողության օբյեկտներում ստուգում է՝

1) հսկողության վերցված ապրանքների, այդ թվում՝ հումքի պահպանման և տրանսպորտային փոխադրման պայմաններն ու ռեժիմները պահպանելը,

2) հսկողության օբյեկտի սարքավորվածությունը հսկիչ չափող գործիքներով,

3) հսկողության վերցված ապրանքների պահպանման համար սառնարանային կամ սառցարանային առանձին խցիկների առկայությունը,

4) պարենային հումքի, պատրաստի արտադրանքի, ոչ սննդային արտադրանքի, տարայի պահպանման կազմակերպումը,

5) ախտահանիչ խոչընդոտների առկայությունը և վիճակը,

6) սառնարան ային շինությունների և տրանսպորտի ախտահանման (դեզինֆեկցիայի), միջատազերծման (դեզինսեկցիայի) և կրծողազերծման (դեռատիզացիայի) գործընթացների կազմակերպումը,

7) ջերմաստիճանի և խոնավության ռեժիմները հսկողության վերցված ապրանքների ժամանակավոր պահպանման և բեռնառաքման ժամանակ,

8) հսկողության վերցված ապրանքների բեռնման (բեռնաթափման) և տրանսպորտային փոխադրման ժամանակ ապրանքաուղեկից անասնաբուժական փաստաթղթերի ձևակերպումը:

VIII. Հսկողության օբյեկտներում հսկողության վերցված ապրանքներից փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու կարգը

14. Հսկողության վերցված ապրանքներից փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու անհրաժեշտության մասին որոշումը կայացվում է հսկողության օբյեկտի ստուգում իրականացնող տեսուչի կողմից: Հսկողության վերցված ապրանքների փորձանմուշների (նմուշների) լաբորատոր հետազոտություններն անցկացվում են հավատարմագրման ազգային համակարգերում հավատարմագրված և Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ընդգրկված՝ Կողմերի համապատասխան լաբորատորիաներում՝ «Մաքսային միության մաքսային տարածքում համապատասխանության պարտադիր գնահատման (հաստատման) ենթակա արտադրանքի շրջանառության մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագրին համապատասխան:

15. Հսկողության վերցված ապրանքից փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու գործընթացն իրականացվում է՝ Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ արտադրանքի յուրաքանչյուր տեսակի նորմատիվներին համապատասխան, իսկ մինչև դրանց ուժի մեջ մտնելը՝ այն Կողմի օրենսդրությամբ, որի տարածքում տեղակայված է հսկողության օբյեկտը՝ անվտանգության ցուցանիշներով լաբորատոր հետազոտություններ անցկացնելու նպատակով:

16. Հսկողության վերցված ապրանքներից փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու գործընթացն իրականացվում է տեսուչների կողմից, որոնք օժտված են փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու և տրանսպորտային փոխադրում իրականացնելու պատշաճ պայմանների ապահովման համար համապատասխան գիտելիքներով և հմտություններով:

17. Փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու ակտը ձևակերպվում է ձևաթղթերի վրա սույն Հիմնադրույթի թիվ 1 հավելվածով նախատեսված ձևով՝ երեք օրինակից (առաջինը՝ հսկողության ստուգվող օբյեկտը տիրապետողին, երկրորդը՝ ստուգման գործընթացին մասնակցող Կողմի վարչական տարածքի տեսուչին, երրորդը՝ հսկողության վերցված ապրանքի փորձանմուշների (նմուշների) հետազոտություն և պահպանում իրականացնող հավատարմագրված լաբորատորիային):

18. Այն դեպքերում, երբ լաբորատորիայի կողմից հաստատվում է հսկողության վերցված ապրանքի փորձանմուշների (նմուշների) պահպանման և տրանսպորտային փոխադրման այնպիսի պայմանների՝ սույն Հիմնադրույթի 14-րդ կետով նախատեսված անհամապատասխանությունը, որոնք հանգեցրել են հսկողության վերցված ապրանքի բնութագրերի փոփոխության, լաբորատոր հետազոտություններ չեն անցկացվում, այլ կազմվում է հետազոտություններ անցկացնելու անհնարինության և փորձանմուշներ (նմուշներ) կրկին վերցնելու անհրաժեշտության մասին ակտ՝ թիվ 1 հավելվածով նախատեսված ձևով:

Փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու գործընթացը մեկ համատեղ ստուգման շրջանակներում կարող է իրականացվել ոչ ավելի, քան երկու անգամ:

IX. Հսկողության օբյեկտների ստուգման (տեսչական ստուգման) արդյունքների գնահատում և ձևակերպում

19. Մաքսային միության ձեռնարկությունների ռեեստրում ընդգրկված հսկողության օբյեկտի համատեղ ստուգման (տեսչական ստուգման) արդյունքներով կազմվում է ստուգման ակտ:

Ստուգման ակտը ձևակերպվում և ստորագրվում է ոչ պակաս, քան երեք

օրինակից Կողմերի՝ ստուգմանը (տեսչական ստուգմանը) մասնակցող տեսուչների կողմից և հսկողության ստուգվող օբյեկտի ղեկավարի կողմից:

Ստորագրված ակտի մեկ օրինակը փոխանցվում է հսկողության օբյեկտի ղեկավարին և ակտի մեկական օրինակ՝ Կողմերի՝ ստուգմանը (տեսչական ստուգմանը) մասնակցող տեսուչներին:

20. Լաբորատոր հետազոտություններ իրականացնելու դեպքում, հսկողության օբյեկտի ստուգում (տեսչական ստուգում) անցկացնելիս ստուգման (տեսչական ստուգման) ակտին կցվում է անցկացված լաբորատոր հետազոտությունների ակտը (արձանագրությունը, եզրակացությունը):

21. Մաքսային միության ձեռնարկությունների ռեեստրու մ ընդգրկված հսկողության օբյեկտի համատեղ ստուգման (տեսչական ստուգման) արդյունքներով տեսուչներն ընդունում են հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

1) հսկողության վերցված ապրանքների՝ շրջանառության մեջ դնելն արգելելու մասին մինչև ստուգման ակտով նախատեսվող՝ հայտնաբերված խախտումների վերացումը.

2) հսկողության վերցված ապրանքների՝ շրջանառության մեջ դնելը թույլատրելու մասին:

22. Երրորդ երկրների ձեռնարկությունների ռեեստրում ընդգրկված կամ ընդգրկվելուն հավակնող հսկողության օբյեկտի համատեղ ստուգման (տեսչական ստուգման) արդյունքներով տեսուչներն ընդունում են հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

1) համատեղ ստուգումը նախաձեռնող Կողմի լիազորված մարմնի կողմից մնացած Կողմերի լիազորված մարմինների հետ համաձայնեցմամբ հսկողության օբյեկտը Երրորդ երկրների ձեռնարկությունների ռեեստրում ընդգրկելու համար հիմք հանդիսացող դրական եզրակացություն,

2) բացասական եզրակացություն, որը հիմք է՝

- համատեղ ստուգումը նախաձեռնող Կողմի լիազորված մարմնի կողմից

մնացած Կողմերի լիազորված մարմինների հետ համաձայնեցմամբ հսկողության օբյեկտը Երրորդ երկրների ձեռնարկությունների ռեեստրում ընդգրկելը մերժելու համար.

- համատեղ ստուգումը նախաձեռնող Կողմի լիազորված մարմնի կողմից, մնացած Կողմերի լիազորված մարմինների հետ համաձայնեցմամբ, հսկողության օբյեկտը Երրորդ երկրների ձեռնարկությունների ռեեստրից հանելու համար:

Ստուգման (տեսչական ստուգման) արդյունքների մասին հաշվետվությունն (եզրակացությունը) ուղարկվում է այն երրորդ երկրի իրավասու մարմին, որի տարածքում տեղակայված է հսկողության օբյեկտը:

Բացասական եզրակացության դեպքում երրորդ երկրի իրավասու մարմինը խախտումների վերացման մասին հաշվետվություն է ներկայացնում համատեղ ստուգում նախաձեռնող Կողմի լիազորված մարմին: Ներկայացված հաշվետվության արդյունքներով համատեղ ստուգում նախաձեռնող Կողմի լիազորված մարմնի կողմից, մնացած Կողմերի լիազորված մարմինների հետ համաձայնեցմամբ, որոշում է կայացվում հսկողության օբյեկտը Երրորդ երկրների ձեռնարկությունների ռեեստրում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին:

Համատեղ ստուգման գործընթացը նախաձեռնող Կողմի լիազորված մարմինը սույն Հիմնադրույթի 21-րդ և 22-րդ կետերով նախատեսվող՝ ընդունված որոշումների մասին տեղեկություններ է ուղարկում Մաքսային միության հանձնաժողով՝ Ինտեգրված տեղեկատվական համակարգում տեղադրելու համար:

X. Եզրափակիչ և անցումային դրույթներ

23. Սույն Հիմնադրույթում փոփոխություններ և լրացումներ կատարվում են Մաքսային միության հանձնաժողովի որոշման հիման վրա:

24. Այն հսկողության օբյեկտները, որոնք տեղակայված են երրորդ երկրների տարածքում և, 2010թվականի հուլիսի 1 -ի դրությամբ Կողմերի օրենսդրությանը համապատասխան, ունեն հսկողության վերցված ապրանքների ներմուծման

իրավունք, ընդգրկվում են Երրորդ երկրների ձեռնարկությունների ռեեստրում առանց այդ նպատակներով համատեղ ստուգում անցկացնելու:

25. Այն հսկողության օբյեկտները, որոնք տեղակայված են Մաքսային միության տարածքում և 2010 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ստուգում են անցել այն Կողմի լիազորված մարմնի կողմից, որի տարածքում տեղակայված է հսկողության օբյեկտը, առանց այդ նպատակներով համատեղ ստուգում անցկացնելու, ընդգրկվում են Մաքսային միության ձեռնարկությունների ռեեստրում:

26. Մ աքսային միության արտաքին և փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգը գործողության մեջ դնելուց առաջ Կողմերի լիազորված մարմինները սույն Հիմնադրույթի 4-րդ և 5-րդ կետերում նշված ռեեստրների մասին տեղեկություններ են տեղադրում ինտերնետ ցանցում՝ Կողմերի լիազորված մարմինների պաշտոնական կայքերում, և ապահովում են նշված ռեեստրների ժամանակին թարմացումը:

Փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու ակտ

թիվ _____

« __ » _____ 20 թ.-ի

_____ շրջանի (քաղաքի) լիազոր մարմնի գերատեսչության շրջանային (քաղաքային) տարածքային ստորաբաժանում

Ձեռնարկության անվանումը _____

Տեղափոխվող (փոխադրվող) օբյեկտի անվանումը _____

Փորձանմուշներ վերցնելու վայրը _____

(օբյեկտի անվանումը և հասցեն)

Իմ (մեր)՝ _____ կողմից

(փորձանմուշներ վերցնելու գործընթացն իրականացնող լիազոր մարմնի ներկայացուցչի (ներկայացուցիչների) պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)

ներկայությամբ

(նշել տեղափոխվող (փոխադրվող) օբյեկտի սեփականատիրոջ, իրավաբանական անձի ներկայացուցչի

(ներկայացուցիչների) պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը)

անցկացվել է _____ զննում:

(տեղափոխվող (փոխադրվող) օբյեկտի անվանումը)

Իսմբաքանակի չափը _____, մուտքագրման ամսաթիվը _____

(զտաքաշը, տեղերի թիվը)

(նշել տրանսպորտային միջոցների անվանումը, միավորների թիվը և համարը)

Ապրանքը ուղեկցող փաստաթղթերը _____

(թվարկել փաստաթղթերի տեսակները, տրամադրման համարը և ամսաթիվը)

Փաստաթղթերի բացակայությունը _____

(նշել, թե որոնց)

Արտադրանքը պատրաստվել է _____

(ծագման երկիրը)

Պիտանիության ժամկետը, պատրաստողը, պատրաստման ամսաթիվը

Արտադրանքի զննման արդյունքները _____
(արտաքին տեսքը, հոտը, փաթեթվածքի ամբողջականությունը,

դրոշմավորման համապատասխանությունը, մթերքի ներսում ջերմաստիճանը և այլն)

Արտադրանքի և կերերի լաբորատոր հետազոտությունների անցկացման հիմնավորումը՝

(պլանային հսկողության և ուսումնասիրության կարգով, անասնաբուժասանիտարական առումով վտանգի առկայության վերաբերյալ կասկած, անորակության մասին տեղեկությունների ստացում, տեղափոխվող (փոխադրվող) օբյեկտի սեփականատիրոջ դիմումի դեպքում՝ պահպանման պայմանների խախտումներ)

Փորձանմուշները վերցվել են ժամը ____-ն անց ____ ժամին՝

_____ համաձայն

(նշել փաստաթղթի անվանումը)

_____ քանակով, _____ համարակալված և կապարակնքված
_____ (կնքված)

ուղարկվում են _____

(նշել անասնաբուժական լաբորատորիայի անվանումը)

_____ համար

(նշել լաբորատոր հետազոտությունների տեսակները)

Փորձանմուշներն (նմուշները) ուղարկելու ամսաթիվը _____

Փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու գործընթացն անցկացրած պետական

անասնաբուժասանիտարական տեսուչը՝ _____

(ստորագրությունը)

(ազգանունը, անունը,
հայրանունը)

Արտադրանքի սեփականատերը կամ նրա ներկայացուցիչը՝ _____

(ստորագրությունը)

(ազգանունը,
անունը,
հայրանունը)

Փորձանմուշներ (նմուշներ) ստանալու մասին նշումներ՝

Փորձանմուշներն ընդունել է՝ _____

(ստորագրությունը, նշել անասնաբուժական լաբորատորիայի
մասնագետի ազգանունը, անունը, հայրանունը)

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Մաքսային միության հանձնաժողովի
2010 թվականի հունիսի 18-ի թիվ 317
որոշմամբ

**ԱՆԱՍՆԱՐՈՒԺԱԿԱՆ (ԱՆԱՍՆԱՐՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ) ՄԻԱՍՆԱԿԱՆ
ՊԱՀԱՆՋՆԵՐ,**

**որոնք ներկայացվում են անասնաբուժական հսկողության (վերահսկողության)
ենթակա ապրանքներին**

Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներին և անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա Ապրանքների միասնական ցանկում ներառված ապրանքներին (այսուհետ՝ հսկողության վերցված ապրանքներ) ներկայացվող անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) միասնական պահանջները (այսուհետ՝ Պահանջներ) մշակվել են «Անասնաբուժասանիտարական միջոցների վերաբերյալ» Մաքսային միության 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագիրն իրագործելու և կենդանիների վարակիչ հիվանդությունների, այդ թվում՝ մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների հարուցիչների ու Միասնական անասնաբուժական պահանջներին չհամապատասխանող ապրանքների ներմուծումից և տարածումից Մաքսային միության մաքսային տարածքի պաշտպանությունն ապահովելու նպատակով:

Սույն փաստաթղթի նպատակներից ելնելով՝ «Կողմ ասելով» պետք է հասկանալ Մաքսային միության անդամ պետությունը:

Անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) միասնական պահանջներում օգտագործվող տերմինները

«Գոտիավորում»՝ երկրի կամ դրա վարչական տարածքի (հանրապետություն, մարզ, երկրամաս, հող, կայսրություն, նահանգ, գավառ, շրջան և այլն) ապահով կամ անապահով իրավիճակի սահմանում՝ Կողմի վտանգավոր և կարանտինային հիվանդությունների ցանկում ընդգրկված կենդանիների վարակիչ հիվանդությունների առումով, իսկ երրորդ երկրների հսկողության օբյեկտներում՝ սույն Պահանջներում նշված հիվանդությունների առումով:

Գոտիավորումն անցկացվում է Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության առաջարկներին համապատասխան (այսուհետ՝ ՄԱԲ (Միջազգային անասնահամաճարակային բյուրո)):

«Ձեռնարկություն»՝ հսկողության վերցված օբյեկտ (շենք, կառույց, նավ և այլն), որտեղ իրականացվում է կենդանիների սպանդը, ինչպես նաև հսկողության վերցված ապրանքների արտադրությունը, վերամշակումը, պահպանումը՝ բացառությամբ կենդանիների:

«Արհեստական սերմնավորման ձեռնարկություն»՝ ձեռնարկություն, որն իրականացնում է գենետիկ նյութի արտադրության, պահպանման, վերամշակման գործունեություն:

«Մթերատու կենդանիներ»՝ կենդանիներ, որոնք օգտագործվում են սննդի մեջ կիրառելու համար նախատեսված արտադրանք ստանալու համար:

«Տնտեսություն»՝ շենք (շինություն, կառույց), գազանանոց, ֆերմա, կրկես կամ հողատարածք, որոնք օգտագործվում են կենդանիներին պահելու համար:

«Լիազոր մարմիններ»՝ Կողմերի պետական մարմիններ և հաստատություններ, որոնք գործունեություն են իրականացնում անասնաբուժության բնագավառում:

Ընդհանուր դրույթներ

Հսկողության վերցված ապրանքների ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք թույլատրվում է երրորդ երկրների այն տնտեսություններից կամ ձեռնարկություններից, որոնք ներառված են Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող, հսկողության վերցված ապրանքների արտադրություն, վերամշակում և (կամ) պահպանում իրականացնող անձանց և կազմակերպությունների ռեեստրում (այսուհետ՝ երրորդ երկրների ձեռնարկությունների ռեեստր):

Հսկողության վերցված ապրանքների տեղափոխումը մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք (այսուհետ՝ Կողմերի միջև տեղափոխում) թույլատրվում է հսկողության վերցված ապրանքների արտադրությունը, վերամշակումը, տրանսպորտային փոխադրումը և (կամ) պահպանումն իրականացնող այն կազմակերպություններին և անձանց, որոնք ներառված են մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք տեղափոխվող ապրանքների արտադրությունը, վերամշակումը, տրանսպորտային փոխադրումը և պահպանումն իրականացնող անձանց և կազմակերպությունների ռեեստրում (այսուհետ՝ Մաքսային միության ձեռնարկությունների ռեեստր):

Մաքսային միության մաքսային տարածք հսկողության վերցված վերոհիշյալ ապրանքների ներմուծումը և Կողմերի միջև տեղափոխումն իրականացվում են «Մաքսային միության մաքսային սահմանին և Մաքսային միության մաքսային տարածքում անասնաբուժական հսկողություն իրականացնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթին համապատասխան:

Հսկողության վերցված ապրանքների ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք իրականացվում է այն Կողմի լիազոր մարմնի կողմից տրված ներմուծման թույլտվության առկայության դեպքում, որի տարածք ներմուծվում է հսկողության վերցված ապրանքը, եթե սույն Պահանջներով այլ բան նախատեսված չէ: Չի պահանջվում ստանալ Կողմերի լիազոր մարմինների թույլտվությունները Մաքսային միության միասնական մաքսային տարածքում հսկողության վերցված ապրանքների տեղափոխման դեպքում:

Մաքսային միության մաքսային տարածք հսկողության վերցված ապրանքների ներմուծումը երրորդ երկրներից իրականացվում է ուղարկող երկրի իրավասու մարմնի կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի առկայության դեպքում, եթե սույն Պահանջներով այլ բան նախատեսված չէ:

Կողմերի լիազոր մարմինները կարող են երկկողմանի կարգով երրորդ երկրների իրավասու մարմինների հետ համաձայնեցնել Մաքսային միության միասնական մաքսային տարածք ներմուծվող, հսկողության վերցված ապրանքների անասնաբուժական սերտիֆիկատների ձևանմուշները: Նշված անասնաբուժական սերտիֆիկատների ձևանմուշները Մաքսային միության հանձնաժողով են ուղարկվում՝ դրանք Մաքսային միության մաքսային սահմանով անցակետեր կամ Կողմերի օրենսդրությամբ սահմանված այլ վայրեր փոխանցելու համար:

Հսկողության վերցված ապրանքները մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք են փոխադրվում (եթե սույն Պահանջներով այլ բան նախատեսված չէ) Կողմերի լիազոր մարմինների կողմից տրվող ուղեկցող անասնաբուժական սերտիֆիկատի հետ միասին՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի կողմից հաստատվող միասնական ձևերի:

Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող և (կամ) Կողմերի միջև տեղափոխվող կենդանիները պետք է նույնականացվեն անհատական կամ խմբային եղանակով: Թույլատրվում է չնույնականացված կենդանիների ներմուծումը՝ տնային պայմաններում, հավաքածուներում, կենդանաբանական այգիներում, կրկեսներում պահելու համար՝ որպես փորձարարական կենդանիներ օգտագործելու նպատակով:

Երրորդ երկրներից ներմուծվող և (կամ) Կողմերի միջև տեղափոխվող մթերատու կենդանիները չպետք է ստանան որոճող կենդանիների բաղադրիչներ պարունակող կերեր՝ բացառությամբ այն բաղադրիչների, որոնց օգտագործումը թույլատրվում է ՄԱԲ-ի Ցամաքային կենդանիների սանիտարական կանոններով (այսուհետ՝ ՄԱԲ-ի Կանոններով):

Երրորդ երկրներից ներմուծվող և (կամ) Կողմերի միջև տեղափոխվող մթերատու կենդանիները չպետք է ենթարկվեն բնական կամ սինթետիկ էստրոգեն,

հորմոնալ նյութերի և թիրեոստատիկ պատրաստուկների ազդեցությանը՝ բացառությամբ կանխարգելիչ և բուժիչ միջոցառումների:

Կենդանիները երրորդ երկրներից ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում, կախված կենդանիների հիվանդությունների մասով անասնահամաճարակային վիճակից այն երկրի վարչական տարածքում (տնտեսությունում), որտեղից իրականացվում է ներմուծումը (տեղափոխումը), ներմուծվող (տեղափոխվող) կենդանիները կարող են պատվաստվել կամ չպատվաստվել սույն Պահանջներում նշված կենդանիների հիվանդությունների դեմ: Կենդանիների պատվաստում իրականացնելու անհրաժեշտությունը որոշվում է այն Կողմի լիազոր մարմնի կողմից, որի տարածք ներմուծվում, տեղափոխվում են կենդանիները, եթե սույն Պահանջներով այլ բան նախատեսված չէ:

Երրորդ երկրներից ներմուծվող կամ Կողմերի միջև տեղափոխվող կենդանիները կարանտինացվում են ուղարկողի երկրում և ստացողի երկրում: Կարանտինացման անհրաժեշտությունը, տևողությունը և պայմանները սահմանվում են այն Կողմի լիազոր մարմնի կողմից, որի տարածք ծրագրվում է ներմուծել կենդանիները:

Երրորդ երկրների տարածքում կենդանիների կարանտինացման ժամանակ իրականացվող ախտորոշիչ հետազոտություններն անցկացվում են ՄԱԲ-ի կողմից առաջարկվող մեթոդներով և եղանակներով, եթե այլ բան նախատեսված չէ այն Կողմի լիազոր մարմնի կողմից, որի տարածք ծրագրվում է ներմուծել կենդանիները: Եթե կարանտինացման ժամանակահատվածում ախտորոշիչ հետազոտությունների արդյունքներով կենդանիների մոտ ի հայտ գան դրական (շճաբանական, ալերգիկ և այլն) ռեակցիաներ, ապա Կողմի լիազոր մարմինն իրավունք ունի հրաժարվելու կարանտինացվող կենդանիների ամբողջ խմբաքանակի ներմուծումից կամ կարանտինացվող այն կենդանիների ներմուծումից, որոնց մոտ ի հայտ են եկել այդ ռեակցիաները:

Սույն Պահանջներով նախատեսված հիվանդություններից պաշտոնապես զերծ երրորդ երկրներից Մաքսային միության մաքսային տարածք կենդանիների ներմուծման դեպքում այդ կենդանիների ախտորոշիչ հետազոտությունները տվյալ

հիվանդությունների մասով կարող են չանցկացվել ուղարկողի երկրում: Այդ մասին որոշումն ընդունվում է այն Կողմի լիազոր մարմնի կողմից, որի տարածք իրականացվում է կենդանիների ներմուծումը:

Կողմերի միջև կենդանիներին տեղափոխելիս իրականացվող դրանց կարանտինացման դեպքում ախտորոշիչ հետազոտություններն անցկացվում են «Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտների համատեղ ստուգումներ անցկացնելու և ապրանքների (արտադրանքի) փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթով սահմանված կարգով: Եթե ուղարկողի երկրի տարածքում հետազոտությունների ընթացքում ստացվել են ախտորոշիչ հետազոտությունների դրական կամ կասկածելի արդյունքներ, ապա դրա մասին անհապաղ տեղեկացվում է ստացողի երկրի լիազոր մարմինը: Եթե ստացման երկրի տարածքում հետազոտությունների ընթացքում ստացվել են ախտորոշիչ հետազոտությունների դրական կամ կասկածելի արդյունքներ, ապա դրա մասին անհապաղ տեղեկացվում է ուղարկողի երկրի իրավասու մարմինը:

Կենդանիները կարող են ենթարկվել էկտո-, էնդոմակարույծների դեմ մշակման, ինչի մասին անասնաբուժական սերտիֆիկատում կատարվում է համապատասխան գրառում:

Երրորդ երկրներից ներմուծվող և (կամ) Կողմերի միջև տեղափոխվող, հսկողության վերցված ապրանքներին ներկայացվող պահանջների մասով, որոնք սահմանված չեն սույն Միասնական պահանջներով, կիրառվում են այն Կողմի ազգային օրենսդրությամբ սահմանված պահանջները, որի տարածք ներմուծվում և (կամ) տեղափոխվում է հսկողության վերցված ապրանքը: Մաքսային միության տարածք կարող են ներմուծվել և Մաքսային միության տարածքով կարող են տեղափոխվել կենդանիների համար այնպիսի դեղամիջոցներ, ախտորոշման համակարգեր, մակարույծների դեմ կենդանիների մշակման միջոցներ և կենդանիների համար կերային հավելումներ, որոնք ընդգրկված են կենդանիների համար գրանցված դեղամիջոցների, ախտորոշման համակարգերի, մակարույծների

դեմ կենդանիների մշակման միջոցների և կենդանիների համար կերային հավելումների ռեեստրում:

Հսկողության վերցված ապրանքները երրորդ երկրներից ներմուծելու և մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք տեղափոխելու դեպքում դրանց փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոցները պետք է մշակվեն և նախապատրաստվեն ուղարկողի երկրում ընդունված կանոններին համապատասխան:

Գլուխ 1

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք տոհմային և օգտագործվող խոշոր եղջերավոր անասուններ ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել առողջ տոհմային և օգտագործվող խոշոր եղջերավոր անասուններ, որոնք պատվաստված չեն բրուցելոզի, դաբաղի, լեպտոսպիրոզի դեմ և ծագում են կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից, այդ թվում՝

– խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպատիայից՝ գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում նշված հիվանդության աննշան կամ վերահսկվող ռիսկով՝ ՄԱԲ–ի Կանոնների առաջարկներին համապատասխան,

– դաբաղից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– խոշոր եղջերավոր անասունների կոնտագիոզ պլևրոպնեմոնիայից, բշտային ստոմատիտից, բլուտանգից, ժանտախտից՝ վերջին 24 ամիսների ընթացքում

գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– վարակիչ հանգուցային դերմատիտից՝ վերջին 3 տարիների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– լեյկոզից՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– բրուցելոզից, տուբերկուլոզից և պարատուբերկուլոզից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– լեպտոսպիրոզից՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– սիբիրախտից՝ վերջին 20 օրերի ընթացքում տնտեսության տարածքում:

Կենդանիները չպետք է ստանան որոճող կենդանիների սպիտակուց պարունակող կերեր՝ բացառությամբ ՄԱԲ–ի Կանոններով առաջարկվող նյութերի:

Կարանտինի ժամանակ անցկացվում է կենդանիների կլինիկական զննում՝ ամենօրյա ջերմաչափմամբ, ինչպես նաև բրուցելոզի, տուբերկուլոզի, պարատուբերկուլոզի, լեյկոզի, տրիխոմոնոզի, կամպիլոբակտերիոզի, խլամիդիոզի, լեպտոսպիրոզի և ներմուծողի պահանջով՝ ինֆեկցիոն այլ հիվանդությունների ախտորոշիչ հետազոտություններ:

Տոհմային կենդանիների մասով լրացուցիչ անցկացվում են խոշոր եղջերավոր անասունների ինֆեկցիոն ռինոտրախետի և վիրուսային դիարեայի հետազոտություններ (եթե կենդանիները նախապես պատվաստված չեն եղել):

Գլուխ 2

ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք արտադրող ցուլերի սերմնահեղուկ ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել արտադրող ցուլերի սերմնահեղուկը, որն ստացվել է առողջ կենդանիներից արհեստական սերմնավորման ձեռնարկություններում:

Սերմնահեղուկը պետք է լինի այնպիսի տարածքներում տեղակայված ձեռնարկությունների ծագման, որոնք զերծ են կենդանիների վարակիչ հիվանդություններից, այդ թվում՝

- դաբադից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտից, բլուտանգից, կոնտագիոզ պլևրոպնևմոնիայից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- բրուցելոզից, տուբերկուլոզից, պարատուբերկուլոզից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- ինֆեկցիոն ռինոտրախետիտից, վիրուսային դիարեայից, տրիխոմոնոզից, կամպիլոբակտերիոզից, լեյկոզից՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- լեպտոսպիրոզից՝ 3 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- սիբիրախտից՝ վերջին 20 օրերի ընթացքում տնտեսության տարածքում:

Արտադրող ցուլերը չպետք է ստանան որոճող կենդանիների սպիտակուց պարունակող կերեր՝ բացառությամբ ՄԱԲ-ի Կանոններով առաջարկվող նյութերի:

Արտադրող ցույերը արհեստական սերմնավորման ձեռնարկությունում պետք է պահվեն 6 ամիս շարունակ՝ նախքան սերմնահեղուկ վերցնելը, և այդ ժամանակահատվածի ընթացքում չպետք է օգտագործվեն բնական սերմնավորման համար:

Արտադրող ցույերը արհեստական սերմնավորման ձեռնարկությունում չպետք է պահվեն մանր եղջերավոր անասունների հետ համատեղ:

Արտադրող ցույերի սերմնահեղուկը վերցնելուց 30 օր առաջ նրանց հետազոտում են տուբերկուլոզի, պարատուբերկուլոզային էնտերիտի, բրուցելոզի, լեպտոսպիրոզի, լեյկոզի, բլուտանգի, ինֆեկցիոն ռինոտրախետիտի, վիրուսային դիարեայի, տրիխոմոնոզի, կամպիլոբակտերիոզի, խլամիդիոզի և ներմուծողի պահանջով՝ ինֆեկցիոն այլ հիվանդությունների համար:

Սերմնահեղուկում չպետք է պարունակվեն ախտածին և թունածին միկրոօրգանիզմներ:

Սերմնահեղուկը պետք է ընտրվի, պահվի և տրանսպորտային եղանակով տեղափոխվի՝ ՄԱԲ-ի Կանոնների առաջարկներին համապատասխան:

Գլուխ 3

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք խոշոր եղջերավոր անասունների սաղմեր ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել առողջ տոհմային կենդանիներից ստացված սաղմերը:

Արտադրող ցույերը պետք է պահվեն արհեստական սերմնավորման ձեռնարկությունում, իսկ սաղմերի դոնոր կովերը՝ մատակարարի կենտրոններում, կետերում, ֆերմաներում, որոնք զերծ են կենդանիների վարակիչ

հիվանդություններից, նախքան սերմնահեղուկը կամ սաղմերն ստանալը 6 ամսից ոչ պակաս:

Սերմնահեղուկը, որով սերմնավորված են դոնոր կովերը, պետք է համապատասխանի սույն Պահանջներին:

Դոնոր կովերը պետք է տնտեսությունում գտնվեն վերջին 60 օրերի ընթացքում՝ նախքան սաղմերի ընտրության գործողությունը, և շփում չունենան վերջին 12 ամիսների ընթացքում երկիր ներմուծված այլ կենդանիների հետ:

Սաղմերը պետք է լինեն այն երկրի կամ վարչական տարածքի ծագման, որը զերծ է կենդանիների վարակիչ հիվանդություններից, այդ թվում՝

- բլուտանգից՝ վերջին 24 ամիսների ընթացքում, որոնք նախորդում են սաղմերի ընտրության գործողությունների մեկնարկին,

- խոշոր եղջերավոր անասունների բշտային ստոմատիտից, կոնտագիոզ պլևրոպնեմոնիայից, ժանտախտից՝ վերջին 24 ամիսների ընթացքում,

- դաբաղից՝ վերջին 12 ամիսների ընթացքում:

Խոշոր եղջերավոր անասունների սաղմերն ստացող տնտեսությունները պետք է զերծ լինեն վարակիչ հիվանդություններից, այդ թվում՝

- բրուցելլոզից, տուբերկուլոզից, պարատուբերկուլոզից՝ վերջին 6 ամիսների ընթացքում,

- լեյկոզից՝ վերջին 12 ամիսների ընթացքում,

- ինֆեկցիոն ռինոտրախետիտից, վիրուսային դիարեայից, տրիխոմոնոզից, կամպիլոբակտերիոզից, խլամիդիոզից՝ վերջին 12 ամիսների ընթացքում,

- լեպտոսպիրոզից՝ վերջին 3 ամիսների ընթացքում,

- սիբիրախտից՝ վերջին 20 օրերի ընթացքում:

Կենդանիները չպետք է ստանան որոճող կենդանիների սպիտակուց պարունակող կերեր՝ բացառությամբ ՄԱԲ-ի Կանոններով առաջարկվող նյութերի:

Սաղմերի ստացման համար օգտագործվող դոնոր կովերը և այն արտադրող ցուլերը, որոնց սերմնահեղուկն օգտագործվում է կովերի սերմնավորման համար, պարբերաբար ենթարկվում են կլինիկական և ախտորոշման հետազոտությունների՝ տուբերկուլոզի, պարատուբերկուլոզի, բրուցելոզի, լեպտոսպիրոզի, լեյկոզի, բլուտանգի, վիրուսային դիարեայի, ինֆեկցիոն ռինոտրախետի, տրիխոմոնոզի, կամպիլոբակտերիոզի, խլամիդիոզի և ներմուծողի պահանջով՝ ինֆեկցիոն այլ հիվանդությունների համար:

Սաղմերն ստանալուց հետո դոնոր կովերը և արտադրող ցուլերն առնվազն 30 օր պետք է գտնվեն անասնաբույժների հսկողության տակ: Այդ ժամանակահատվածում կենդանիների մոտ սույն Պահանջներում նշված ինֆեկցիոն հիվանդությունները հայտնաբերելու դեպքում Մաքսային միության մաքսային տարածք սաղմերի ներմուծումը կամ այդ տարածքով տեղափոխումը դադարեցվում է:

Սաղմերը և այն միջավայրը, որում դրանք գտնվում են, պետք է զերծ լինեն ախտածին և թունածին միկրոօրգանիզմներից:

Սաղմերը պետք է ընտրվեն, պահվեն և տրանսպորտային եղանակով տեղափոխվեն՝ ՄԱԲ-ի Կանոնների առաջարկներին համապատասխան:

Գլուխ 4

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք սպանդային խոշոր եղջերավոր անասուններ, ոչխարներ և այծեր ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել առողջ սպանդային խոշոր եղջերավոր անասուններ, ոչխարներ և այծեր, որոնք պատվաստված չեն բրուցելոզի, լեպտոսպիրոզի և

ոչխարների և այծերի ծաղկի դեմ և ծագում են կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից, այդ թվում՝

- խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպատիայից և ոչխարների սկրեյպիից՝ գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ նշված հիվանդության աննշան կամ վերահսկվող ռիսկով՝ ՄԱԲ-ի Կանոնների առաջարկներին համապատասխան,

- Վիսնա-մաեդիից, ադենոմատոզից, արտրիտ-էնցեֆալիտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- դաբադից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խոշոր և մանր եղջերավոր անասունների կոնտագիոզ պլևրոպնեմոնիայից, խոշոր եղջերավոր անասունների բշտային ստոմատիտից, բլուտանգից, ժանտախտից՝ վերջին 24 ամիսների ընթացքում երկրի տարածքում,

- մանր եղջերավոր անասունների ժանտախտից, նոդուլյար մաշկաբորբից՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- տուբերկուլոզից, բրուցելլոզից, պարատուբերկուլոզից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- ոչխարների և այծերի ծաղկից՝ վերջին 6 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- լեյկոզից՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- լեպտոսպիրոզից՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- սիբիրախտից՝ վերջին 20 օրերի ընթացքում տնտեսության տարածքում:

Կենդանիները չպետք է ստանան որոճող կենդանիների սպիտակուց պարունակող կերեր՝ բացառությամբ ՄԱԲ–ի Կանոններով առաջարկվող նյութերի:

Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող և (կամ) Կողմերի միջև տեղափոխվող կենդանիները չպետք է ենթարկվեն բնական կամ սինթետիկ էստրոգեն, հորմոնալ նյութերի և թիրեոստատիկ պատրաստուկների ազդեցությանը՝ բացառությամբ կանխարգելիչ և բուժիչ միջոցառումների:

Մաքսային միության մաքսային սահմանով կամ Մաքսային միության տարածքով տեղափոխվող կենդանիներն առնվազն 21 օր պետք է պահվեն կարանտինի մեջ, որի ընթացքում անցկացվում են կենդանիների ջերմաչափում և բրուցելոզի ու տուբերկուլոզի ախտորոշիչ հետազոտություններ:

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Մաքսային միության տարածքով տեղափոխել այն կենդանիներին, որոնց համար ախտորոշիչ հետազոտությունների ժամանակ գրանցվել են բացասական արդյունքներ:

Կենդանիները պետք է միս ստանալու համար սպանդի ենթարկվեն նշանակման կետ հասնելուց հետո՝ 72 ժամից ոչ ուշ:

Գլուխ 5

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք տոհմային և օգտագործվող ոչխարներ և այծեր ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել առողջ տոհմային ոչխարներ և այծեր, որոնք պատվաստված չեն բրուցելոզի դեմ և ծագում են կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից, այդ թվում՝

- խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպատիայից և ոչխարների սկրեյպիից՝ գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ նշված հիվանդության աննշան կամ վերահսկվող դիսկով՝ ՄԱԲ-ի Կանոնների առաջարկներին համապատասխան,

- Վիսնա-մաեդիից, ադենոմատոզից, արտրիտ-էնցեֆալիտից, սահմանային հիվանդությունից, մանր որոճողների ժանտախտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- դաբադից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտից, բլուտանգից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- ոչխարների և այծերի ծաղկից՝ վերջին 6 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- տուբերկուլոզից, պարատուբերկուլոզից, բրուցելոզից, ինֆեկցիոն ազալակտիայից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- լիստերիոզից, ինֆեկցիոն մաստիտից, կամպիլոբակտերիոզից, ինֆեկցիոն էպիդիդիմիտից՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- լեպտոսպիրոզից, ինֆեկցիոն պլևրոպնևմոնիայից՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- սիբիրախտից՝ վերջին 20 օրերի ընթացքում տնտեսության տարածքում:

Կենդանիները չպետք է ստանան որոճող կենդանիների սպիտակուց պարունակող կերեր՝ բացառությամբ ՄԱԲ-ի Կանոններով առաջարկվող նյութերի:

Կարանտինի ժամանակ անցկացվում է կենդանիների կլինիկական զննում՝ ամենօրյա ջերմաչափմամբ, ինչպես նաև բրուցելոզի, ինֆեկցիոն էպիդիդիմիտի,

տուբերկուլոզի, լեպտոսպիրոզի, բլուտանգի, պարատուբերկուլոզի, խլամիդիոզի, Վիսնա-մաեդիի, ադենոմատոզի, արտրիտ-էնցեֆալիտի, լիստերիոզի և ներմուծողի պահանջով՝ ինֆեկցիոն այլ հիվանդությունների ախտորոշիչ հետազոտություններ:

Գլուխ 6

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք արտադրող նոխազների, խոյերի սերմնահեղուկ ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել արտադրող նոխազների, խոյերի սերմնահեղուկը, որն ստացվել է առողջ կենդանիներից արհեստական սերմնավորման այն ձեռնարկություններում, որոնցում բրուցելոզի դեմ կենդանիների պատվաստում չի իրականացվել:

Սերմնահեղուկը պետք է լինի այնպիսի տարածքներում տեղակայված ձեռնարկությունների ծագման, որոնք զերծ են կենդանիների վարակիչ հիվանդություններից, այդ թվում՝

– Վիսնա-մաեդիից, ադենոմատոզից, այծերի արտրիտ-էնցեֆալիտից, սահմանային հիվանդությունից, մանր որոճողների ժանտախտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– խոշոր եղջերավոր անասունների ժանտախտից, բլուտանգից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– դաբաղից, Քյու-տենդից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– տուբերկուլոզից, պարատուբերկուլոզից, ոչխարների ծաղկից, ինֆեկցիոն ազալակտիայից, բրուցելոզից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– էնզոոտիկ վիժումից (խլամիդիոզ)՝ վերջին 24 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– ինֆեկցիոն մաստիտից, կամպիլոբակտերիոզից, ոչխարների և այծերի ինֆեկցիոն էպիդիդիմիտից՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– լեպտոսպիրոզից, ինֆեկցիոն պլերոպնևմոնիայից՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– սիբիրախտից՝ վերջին 20 օրերի ընթացքում տնտեսության տարածքում:

Արտադրող նոխազները, խոյերը չպետք է ստանան որոճող կենդանիների սպիտակուց պարունակող կերեր՝ բացառությամբ ՄԱԲ-ի Կանոններով առաջարկվող նյութերի:

Արտադրող նոխազները, խոյերն արհեստական սերմնավորման ձեռնարկությունում պետք է պահվեն 6 ամիս շարունակ նախքան սերմնահեղուկ վերցնելը և այդ ժամանակահատվածի ընթացքում չպետք է օգտագործվեն բնական սերմնավորման համար:

Արտադրող նոխազները, խոյերն արհեստական սերմնավորման ձեռնարկությունում չպետք է պահվեն խոշոր եղջերավոր անասունների հետ համատեղ:

Արտադրող նոխազների, խոյերի սերմնահեղուկը վերցնելուց 30 օր առաջ նրանց հետազոտում են տուբերկուլոզի, բրուցելոզի, էպիդիդիմիտի, լիստերիոզի, պարատուբերկուլոզի, խլամիդիոզի, Վիսնա-մաեդիի, ադենոմատոզի, այծերի արտրիտ-էնցեֆալիտի և բլուտանգի, ինֆեկցիոն ազալակտիայի, լեպտոսպիրոզի և ներմուծողի պահանջով՝ ինֆեկցիոն այլ հիվանդությունների համար:

Սերմնահեղուկում չպետք է պարունակվեն ախտածին և թունածին միկրոօրգանիզմներ:

Սերմնահեղուկը պետք է ընտրվի, պահվի և տրանսպորտային եղանակով տեղափոխվի՝ ՄԱԲ–ի Կանոնների առաջարկներին համապատասխան:

Գլուխ 7

ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք տոհմային և օգտագործվող խոզեր ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել առողջ տոհմային խոզեր, որոնք ծագում են կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից, այդ թվում՝

- խոզերի աֆրիկական ժանտախտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- դաբադից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խոզերի բշտային հիվանդությունից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խոզերի դասական ժանտախտից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- Աուեսկի հիվանդությունից՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– տրիխինելլոզից, տուբերկուլոզից, բրուցելլոզից, խոզերի ռեպրոդուկտիվ-ռեսպիրատոր սինդրոմից, խոզերի տեղաճարակային էնցեֆալոմիելիտից (Տեշենի հիվանդությունից)՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– լեպտոսպիրոզից՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– սիբիրախտից՝ վերջին 20 օրերի ընթացքում տնտեսության տարածքում:

Կարանտինի ժամանակ անցկացվում է կենդանիների կլինիկական զննում՝ ամենօրյա ջերմաչափմամբ, ինչպես նաև խոզերի դասական ժանտախտի, խոզերի ռեպրոդուկտիվ-ռեսպիրատոր սինդրոմի, բրուցելլոզի, Աուեսկի հիվանդության, խլամիդիոզի, վիրուսային տրանսմիսիվ գաստրոէնտերիտի, տուբերկուլոզի, խոզերի բշտային հիվանդության, պարվովիրուսային վարակի, ասորոֆիկ ռինիտի, խոզերի գրիպի, լեպտոսպիրոզի և ներմուծողի պահանջով՝ ինֆեկցիոն այլ հիվանդությունների ախտորոշիչ հետազոտություններ:

Գլուխ 8

ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք արու խոզերի սերմնահեղուկ ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել արու խոզերի սերմնահեղուկը, որն ստացվել է արհեստական սերմնավորման այն ձեռնարկություններում, որտեղ բրուցելլոզի և լեպտոսպիրոզի դեմ կենդանիների պատվաստում չի իրականացվել:

Սերմնահեղուկը պետք է լինի այնպիսի տարածքներում տեղակայված ձեռնարկությունների ծագման, որոնք զերծ են կենդանիների վարակիչ հիվանդություններից, այդ թվում՝

- խոզերի աֆրիկական ժանտախտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- դաբաղից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խոզերի բշտային հիվանդությունից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խոզերի դասական ժանտախտից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- Աուեսկի հիվանդությունից՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- տուբերկուլոզից, բրուցելլոզից, խոզերի ռեպրոդուկտիվ-ռեսպիրատոր սինդրոմից, խոզերի տեղաճարակային էնցեֆալոմիելիտից (Տեշենի հիվանդությունից)՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- լեպտոսպիրոզից՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- սիբիրախտից՝ վերջին 20 օրերի ընթացքում տնտեսության տարածքում:

Արտադրող արու խոզերը, որոնցից ստանում են սերմնահեղուկը, արհեստական սերմնավորման ձեռնարկությունում պետք է պահվեն 6 ամիս շարունակ նախքան սերմնահեղուկ վերցնելը և այդ ժամանակահատվածի ընթացքում չպետք է օգտագործվեն բնական սերմնավորման համար:

Արու խոզերի սերմնահեղուկը վերցնելուց 30 օր առաջ նրանց հետազոտում են խոզերի դասական ժանտախտի, տուբերկուլոզի, բրուցելլոզի, խոզերի գրիպի, լեպտոսպիրոզի, Աուեսկի հիվանդության, խոզերի բշտային հիվանդության, խոզերի ռեպրոդուկտիվ-ռեսպիրատոր սինդրոմի, ատրոֆիկ ռինիտի, պարվովիրուսային վարակի, վիրուսային տրանսմիսիվ գաստրոէնտերիտի, խլամիդիոզի և ներմուծողի

պահանջով՝ ինֆեկցիոն այլ հիվանդությունների ախտորոշիչ հետազոտությունների համար:

Արու խոզերի սերմնահեղուկում չպետք է պարունակվեն ախտածին և թունածին միկրոօրգանիզմներ:

Սերմնահեղուկը պետք է ընտրվի, պահվի և տրանսպորտային եղանակով տեղափոխվի՝ ՄԱԲ-ի Կանոնների առաջարկներին համապատասխան:

Գլուխ 9

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք սպանդային խոզեր ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել կլինիկապես առողջ սպանդային խոզեր կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից, այդ թվում՝

– խոզերի աֆրիկական ժանտախտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– դաբադից, խոզերի բշտային հիվանդությունից, խոզերի դասական ժանտախտից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– Աուեսկի հիվանդությունից՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– տրիխինելլոզից, տուբերկուլոզից, բրուցելլոզից, խոզերի ռեպրոդուկտիվ-ռեսպիրատոր սինդրոմից, խոզերի տեղաճարակային էնցեֆալոմիելիտից (Տեշենի հիվանդությունից)՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- լեպտոսպիրոզից՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- սիբիրախտից՝ վերջին 20 օրերի ընթացքում տնտեսության տարածքում:

Կենդանիները Մաքսային միության տարածքում պետք է միս ստանալու համար սպանդի ենթարկվեն նշանակման կետ հասնելուց հետո՝ 72 ժամից ոչ ուշ:

Գլուխ 10

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք տոհմային, օգտագործվող և սպորտային ձիեր ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում (բացառությամբ մրցումներին մասնակցելու համար սպորտային ձիերի)

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել միայն առողջ ձիեր:

Ձիերը չպետք է պատվաստված լինեն ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտների բուլոր տիպերի, ձիերի աֆրիկական ժանտախտի դեմ և պետք է լինեն կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տարածքների ծագման, այդ թվում՝

- ձիերի ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտների բուլոր տիպերից, ձիերի ժանտախտից, բշտային ստոմատիտից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խլնախտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- ձիերի գրիպից՝ վերջին 21 օրերի ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– զուգավորման հիվանդությունից, սուրուից՝ վերջին 6 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան տնտեսության տարածքում կամ վարչական տարածքում,

– ձիերի ինֆեկցիոն մետրիտից՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– ինֆեկցիոն անեմիայից՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– վիրուսային արտերիտից՝ ՄԱԲ–ի Կանոնների առաջարկներին համապատասխան,

– նուտտալիոզից (բաբեզիա Էկվի), պիրոպլազմոզից (բաբեզիա Կաբանի)՝ ուղարկելուց առաջ՝ վերջին 30 օրերի ընթացքում, տիզերից զերծ տնտեսություններում,

– ձիերի ծաղկից, քոսից, լեպտոսպիրոզից՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– էպիզոոտիկ լիմֆանգիտից՝ վերջին 2 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– ռինոպնևմոնիայից՝ վերջին 21 օրերի ընթացքում տնտեսության տարածքում,

– սիբիրախտից՝ վերջին 20 օրերի ընթացքում տնտեսության տարածքում:

Կարանտինի ժամանակ անցկացվում է կենդանիների կլինիկական զննում՝ ամենօրյա ջերմաչափմամբ, ինչպես նաև խլնախտի, զուգավորման հիվանդության, սուրուի (տրիպանոսոմա Էվանսի), պիրոպլազմոզի (բաբեզիա Կաբանի), նուտտալիոզի (բաբեզիա Էկվի), ռինոպնևմոնիայի, անապլազմոզի, ինֆեկցիոն մետրիտի, ինֆեկցիոն անեմիայի, վիրուսային արտերիտի, բշտային ստոմատիտի, բրուցելոզի, տուբերկուլոզի, լեպտոսպիրոզի և ներմուծողի պահանջով՝ ինֆեկցիոն այլ հիվանդությունների ախտորոշիչ հետազոտություններ:

Նախքան ուղարկելը 3 ամսվանից ոչ ուշ կենդանիները պետք է ակտիվազրկված պատվաստանյութով պատվաստվեն ձիերի գրիպի դեմ:

Գլուխ 11

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք մրցումներին մասնակցելու համար սպորտային ձիեր ժամանակավորապես ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Մրցումներին մասնակցելու համար ձիերի ժամանակավոր ներմուծումը Մաքսային միության տարածք իրականացվում է 90 օրը չգերազանցող ժամկետով:

Այդ ձիերը նշված ժամկետում արտահանելու անհնարինության դեպքում դրանց նկատմամբ կիրառվում են անասնաբուժության բնագավառում Մաքսային միության նորմատիվ ակտերով սահմանված պահանջները:

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել առողջ ձիեր, որոնք պատվաստված չեն ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտների բուլոր տիպերի, ձիերի աֆրիկական ժանտախտի դեմ և ծագում են կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից, այդ թվում՝

– ձիերի ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտների բուլոր տիպերից՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում պահվել են հսկողության տակ,

– ձիերի ժանտախտից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում կամ վերջին 40 օրերի ընթացքում պահվել են գոտիավորմանը համապատասխան այդ երկրի տարածքում կամ այդ վարչական տարածքում,

– խլնախտից՝ վերջին 3 տարիների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- զուգավորման հիվանդությունից՝ վերջին 2 տարիների ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- ձիերի գրիպից՝ վերջին 21 օրերի ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- ռինոպնևմոնիայից՝ վերջին 21 օրերի ընթացքում տնտեսության տարածքում,

- վիրուսային արտերիտից՝ երկրի տարածքում՝ ՄԱԲ-ի Կանոնների պահանջներին համապատասխան,

- ինֆեկցիոն անեմիայից՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- ձիերի ինֆեկցիոն մետրիտից՝ ՄԱԲ-ի Կանոնների պահանջներին համապատասխան,

- էպիզոոտիկ լիմֆանգիտից՝ վերջին 2 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- սիբիրախտից՝ վերջին 20 օրերի ընթացքում տնտեսության տարածքում:

Ձիերը Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում պետք է հետազոտվեն խլնախտի, զուգավորման հիվանդության և ինֆեկցիոն անեմիայի համար, ինչպես նաև նախքան ուղարկելը 3 ամսվանից ոչ ուշ պետք է ակտիվազրկված պատվաստանյութով պատվաստվեն ձիերի գրիպի դեմ:

Տարբեր երկրներից ներմուծված ձիերը գտնվելու ամբողջ ժամանակահատվածում պահվում են մեկուսացված՝ բացի սպորտային մրցումներին անմիջական մասնակցություն ունեցողներից:

Սպորտային միջոցառումների ավարտից հետո ձիերը ենթակա են Մաքսային միության մաքսային տարածքից պարտադիր արտահանման առանց լրացուցիչ հետազոտությունների և մշակման՝ այն ծագման երկրի անասնաբուժական սերտիֆիկատի համաձայն, որտեղից դրանք ներմուծվել են Մաքսային միության մաքսային տարածք:

Թույլատրվում է սպորտային ձիերի ներմուծումն ուղեկցող միջազգային անձնագրի հետ միասին, որը, տվյալ դեպքում սույն գլխի նպատակներից ելնելով, համարժեք է անասնաբուժական սերտիֆիկատին:

Գլուխ 12

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք տոհմային հովատակների սերմնահեղուկ ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել հովատակների սերմնահեղուկը, որն ստացվել է արհեստական սերմնավորման ձեռնարկություններում:

Սերմնահեղուկը պետք է լինի այնպիսի տարածքներում տեղակայված ձեռնարկությունների ծագման, որոնք զերծ են կենդանիների վարակիչ հիվանդություններից, այդ թվում՝

– ձիերի ժանտախտից, զուգավորման հիվանդությունից, բշտային ստոմատիտից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– խլնախտից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– ձիերի գրիպից՝ վերջին 21 օրերի ընթացքում տնտեսության տարածքում,

– ձիերի ինֆեկցիոն մետրիտից՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– վիրուսային արտերիտից՝ ՄԱԲ–ի Կանոնների պահանջներին համապատասխան,

- լեպտոսպիրոզից, տուբերկուլոզից, բրուցելոզից, զուգավորման հիվանդությունից, սուրուից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- ինֆեկցիոն անեմիայից՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- էպիզոտիկ լիմֆանգիտից՝ վերջին 2 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- ձիերի գրիպից՝ վերջին 21 օրերի ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում:

Արտադրող հովատակները նախքան սերմնահեղուկ վերցնելը առնվազն 6 ամիս պետք է գտնվեն արհեստական սերմնավորման ձեռնարկություններում և չպետք է օգտագործվեն բնական սերմնավորման համար:

Արտադրող հովատակները չպետք է պատվաստված լինեն ռինոպնևմոնիայի, ձիերի ժանտախտի և ինֆեկցիոն մետրիտի դեմ:

Հովատակների սերմնահեղուկը վերցնելուց 30 օր առաջ նրանց հետազոտում են զուգավորման հիվանդության, սուրուի, ռինոպնևմոնիայի, ինֆեկցիոն մետրիտի, ինֆեկցիոն անեմիայի, վիրուսային արտերիտի, բշտային ստոմատիտի, բրուցելոզի, տուբերկուլոզի, լեպտոսպիրոզի համար:

Սերմնահեղուկում չպետք է պարունակվեն ախտածին և թունածին միկրոօրգանիզմներ:

Սերմնահեղուկը պետք է ընտրվի, պահվի և տրանսպորտային եղանակով տեղափոխվի՝ ՄԱԲ-ի Կանոնների առաջարկներին համապատասխան:

Գլուխ 13

ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք սպանդային ձիեր ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել կլինիկապես առողջ սպանդային ձիեր՝ կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից, այդ թվում՝

- խլնախտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- ձիերի ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտների բոլոր տիպերից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- վիրուսային արտերիիտից՝ գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ՄԱԲ-ի Կանոնների առաջարկների հիման վրա,

- ձիերի ժանտախտից, բշտային ստոմատիտից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- զուգավորման հիվանդությունից, սուրուից՝ վերջին 6 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան տնտեսությունում կամ վարչական տարածքում,

- ինֆեկցիոն անեմիայից՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- սիբիրախտից՝ վերջին 20 օրերի ընթացքում տնտեսության տարածքում:

Կարանտինի ժամանակ անցկացվում են կլինիկական զննում՝ ամենօրյա ջերմաչափմամբ, և խլնախտի, զուգավորման հիվանդության, ինֆեկցիոն անեմիայի ախտորոշիչ հետազոտություններ:

Կենդանիները Մաքսային միության տարածքում միս ստանալու համար ենթակա են սպանդի՝ նշանակման կետ հասնելուց հետո՝ 72 ժամից ոչ ուշ:

Սպանդից առաջ ձիերը պետք է հետազոտվեն խլնախտի համար. սպանդի են ուղարկվում միայն այն կենդանիները, որոնց մոտ գրանցվել է բացասական ռեակցիա:

Գլուխ 14

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք օրական ճտեր, հնդկահավերի ճտեր, սագիկներ, բադիկներ, ջայլամների ձագեր և թռչունների այդ տեսակների ինկուբացիոն ձվեր ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել կլինիկապես առողջ ճտեր, հնդկահավերի ճտեր, սագիկներ, բադիկներ, ջայլամների ձագեր և թռչունների այդ տեսակների ինկուբացիոն ձվեր, որոնք ծագում են կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից, այդ թվում՝

– թռչունների գրիպից՝ վերջին 6 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան վարչական տարածքում,

– թռչունների Նյուկասյան հիվանդությունից՝ վերջին 6 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան տնտեսությունում կամ վարչական տարածքում,

– սալմոնելոզից՝ ՄԱԲ–ի Կանոնների առաջարկին համապատասխան:

Դրանցից՝

հավաքուծական և հնդկահավաքուծական տնտեսությունները՝

– օրնիտոզից (պսիտտակոզից), պարամիկսովիրուսային վարակից, հավերի ինֆեկցիոն բրոնխիտից, ինֆեկցիոն լարինգոտրախետիտից, ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտից, հնդկահավերի ռինոտրախետիտից, Գամբորո հիվանդությունից, սպիրոխետոզից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում.

սագաքուծական և բադաքուծական տնտեսությունները՝

– օրնիտոզից, Դերժիի հիվանդությունից, բադիկների վիրուսային հեպատիտից, բադերի ժանտախտից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսությունում.

ջայլամաքուծական տնտեսությունները՝

– վենետուելյան էնցեֆալիտից, կոնգո-դրիմյան տենդից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– Ռիֆտ հովտի տենդից՝ վերջին 48 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– օրնիտոզից (պսիտտակոզից), թռչունների ծաղկից, թռչունների տուբերկուլոզից, պաստերելոզից, պարամիքսովիրուսային վարակներից, ինֆեկցիոն հիդրոպերիկարդիտից, ցիստիցերկոզներից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսությունում,

– սիբիրախտից՝ վերջին 20 օրերի ընթացքում տնտեսության տարածքում:

Մայրական հոտը պետք է ապահովված լինի վերոհիշյալ հիվանդություններից:

Բացի դրանից, հավերի և հնդկահավերի մայրական հոտը պետք է հետազոտվի շճաբանական (սերոլոգիական) մեթոդով պուլորոզային հակածնի համար՝ բացասական արդյունքով:

Օրական ճտերը պետք է պատվաստվեն Մարեկի հիվանդության դեմ:

Ինկուբացիոն ձվերը պետք է ստացված լինեն վերոնշյալ անասնաբուժական պահանջներին համապատասխանող թռչուններից:

Ինկուբացիոն ձվերը պետք է կրկնակի վարակազերծվեն անվերջ հետո՝ երկու ժամից ոչ ուշ, և ուղարկվելուց անմիջապես առաջ:

Ինկուբացիոն ձվերը և ճտերը պետք է ուղարկվեն մեկանգամյա օգտագործման տարայով:

Գլուխ 15

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք մորթատու կենդանիներ, ճագարներ, շներ և կատուներ ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել կլինիկապես առողջ մորթատու կենդանիներ, ճագարներ, շներ և կատուներ՝ կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից, այդ թվում՝

ա) կենդանիների բոլոր տեսակների համար.

– վիրուսային էնցեֆալոմիելիտների բոլոր տիպերից, տրիպանոսոմոզից (Չագասի հիվանդություն)՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– սիբիրախտից՝ վերջին 20 օրերի ընթացքում տնտեսության տարածքում.

բ) աղվեսների, բևեռաղվեսների, շների և կատուների համար.

– Աուեսկի հիվանդությունից, տուլյարեմիայից, դերմատոֆիտոզներից (տրիխոֆիտայից, միկրոսպորիայից)՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան տնտեսությունում կամ վարչական տարածքում,

– կատաղությունից, տուբերկուլոզից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսությունում կամ վարչական տարածքում.

գ) ջրաքիսների և ժանտաքիսների համար.

– ջրաքիսների էնցեֆալոպատիայից, ալեուսյան հիվանդությունից՝ վերջին 36 ամիսների ընթացքում տնտեսությունում,

– տուլյարեմիայից՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսությունում,

– կատաղությունից, տուբերկուլոզից՝ վերջին 6 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան տնտեսությունում կամ վարչական տարածքում.

դ) ճագարների համար.

– վիրուսային հեմոռագիկ հիվանդությունից, տուլյարեմիայից, պաստերելոզից, լիստերիոզից՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսությունում,

– միքսոմատոզից, ուլտերի ծաղկից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում:

Կարանտինի ժամանակ անցկացվում են հետևյալ կենդանիների գլխաքանակի կլինիկական զննում և ախտորոշիչ հետազոտություններ՝

– աղվեսներ, բևեռաղվեսներ, ջրաքիսներ և շներ՝ տոքսոպլազմոզի համար,

– ջրաքիսներ՝ ալեուսյան հիվանդության համար,

– կատուներ՝ դերմատոֆիտոզի համար:

Ուղարկելուց առաջ՝ 14 օրվանից ոչ ուշ, կենդանիներին պատվաստում են, եթե նրանք վերջին 6 ամիսների ընթացքում չեն պատվաստվել՝

– աղվեսներ, բևեռաղվեսներ՝ մսակերների ժանտախտի դեմ,

– ջրաքիսներ և ժանտաքիսներ՝ բոտուլիզմի, մսակերների ժանտախտի, պսևդոնոմոզի, վիրուսային էնտերիտի դեմ,

– ճահճակուղբեր՝ պաստերելոզի դեմ,

- շներ՝ կատաղության, մսակերների ժանտախտի, հեպատիտի, վիրուսային էնտերիտի, պարվո- և ադենովիրուսային վարակների, լեպտոսպիրոզի դեմ,

- կատուներ՝ կատաղության և պանլեյկոպենիայի դեմ,

- ճագարներ՝ միքսոմատոզի, պաստերելոզի և վիրուսային հեմոռագիկ հիվանդության դեմ, ինչպես նաև ներմուծողի պահանջով՝ ինֆեկցիոն այլ հիվանդությունների դեմ:

Թույլատրվում է ներմուծել անձնական օգտագործման համար փոխադրվող շներ և կատուններ՝ 2 գլխից ոչ ավելի քանակով, առանց ներմուծման թույլտվության, ուղեկցող միջազգային անձնագրի հետ միասին, որը տվյալ դեպքում համարժեք է անասնաբուժական սերտիֆիկատին:

Գլուխ 16

ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք վայրի, գազանանոցային և կրկեսային կենդանիներ ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել կլինիկապես առողջ վայրի, գազանանոցային, կրկեսային կենդանիներ (կաթնասուններ, թռչուններ, ձկներ, երկկենցաղներ, սողուններ), որոնք ծագում են կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից կամ ջրային տարածքներից, այդ թվում՝

ա) կենդանիներ, որոնք ընկալունակ են կենդանիների հետևյալ հիվանդությունների նկատմամբ՝

- դաբաղ՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– խոշոր եղջերավոր անասունների ժանտախտ՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– խոզերի աֆրիկական ժանտախտ՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– բլուտանգ՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– լեպտոսպիրոզ՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսությունում,

– սիբիրախտ՝ վերջին 20 օրերի ընթացքում տնտեսությունում,

– տարբեր ծագման հեմոռագիկ տենդ՝ վերջին 6 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– թռչունների գրիպ՝ վերջին 6 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան վարչական տարածքում,

– գրիպի այլ վիրուսներ՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսությունում,

– օրնիտոզ (պսիտտակոզ), ինֆեկցիոն բրոնխիտ, ծաղիկ, ռեովիրուսային վարակ և հնդկահավերի ռինոտրախետիտ՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– Նյուկասյան հիվանդություն՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան վարչական տարածքում կամ տնտեսությունում.

բ) խոշոր երկկճղակավորների համար (խոշոր եղջերավոր անասուններ, վայրի ցուլեր (զուբրեր), գոմեշներ, զեբու, եզնուղտ (յակեր), այծքաղներ (անտիլոպներ), ընձուղտներ, հյուսիս-ամերիկյան վայրի ցուլեր (բիզոններ), եղջերուներ (եղնիկներ) և այլն), որոնք ընկալունակ են կենդանիների հետևյալ հիվանդությունների նկատմամբ՝

- խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպատիա և ոչխարների սկրեյպի՝ գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ նշված հիվանդության աննշան կամ վերահսկվող դիսկով՝ ՄԱԲ-ի Կանոնների առաջարկներին համապատասխան,

- խոշոր եղջերավոր անասունների վարակիչ հանգուցային մաշկաբորբ (պալարախտ)՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան տարածքում կամ վարչական տարածքում,

- Ռիֆտ հովտի տենդ՝ վերջին 48 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- մանր որոճողների ժանտախտ՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- եղջերուների էպիզոոտիկ հեմոռագիկ հիվանդություն, Ակաբանե հիվանդություն, բշտային ստոմատիտ, կոնտագիոզ պլևրոպնևմոնիա՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- Աուեսկի հիվանդություն՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- բրուցելոզ, տուբերկուլոզ, պարատուբերկուլոզ՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- լեյկոզ, վիրուսային դիարեա՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում.

գ) մանր երկկճղակավորների համար (ոչխարներ, այծեր, եղնիկներ (լաներ), քարայծեր (տուրեր), վայրի ոչխարներ (մուֆլոններ), այծեղջուրներ (վայրի քարայծեր), այծյամներ և այլն), որոնք ընկալունակ են հետևյալ հիվանդությունների նկատմամբ՝

– Ռիֆտ հովտի տենդ՝ վերջին 48 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– մանր որոճողների ժանտախտ՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– եղջերուների էպիզոոտիկ հեմոռագիկ հիվանդություն՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– խոշոր եղջերավոր անասունների ժանտախտ՝ վերջին 24 ամիսների ընթացքում երկրի տարածքում (վարչական տարածքում՝ գոտիավորմանը համապատասխան),

– Քյու-տենդ՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– Վիսնա-մաեդի, ադենոմատոզ, արտրիտ-էնցեֆալիտ, սահմանային հիվանդություն՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– պարատուբերկուլոզ՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսությունում,

– սկրեյպի՝ վերջին 7 տարիների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– տուբերկուլոզ, բրուցելոզ՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսությունում,

– ոչխարների և այծերի ծաղիկ՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

դ) միասնականիների համար (ծիեր, ավանակներ, ջորիներ, պոնիներ, զեբրեր, կուլաններ, Պրժևալսկու ձիեր, կիանգներ և այլն)՝

– ձիերի ժանտախտ՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտների բոլոր տեսակներ՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– վիրուսային արտերիիտ՝ երկրի տարածքում՝ ՄԱԲ-ի Կանոնների պահանջներին համապատասխան,

– խլնախտ՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– զուգավորման հիվանդություն, սուրու (տրիպանոսոմա Էվանսի), պիրոպլազմոզ (բաբեզիա Կաբանի), նուտտալիոզ (բաբեզիա Էկվի)՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան վարչական տարածքում,

– կատաղություն՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– ձիերի ինֆեկցիոն մետրիտ՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում.

Ծանոթագրություն. ձիերի ներմուծման դեպքում անհրաժեշտ է ղեկավարվել «Մաքսային միության մաքսային տարածք տոհմային, օգտագործվող և սպորտային ձիեր (բացառությամբ մրցումներին մասնակցելու համար սպորտային ձիերի) ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում անասնաբուժական պահանջների» 10-րդ գլխի պահանջներով.

ե) ընտանի և վայրի խոզերի (պեկարներ) համար՝

– խոզերի աֆրիկական ժանտախտ՝ 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– խոզերի դասական ժանտախտ՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– խոզերի բշտային հիվանդություն, բշտային ստոմատիտ՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– Աուեսկի հիվանդություն՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան տնտեսությունում կամ վարչական տարածքում,

– խոզերի տեղաճարակային էնցեֆալոմիելիտ (Տեշենի հիվանդություն)՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– խոզերի ռեպրոդուկտիվ-ռեսպիրատոր սինդրոմ՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում.

զ) մսակերների համար՝

– մսակերների ժանտախտ, վիրուսային էնտերիտ, տոքսոպլազմոզ, ինֆեկցիոն հեպատիտ՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– կատաղություն՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– տոպյարեմիա՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

է) ջրլող թռչունների համար՝

– Դերժիի հիվանդություն, բադերի ժանտախտ, բադիկների վիրուսային հեպատիտ՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում.

ը) կրծողների համար՝

– Ռիֆտ հովտի տենդ՝ վերջին 48 ամիսների ընթացքում երկրի տարածքում,

– տոպյարեմիա՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– Աուեսկի հիվանդություն՝ ՄԱԲ-ի Կանոնների պահանջներին համապատասխան,

- միքսոմատոզ, ճագարների վիրուսային հեմոռագիկ հիվանդություն, լիմֆոցիտար խորեոմենինգիտ՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- տոքսոպլազմոզ՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում.

թ) մաշկոտանիների, կետանմանների համար՝

- փոկերի ժանտախտ (մորբիլի վիրուսային վարակներ), բշտային էկզանտեմա՝ վերջին 36 ամիսների ընթացքում դրանց բնակության (ծագման) վայրերում.

ժ) փղերի, ընծուղտների, օկապիների, գետածիերի, ռնգեղջյուրների, տապիրների, կիսաատամնավորների և խողովակաատամնավորների, միջատակերների, պարկավորների, չղջիկների, ջրարջակերների (ջրարջեր, պանդաներ, կոատիներ, կակոմիցլիներ) և այլ էկզոտիկ տեսակների համար՝

- Ռիֆտ հովտի տենդ՝ վերջին 48 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- վենետուելյան էնցեֆալոմիելիտ՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- նոդուլյար մաշկաբորբ՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- ձիերի աֆրիկական ժանտախտ, Աուեսկի հիվանդություն, ջրաքիսների տրանսմիսիվ էնցեֆալոմիելիտ, լեպրա, լիմֆոցիտար խորեոմենինգիտ, տիֆ և բժավոր տիֆ՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- Ռիֆտ հովտի տենդ՝ վերջին 48 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- կատաղություն՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– տույյարեմիա՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում:

Կարանտինացման ընթացքում անցկացվում են հետևյալ կենդանիների ախտորոշիչ հետազոտություններ.

ա) խոշոր երկկճղակավորներ՝ բրուցելոզի, տուբերկուլոզի, պարատուբերկուլոզի, լեյկոզի, բլուտանգի համար,

բ) մանր երկկճղակավորներ՝ բրուցելոզի, պարատուբերկուլոզի, բլուտանգի համար,

գ) միասնբականիներ՝ խլնախտի, զրգավորման հիվանդության, սուրուի (տրիպանոսոմա Էվանսի), պիրոպլազմոզի (բաբեզիա Կաբանի), նուտտալիոզի (բաբեզիա Էկվի), անապլազմոզի, ռինոպնևմոնիայի, ինֆեկցիոն մետրիտի, ինֆեկցիոն անեմիայի, վիրուսային արտերիտի համար,

դ) մսակերներ՝

– շներ, գայլեր, շնագայլեր, աղվեսներ, բևեռաղվեսներ, ջրաքիսներ, բորենիներ՝ տոքսոպլազմոզի համար,

– ջրաքիսներ՝ ալեուտյան հիվանդության համար,

ե) թռչուններ (թութակներ, աղավնիներ)՝ օրնիտոզի (պսիտտակոզ), թռչունների գրիպի, Նյուկասյան հիվանդության համար:

Բեռնելուց առաջ՝ 20 օրվանից ոչ ուշ, կենդանիներին պատվաստում են, եթե նրանք վերջին 6 ամիսների ընթացքում չեն պատվաստվել.

– բոլոր մսակերները պատվաստվում են կատաղության դեմ,

– շներ, աղվեսներ, բևեռաղվեսներ, գայլեր, շնագայլեր՝ մսակերների ժանտախտի և պսևդոնոմոզի դեմ,

– ջրաքիսներ, ժանտաքիսներ՝ վիրուսային էնտերիտի դեմ,

– ճահճակուղբեր՝ պաստերելոզի դեմ,

– կատվազգիներ՝ կատաղության, պանլեյկոպենիայի և վիրուսային ռինոտրախետի դեմ,

– կրծողներ (ճագարներ)՝ միքսոմատոզի և վիրուսային հեմոռագիկ հիվանդության դեմ,

– թռչուններ (հավազգիներ)՝ Նյուկասյան հիվանդության դեմ:

Ներմուծողի պահանջով կարող են նախատեսվել պատվաստումներ՝ այլ հիվանդությունների դեմ:

Գլուխ 17

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք կենդանի ձուկ, բեղմնավորված ձկնկիթ, ջրային կենդանիներ, խեցգետնակերպեր, կակղամորթներ, անողնաշարավորներ և այլ հիդրոբիոնտներ ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել առողջ հիդրոբիոնտներ (ձուկ, բեղմնավորված ձկնկիթ, ջրային կենդանիներ, խեցգետնակերպեր, գորտեր, կակղամորթներ, անողնաշարավորներ և այլն), որոնք աճեցվել կամ արդյունահանվել են էկոլոգիապես մաքուր ջրամբարներում (ջրային տարածքներում) և ծագում են ՄԱԲ–ի Ջրային կենդանիների սանիտարական կանոններով նախատեսված՝ կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տնտեսություններից և վարչական տարածքներից:

Չի թույլատրվում Մաքսային միության տարածք ներմուծել (Tetraodontidae, Molidae, Diodontidae և Canthigasteridae) ընտանիքների թունավոր ձկներ, ինչպես նաև մարդու առողջության համար վտանգավոր բիոտոքսիններ (Ciguatera) պարունակող ձկներ:

Երկփեղկ կակղամորթները, փշամորթները, թաղանթավորները և ծովային փորոտանիները (այսուհետ՝ կակղամորթներ) մաքրման կենտրոններում պետք է անցնեն անհրաժեշտ պահման գործընթաց: Արտադրողի երկրում պետք է ստեղծվի կակղամորթներում ֆիկոտոքսինների հսկողության համակարգ: Կակղամորթներում ֆիկոտոքսինների և այլ աղտոտիչների պարունակության մակարդակը չպետք է գերազանցի թույլատրելի նորմերը:

Հիդրոբիոնտները մատակարարվում են մեկանգամյա օգտագործման տարայով:

Գլուխ 18

ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք մեղրատու մեղուներ, իշամեղուներ և առվույտի տերևահատ մեղուներ ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել առողջ իշամեղուների և մեղուների ընտանիքներ, դրանց մայրեր և մեղրածրարներ, առվույտի տերևահատ մեղուների թրթուրներ (բոժոժներ), որոնք ծագում են արտահանող երկրների և Մաքսային միության՝ հետևյալ հիվանդություններից զերծ, ապահով տնտեսություններից (մեղվանոցներից, լաբորատորիաներից) և վարչական տարածքներից.

մեղրատու
մեղուների համար՝
ակարապիդոզից,
տրոպիլելապսոզից, Aethina tumida բզեզից, եվրոպական
փտախտից,
փտախտից,
նոզեմատոզից,
վարրոատոզից
(ակարիցիդների նկատմամբ կայուն տիզերի տեսակների
առկայությունը)՝ վերջին 24 ամիսների ընթացքում և

մեղունների այլ վարակիչ հիվանդություններից՝ վերջին 8 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան վարչական տարածքում կամ տնտեսությունում.

իշամեղունների լոկուստակարոզից, կրիտիդիոզից, ասպերգիլոզից, համար՝ սֆերուլյարիոզից, սուր վիրուսային պարալիչից, քաշմիր-վիրուսից, էնտոպոքս-վիրուսից և բուժման համար նախատեսված շինություններում՝ ծաղկափոշում զարգացող տիզերի բացակայության դեպքում, ինչպես նաև մելիտոբիաներից, բրակոնիդներից, չրերի՝ չորացրած մրգերի հրաթիթեռից (*Vitula edmandsae*)՝ վերջին 24 ամիսների ընթացքում.

առվույտի տերևահատ ասկոֆերոզից, բակտերիոզներից և բոժոժների մեղունների առավելագույնը 0,05% խալցիդամիներով (մելիտոբիայով, թրթուրների համար՝ պտերոմալյուսով, մոնոդոնտոմերով, տետրաստիխուսով, դիբրախիսով), կրետներով, ճանճաբզեզներով, կկվամեղուններով ախտահարվածության դեպքում՝ բոժոժների հավաքման տարում:

Իշամեղունների և մեղունների ընտանիքներն ընտրվում են Մաքսային միության մաքսային տարածք կամ Կողմի տարածք ուղարկելուց 30 օր, իսկ մայրերը՝ 1-3 օր առաջ:

Առվույտի տերևահատ մեղունների բոժոժների ապրանքախմբերը ձևավորվում են՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մատակարարի տնտեսության ապահովությունը:

Փոխադրման համար կիրառվում են առաջին անգամ օգտագործվող բեռնարկեր և փաթեթավորման նյութ:

Փոխադրման ընթացքում օգտագործվող կերերը պետք է լինեն մեղունների և իշամեղունների վարակիչ հիվանդությունների առումով ապահով տեղանքներից

(վարչական տարածքներից) և շփում չունենան հիվանդ մեղուների, իշամեղուների հետ:

Իշամեղուները, մեղրատու մեղուները և մայրերը, առվույտի տերևահատ մեղուները փոխադրման համար փաթեթավորման նյութում տեղավորելուց առաջ այն ենթարկում են կանխարգելիչ դեզինֆեկցիայի և դեզակարիզացիայի:

Գլուխ 19

ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք հյուսիսային եղջերուներ ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել կլինիկապես առողջ հյուսիսային եղջերուներ, որոնք պատվաստված չեն բրուցելոզի դեմ և ծագում են կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տնտեսություններից կամ տարածքներից, այդ թվում՝

- խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպատիայից և ոչխարների սկրեյպից՝ երկրի տարածքում՝ ՄԱԲ-ի Կանոնների պահանջներին համապատասխան,

- խոշոր եղջերավոր անասունների բշտային ստոմատիտից, կոնտագիոզ պլլրոպանևմոնիայից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- դաբաղից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– բշտային ստոմատիտից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– մանր որոճողների ժանտախտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– լեյկոզից՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– բրուցելոզից, տուբերկուլոզից և պարատուբերկուլոզից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– լեպտոսպիրոզից՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– սիբիրախտից՝ վերջին 20 օրերի ընթացքում տնտեսության տարածքում:

Թույլատրվում է ներմուծել այնպիսի կենդանիներ, որոնք չեն ստացել որոճող կենդանիների սպիտակուց պարունակող կերեր՝ բացառությամբ ՄԱԲ–ի համաձայն թույլատրվածների:

Կարանտինի ժամանակ անցկացվում են բրուցելոզի, նեկրոբակտերիոզի, տուբերկուլոզի և ներմուծողի պահանջով՝ ինֆեկցիոն այլ հիվանդությունների ախտորոշիչ հետազոտություններ:

Գլուխ 20

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք ուղտեր և ուղտազգի այլ ներկայացուցիչներ (լամա, ալպակա, վիկունյա) ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել կլինիկապես առողջ ուղտեր և ուղտազգի այլ ներկայացուցիչներ, որոնք ծագում են գոտիավորմանը համապատասխան ապահով

տնտեսություններից և տարածքներից, այդ թվում՝ ընկալունակ կենդանիների համար.

- ձիերի աֆրիկական ժանտախտից, ուղտերի ժանտախտից (զոոնանտրոպոնոզային ժանտախտից), նոդուլյար մաշկաբորբից՝ վերջին 36 ամիսների ընթացքում երկրի տարածքում,

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- ուղտերի ծաղկից՝ վերջին 6 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- բլուտանգից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- դաբաղից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խլնախտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- բրուցելոզից, տուբերկուլոզից, պարատուբերկուլոզից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- լեպտոսպիրոզից՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- սիբիրախտից՝ վերջին 20 օրերի ընթացքում տնտեսության տարածքում:

Թույլատրվում է ներմուծել այնպիսի կենդանիներ, որոնք չեն ստացել որոճող կենդանիների սպիտակուց պարունակող կերեր՝ բացառությամբ ՄԱԲ-ի համաձայն թույլատրվածների:

Կարանտինի ժամանակ ուղտանմանների համար անցկացվում են բլուտանգի, խլնախտի, սուրուի, տուբերկուլոզի, պարատուբերկուլոզի, բրուցելոզի, կոնտագիոզ

պլևրոպնևմոնիայի, ձիերի աֆրիկական ժանտախտի ախտորոշիչ հետազոտություններ:

Գլուխ 21

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք պրիմատներ ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել առողջ պրիմատներ: Կենդանիները պետք է լինեն կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տնտեսությունների ծագման, այդ թվում՝

– Ռիֆտ հովտի տենդից, տույլարեմիայից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– տնտեսություններում և վարչական տարածքներում, որոնցից արտահանվում են պրիմատները, երբեք չեն գրանցվել մարդկանց և (կամ) կենդանիների հեմոռագիկ տենդերի դեպքեր (Լասսա, Էբոլա և Մարբուրգ և այլն), կապիկների ծաղիկ, մարդկանց ժանտախտ:

Մաքսային միության տարածք ուղարկելու համար ընտրված կենդանիներն ստացողի երկրի տարածքում առնվազն 30 օր պահվում են հատուկ կարանտինային բազաներում: Կարանտինի ժամանակ անցկացվում է գլխաքանակի կլինիկական զննում՝ պարտադիր ջերմաչափմամբ: Այդ ընթացքում անցկացվում են ախտորոշիչ հետազոտություններ.

– հեմոռագիկ տենդերի (Լասսա, Էբոլա, Մարբուրգ, Դենգե, դեղին տենդ, ՄԻԱՎ, լիմֆատիկ խորեոմենինգիտ), հեպատիտի A, B, C տեսակների, կապիկների ծաղիկ, B հերպեսի հարուցիչների նկատմամբ հակամարմինների առկայության,

– էնտերոբակտերիաների խմբի հարուցիչների առկայության՝ էշերիխայի, սալմոնելաների, շիգելլի, կամպիլոբակտերիաների, լեպտայի, ռիկետսիաների, բորելիոզի.

– տուբերկուլոզի առկայության:

Գլուխ 22

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք միս և այլ սննդային մսային հումք ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել միս և այլ սննդային մսային հումք, որոնք ստացվել են առողջ կենդանիների սպանդից և վերամշակումից՝ սպանդային, մսի վերամշակման ձեռնարկություններում:

Մաքսային միության տարածք արտահանելու համար նախատեսված կենդանիները, միսը և այլ սննդային մսային հումքը ենթակա են նախասպանդային անասնաբուժական զննման, իսկ դրանց մսեղիքը, գլուխները և ներքին օրգանները՝ հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության: Միսը և այլ սննդային մսային հումքը պետք է համարվեն պիտանի՝ մարդու սննդի մեջ օգտագործելու համար:

Մսեղիքը (կիսամսեղիքը, քառորդամասերը) պետք է ունենան պետական անասնաբուժական վերահսկողության պարզորոշ դրոշմ՝ այն մսի կոմբինատի (մսի սառցասպանդանոցի) անվանման կամ համարի նշումով, որտեղ իրականացվել է կենդանիների սպանդը: Մասնատված միսը փաթեթվածքի կամ կիսաբլոկի վրա պետք է ունենա մականշվածք (անասնաբուժական դրոշմ): Մականշված պիտակը պետք է փաթեթվածքի վրա փակցված լինի այնպես, որ անհնար լինի փաթեթվածքը բացել առանց մականշված պիտակի ամբողջականությունը խախտելու:

Միսը և այլ սննդային մսային հումքը պետք է ստացված լինեն առողջ կենդանիների սպանդից, որոնք մթերվել են կենդանիների հիվանդություններից պաշտոնապես զերծ՝ գոտիավորմանը համապատասխան տնտեսություններում կամ վարչական տարածքում, այդ թվում՝

ա) կենդանիների բոլոր տեսակների համար՝

– դաբադից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– սիբիրախտից՝ վերջին 20 օրերի ընթացքում տնտեսության տարածքում.

բ) խոշոր եղջերավորներ անասուններ՝

– խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպատիայից և ոչխարների սկրեյպից՝ երկրի տարածքում՝ ՄԱԲ–ի Կանոնների պահանջներին համապատասխան,

– խոշոր եղջերավոր անասունների ժանտախտից, կոնտագիոզ պլևրոպնեմոնիայից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

– տուբերկուլոզից, բրուցելլոզից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

– լեյկոզից՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսությունում.

գ) ոչխարներ և այծեր՝

– խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպատիայից և ոչխարների սկրեյպից՝ երկրի տարածքում՝ ՄԱԲ–ի Կանոնների առաջարկներին համապատասխան,

– բլուտանգից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- մանր որոճողների ժանտախտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- ադենոմատոզից, Վիսնա-մաեդիից, արտրիտ-էնցեֆալիտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- ոչխարների և այծերի ծաղկից, տուբերկուլոզից, բրուցելլոզից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում.

դ) խոզեր՝

- խոզերի աֆրիկական ժանտախտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խոզերի բշտային հիվանդությունից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խոզերի դասական ժանտախտից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- Աուեսկի հիվանդությունից՝ երկրի տարածքում՝ ՄԱԲ-ի Կանոնների առաջարկներին համապատասխան,

- խոզերի տեղաճարակային էնցեֆալոմիելիտից (Տեշենի հիվանդությունից)՝ վերջին 6 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- տրիխինելլոզից՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- խոզերի ռեպրոդուկտիվ-ռեսպիրատոր սինդրոմից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում:

Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու համար թույլատրվում են՝

- մսեղիքը, որի համար տրիխինելլոզի հետազոտությունների համաձայն գրանցվել է բացասական արդյունք,

- միսը և տավարի ու ոչխարի մսից այլ սննդային մսային հումքը, որոնք ստացվել են որոճող կենդանիների սպիտակուց պարունակող, կենդանական ծագման կերեր չստացած կենդանիների սպանդից՝ բացառությամբ ՄԱԲ-ի Կանոններով առաջարկվող նյութերի:

Չի թույլատրվում Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել այնպիսի միս և մսեղիքից ստացված այլ սննդային մսային հումք, որոնք՝

- հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության համաձայն՝ ունեն դաբաղին, ժանտախտին, անաէրոբ ինֆեկցիաներին, տուբերկուլոզին, լեյկոզին և վարակիչ այլ հիվանդություններին բնորոշ փոփոխություններ, ախտահարված են հելմինթներով (ցիստիցերկոզ, տրիխինելլոզ, սարկոսպորիդիոզ, օնխոցերկոզ, էխինոկոզ և այլն), ինչպես նաև տարբեր նյութերով թունավորումների դեպքում,

- պահման ժամանակ ենթարկվել են դեֆրոստացիայի (հալեցման),

- ունեն փչացման նշաններ,

- ազդրի մկանների շերտում ունեն Յելսիուսի սանդղակով – 8-ից բարձր ջերմաստիճան սառեցրած մսի դեպքում և Յելսիուսի սանդղակով + 4-ից բարձր ջերմաստիճան՝ պաղեցրած մսի դեպքում,

- ներքին օրգանների մնացորդներով են, հյուսվածքների արնազեղումներով, չհեռացրած թարախակույտերով, բոռերի թրթուրներով, մաքրված շճաթաղանթով և

հեռացրած ավշահանգույցներով, մեխանիկական խառնուրդներով, ինչպես նաև մսին ոչ բնորոշ գույնով, հոտով, համով (ձկան, դեղամիջոցների, խոտերի և այլն),

– պարունակում են պահածոյացման միջոցներ,

– ախտոտված են սալմոնելաներով կամ մանրէաբանական այլ վարակների հարուցիչներով,

– մշակված են ներկող նյութերով:

Մսի և այլ սննդային մսային հումքի միկրոկենսաբանական, ֆիզիկաքիմիական, քիմիաթունաբանական և ռադիոլոգիական ցուցանիշները պետք է համապատասխանեն Մաքսային միության տարածքում սահմանված անասնաբուժական և սանիտարական կանոններին և պահանջներին:

Գլուխ 23

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք թռչնամիս ներմուծելու և (կամ)

Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել սպանդային ձեռնարկություններում առողջ թռչունների սպանդից ստացված և թռչնամսի վերամշակման ձեռնարկություններում վերամշակված թռչնամիս:

Մաքսային միության տարածք արտահանելու համար նախատեսված թռչնամիսը ենթակա է նախասպանդային անասնաբուժական զննման, իսկ ստացված մսեղիքը և օրգանները՝ հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության:

Թռչնամիսը պետք է համարվի պիտանի՝ մարդու սննդի մեջ օգտագործելու համար, փաթեթվածքի կամ կիսաբլոկի վրա ունենա մականշվածք

(անասնաբուժական դրոշմ): Մակնշված պիտակը պետք է փաթեթվածքի վրա փակցված լինի այնպես, որ անհնար լինի փաթեթվածքը բացել առանց մակնշված պիտակի ամբողջականությունը խախտելու:

Թռչնամիսը պետք է ստացված լինի առողջ թռչունների սպանդից՝ գոտիավորմանը համապատասխան այն տնտեսություններից և վարչական տարածքից, որոնք պաշտոնապես զերծ են վարակիչ հիվանդություններից, այդ թվում՝

ա) ՄԱԲ–ի Կանոններին համապատասխան՝ պարտադիր հայտարարագրման ենթակա գրիպից՝ վերջին 6 ամիսների ընթացքում,

բ) գրիպի այլ վիրուսներից՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսությունում,

գ) թռչունների Նյուկասյան հիվանդությունից՝ վերջին 6 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

դ) օրնիտոզից (պսիտտակոզից)՝ հավաբուժական և հնդկահավաբուժական տնտեսությունները՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

ե) սագաբուժական և բադաբուժական տնտեսությունները՝ Դերժիի հիվանդությունից, բադիկների վիրուսային հեպատիտից, բադերի ժանտախտից, օրնիտոզից (պսիտտակոզից)՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

զ) թռչունները սպանդի են բերվում սալմոնելոզի առումով ապահով ճանաչված տնտեսություններից՝ ՄԱԲ–ի Կանոնների պահանջներին համապատասխան:

Չի թույլատրվում Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել այնպիսի թռչնամիս, որը՝

– հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության համաձայն՝ ունի վարակիչ հիվանդություններին բնորոշ փոփոխություններ, ախտահարված է հելմինթներով, ինչպես նաև տարբեր նյութերով թունավորումների դեպքում,

- փորոտիքը չհանած և կիսահանած թռչունների միս է,
- զգայորոշման (օրգանոլեպտիկ) ցուցանիշներով համարվել է անորակ,
- մկանների շերտում ունի Ցելսիուսի սանդղակով –12-ից բարձր ջերմաստիճան սառեցրած թռչնամսի դեպքում (պահպանման դեպքում ջերմաստիճանը պետք է լինի Ցելսիուսի սանդղակով –18 աստիճան),
- պարունակում է պահածոյացման միջոցներ,
- մսեղիքի մակերևույթի վրա, մկանային շերտերում կամ օրգանների հյուսվածքներում ախտոտված է սալմոնելաներով,
- մշակված է ներկող և հոտավետ նյութերով, իոնացնող ճառագայթամաբ կամ ուլտրամանուշակագույն ճառագայթներով,
- ունի մուգ պիգմենտացիա (բացի հնդկահավերից և խայտահավերից),
- փչացման նշաններ ունեցող միսը,
- այն թռչունների սպանդից ստացված միսը, որոնք ենթարկվել են բնական կամ սինթետիկ էստրոգեն, հորմոնալ նյութերի, թիրեոստատիկ պատրաստուկների, հակաբիոտիկների, թունաքիմիկատների և այլ դեղորայքային միջոցների ազդեցությանը, որոնք թռչուններին տրվել են սպանդից առաջ՝ դրանց կիրառման ցուցումներով առաջարկվող ժամկետներից ավելի ուշ:

Թռչնամսի միկրոկենսաբանական, ֆիզիկաքիմիական, քիմիաթունաբանական և ռադիոլոգիական ցուցանիշները պետք է համապատասխանեն Մաքսային միության տարածքում գործող անասնաբուժական և սանիտարական կանոններին և պահանջներին:

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք ձիու միս ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել սպանդային ձեռնարկություններում կլինիկապես առողջ ձիերի սպանդից ստացված և մսի վերամշակման ձեռնարկություններում վերամշակված ձիու միսը:

Կենդանիները ենթակա են նախասպանդային անասնաբուժական զննման (կլինիկական զննման և ակնային եղանակով միանգամյա մալենիզացիայի, որի համաձայն՝ գրանցվել է խլնախտի բացասական արդյունք), իսկ դրանց մսեղիքը, գլուխները և ներքին օրգանները՝ հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության: Միսը պետք է համարվի պիտանի՝ մարդու սննդի մեջ օգտագործելու համար:

Ձիերի մսեղիքը պետք է ունենա պետական անասնաբուժական վերահսկողության դրոշմ՝ այն մսի կոմբինատի անվանման կամ համարի նշումով, որտեղ իրականացվել է կենդանիների սպանդը: Մասնատված միսը փաթեթվածքի կամ կիսաբլոկի վրա պետք է ունենա մականշվածք (անասնաբուժական դրոշմ): Մականշված պիտակը պետք է փաթեթվածքի վրա փակցված լինի այնպես, որ անհնար լինի փաթեթվածքը բացել առանց մականշված պիտակի ամբողջականությունը խախտելու:

Ձիու միսը պետք է ստացված լինի այն տնտեսություններում մթերված կենդանիներից, որոնք պաշտոնապես զերծ են կենդանիների հիվանդություններից, այդ թվում՝

- ձիերի աֆրիկական ժանտախտից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- ինֆեկցիոն անեմիայից՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- խլնախտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- էպիզոոտիկ լիմֆանգիտից՝ վերջին 2 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- սիրբիրախտից՝ 20 օրերի ընթացքում տնտեսության տարածքում:

Չի թույլատրվում Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել այնպիսի միս, որը՝

- հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության համաձայն՝ ունի վարակիչ հիվանդություններին բնորոշ փոփոխություններ, ախտահարված է հելմինթներով, ինչպես նաև տարբեր նյութերով թունավորումների դեպքում,

- ներքին օրգանների մնացորդներով է, հյուսվածքների արնազեղումներով, չհեռացրած թարախակույտերով, բոռերի թրթուրներով, մաքրված շճաթաղանթով և հեռացրած ավշահանգույցներով, մեխանիկական խառնուրդներով, ինչպես նաև մսին ոչ բնորոշ հոտով և համով,

- ազդրի մկանների շերտում ունի Յելսիուսի սանդղակով – 8-ից բարձր ջերմաստիճան սառեցրած մսի դեպքում և Յելսիուսի սանդղակով + 4-ից բարձր ջերմաստիճան՝ պաղեցրած մսի դեպքում,

- ախտոտված է սալմոնելաներով և մանրէաբանական այլ վարակների հարուցիչներով,

- մշակված է ներկող նյութերով, իոնացնող ճառագայթամաբ կամ ուլտրամանուշակագույն ճառագայթներով,

– այն կենդանիների սպանդից ստացված միսը, որոնք ենթարկվել են այնպիսի բնական կամ սինթետիկ էստրոգեն, հորմոնալ նյութերի, թիրեոստատիկ պատրաստուկների, հակաբիոտիկների, թունաքիմիկատների և այլ դեղորայքային միջոցների ազդեցությանը, որոնք կենդանիներին տրվել են սպանդից առաջ՝ դրանց կիրառման ցուցումներով առաջարկվող ժամկետներից ավելի ուշ:

Ձիու մսի միկրոկենսաբանական, ֆիզիկաքիմիական, քիմիաթունաբանական և ռադիոլոգիական ցուցանիշները պետք է համապատասխանեն Մաքսային միության տարածքում գործող անասնաբուժական և սանիտարական կանոններին և պահանջներին:

Գլուխ 25

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք պահածոներ, երշիկեղեն և մսից այլ տեսակի պատրաստի արտադրատեսակներ ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել մսից, ենթամթերքից և բոլոր տեսակի կենդանիների, թռչունների ճարպից պատրաստի արտադրատեսակներ և այլ մսային արտադրատեսակներ, որոնք նախատեսված են մարդու կողմից սննդի մեջ օգտագործելու համար և պատրաստվել են մսի վերամշակման ձեռնարկություններում (այսուհետ՝ պատրաստի մսամթերք):

Մսի հումքը, որից պատրաստված են մսային պատրաստի արտադրատեսակները, պետք է ստացված լինի կլինիկապես առողջ կենդանիներից և անցնի անասնաբուժասանիտարական փորձաքննություն:

Երկրի՝ ՄԱԲ–ի Կանոնների պահանջներին համապատասխան կարգավիճակ ունենալու դեպքում չի թույլատրվում Մաքսային միության տարածք բեռնառաքել այն

կենդանիների սպանդից ստացված պատրաստի մսամթերքը, որոնք ենթարկվել են այնպիսի բնական կամ սինթետիկ էստրոգեն, հորմոնալ նյութերի, թիրեոստատիկ պատրաստուկների, հակաբիոտիկների, թունաքիմիկատների և այլ դեղորայքային միջոցների ազդեցությանը, որոնք կենդանիներին տրվել են սպանդից առաջ՝ դրանց կիրառման ցուցումներով առաջարկվող ժամկետներից ավելի ուշ:

Պատրաստի մսամթերքը պետք է համարվի պիտանի՝ մարդու կողմից սննդի մեջ օգտագործելու համար: Արտադրանքը փաթեթվածքի վրա պետք է ունենա մականշվածք (անասնաբուժական դրոշմ): Մականշված պիտակը պետք է կրկնօրինակված լինի Մաքսային միության պաշտոնական լեզվով և փաթեթվածքի վրա փակցված լինի այնպես, որ անհնար լինի փաթեթվածքը բացել առանց մականշված պիտակի ամբողջականությունը խախտելու:

Պատրաստի մսամթերքի միկրոկենսաբանական, քիմիաթունաբանական և ռադիոլոգիական ցուցանիշները պետք է համապատասխանեն Մաքսային միության տարածքում գործող անասնաբուժական և սանիտարական կանոններին և պահանջներին:

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել պատրաստի մսամթերք՝ հերմետիկ փակ փաթեթվածքում՝ ամբողջականությունը չխախտած տարայով:

Գլուխ 26

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք տնային ճագարների միս ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել սպանդային ձեռնարկություններում առողջ

կենդանիների սպանդից ստացված և մսի վերամշակման ձեռնարկություններում վերամշակված տնային ճագարների միսը:

Ճագարները ենթակա են նախասպանդային անասնաբուժական զննման, իսկ դրանց մսեղիքը և ներքին օրգանները՝ հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության: Ճագարների միսը պետք է համարվի պիտանի՝ մարդու կողմից սննդի մեջ օգտագործելու համար, և փաթեթվածքի վրա ունենա մականշվածք (անասնաբուժական դրոշմ): Մականշված պիտակը պետք է փաթեթվածքի վրա փակցված լինի այնպես, որ անհնար լինի փաթեթվածքը բացել առանց մականշված պիտակի ամբողջականությունը խախտելու:

Միսը պետք է ստացված լինի առողջ ճագարների սպանդից՝ գոտիավորմանը համապատասխան այն տնտեսություններից և (կամ) վարչական տարածքից, որոնք պաշտոնապես զերծ են վարակիչ հիվանդություններից, այդ թվում՝

- միքսոմատոզից, տուլյարեմիայից, պաստերելոզից, լիստերիոզից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսությունում,

- ճագարների հեմոռագիկ հիվանդությունից՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում:

Չի թույլատրվում Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել ճագարների այնպիսի միս, որը՝

- հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության համաձայն՝ ունի վարակիչ հիվանդություններին բնորոշ փոփոխություններ, ախտահարված է հելմինթներով, ինչպես նաև տարբեր նյութերով թունավորումների դեպքում,

- զգայորոշման (օրգանոլեպտիկ) ցուցանիշներով համարվել է անորակ,

- պարունակում է պահածոյացնող նյութեր (կոնսերվանտներ),

- մսեղիքի մակերևույթի վրա, մկանային շերտերում կամ օրգանների հյուսվածքներում ախտոտված է սալմոնելաներով,

– մշակված է ներկող և հոտավետ նյութերով, իոնացնող ճառագայթամամբ կամ ուլտրամանուշակագույն ճառագայթներով,

– ունի մուգ պիգմենտացիա,

– պահման ժամանակ ենթարկվել է դեֆրոստացիայի (հալեցման),

– մկանների շերտում ունի Ցելսիուսի սանդղակով –12-ից բարձր ջերմաստիճան ճագարների սառեցրած մսի դեպքում (պահպանման դեպքում ջերմաստիճանը պետք է լինի Ցելսիուսի սանդղակով –18 աստիճան),

– այն ճագարների սպանդից ստացված միսը, որոնք ենթարկվել են այնպիսի բնական կամ սինթետիկ էստրոգեն, հորմոնալ նյութերի, թիրեոստատիկ պատրաստուկների, հակաբիոտիկների, թունաքիմիկատների և այլ դեղորայքային միջոցների ազդեցությանը, որոնք կենդանիներին տրվել են սպանդից առաջ՝ դրանց կիրառման ցուցումներով առաջարկվող ժամկետներից ավելի ուշ:

Մսի միկրոկենսաբանական, ֆիզիկաքիմիական, քիմիաթունաբանական և ռադիոլոգիական ցուցանիշները պետք է համապատասխանեն Մաքսային միության տարածքում գործող անասնաբուժական և սանիտարական կանոններին և պահանջներին:

Գլուխ 27

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք խոշոր և մանր եղջերավոր անասուններից ստացված կաթ և կաթնամթերք ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել առողջ կենդանիներից ստացված կաթ և կաթնամթերք՝

կենդանիների վարակիչ հիվանդություններից պաշտոնապես զերծ տնտեսություններից, այդ թվում՝

- դաբաղից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- մանր որոճողների ժանտախտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- կոնտագիոզ պլևրոպնևմոնիայից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- լեյկոզից՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում,

- խոշոր եղջերավոր անասունների բրուցելլոզից, տուբերկուլոզից, պարատուբերկուլոզից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսությունում,

- ոչխարների և այծերի բրուցելլոզից, մանր եղջերավոր անասունների տուբերկուլոզից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսությունում,

- ոչխարների և այծերի ծաղկից՝ վերջին 6 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում:

Կաթնամթերքի արտադրության համար օգտագործվող կաթը պետք է անցնի ջերմամշակում, որը բավարար է մարդու առողջության համար վտանգ ներկայացնող ախտածին միկրոօրգանիզմների ոչնչացման համար: Մատակարարվող կաթնամթերքը պետք է ենթարկվի վերամշակման, ինչի արդյունքում պետք է երաշխավորվի կենսունակ ախտածին ֆլորայի բացակայությունը: Կաթնամթերքը համարվում է պիտանի՝ սննդի մեջ օգտագործելու համար:

Կաթի և կաթնամթերքի միկրոկենսաբանական, ֆիզիկաքիմիական, քիմիաթունաբանական և ռադիոլոգիական ցուցանիշները պետք է համապատասխանեն Մաքսային միության տարածքում գործող անասնաբուժական և սանիտարական կանոններին և պահանջներին:

Չի թույլատրվում Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել զգայորոշման փոփոխված ցուցանիշներ ունեցող կամ փաթեթվածքի խախտված ամբողջականությամբ կաթ և կաթնամթերք:

Գլուխ 28

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք վայրի կենդանիների միս ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել վայրի կենդանիների (փետրավոր որսի) միսը՝ ներառյալ այնպիսի էկզոտիկ կենդանիների, ինչպիսիք են կոկորդիլոսը, կենգուրուն, կրիան, ջայլամը և այլն, որոնց որսը թույլատրված է, այդ թվում՝ փակ տարածքում կամ դրանց բնակության վայրում աճեցվածների միսը, որն ստացվել է մսի վերամշակման ձեռնարկություններում:

Միսը պետք է ստացված լինի առողջ կենդանիների (փետրավոր որսի) և էկզոտիկ կենդանիների սպանդից, որոնք բնակվել են (պահվել են) այնպիսի որսորդական հանդակներում կամ դրանց աճեցման ձեռնարկություններում, որոնք պաշտոնապես զերծ են կենդանիների վարակիչ հիվանդություններից, այդ թվում՝

ա) կենդանիների բոլոր տեսակների համար՝

– կատաղությունից՝ գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- սիբիրախտից՝ վերջին 20 օրերի ընթացքում որսորդական հանդակի, տնտեսության տարածքներում կամ բնակության այլ վայրում.

բ) խոշոր որոճող երկկճղակավորների համար՝

- դաբաղից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խոշոր և մանր եղջերավոր անասունների կոնտագիոզ պլևրոպնևմոնիայից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտից, կոնտագիոզ պլևրոպնևմոնիայից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- մանր որոճողների ժանտախտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- հեմոռագիկ սեպտիցեմիայից՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպատիայից և ոչխարների սկրեյայից՝ երկրի տարածքում՝ ՄԱԲ-ի Կանոնների պահանջներին համապատասխան,

- բլուտանգից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խոշոր եղջերավոր անասունների վարակիչ հանգուցային մաշկաբորբից (պալարախտից)՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- Ռիֆտ հովտի տենդից՝ վերջին 4 տարիների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- պարատուբերկուլոզից՝ վերջին 3 տարիների ընթացքում տնտեսության (աճեցման ձեռնարկության), որսորդական հանդակի տարածքներում կամ բնակության այլ վայրում,

- բրուցելոզից, տուբերկուլոզից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության (աճեցման ձեռնարկության), որսորդական հանդակի տարածքներում կամ բնակության այլ վայրում,

- լեյկոզից՝ վերջին 12 ամիսների ընթացքում լեյկոզից զերծ տնտեսությունում կամ որսորդական հանդակում.

գ) մանր որոճող երկկճղակավորների համար՝

- դաբաղից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպատիայից և ոչխարների սկրեյալից՝ երկրի տարածքում՝ ՄԱԲ-ի Կանոնների պահանջներին համապատասխան,

- խոշոր եղջերավոր կենդանիների ժանտախտից, մանր որոճողների ժանտախտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- Ռիֆտ հովտի տենդից՝ վերջին 48 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- կոնտագիոզ պլերոպանմոնիայից, բլուտանգից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- Քյու-տենդից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- պարատուբերկուլոզից, արտրիտ-էնցեֆալիտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում տնտեսության (աճեցման ձեռնարկության), որսորդական հանդակի տարածքներում կամ բնակության այլ վայրում,

- Վիսնա-մաեդից՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- տուբերկուլոզից, բրուցելոզից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության (աճեցման ձեռնարկության), որսորդական հանդակի տարածքներում կամ բնակության այլ վայրում,

- ոչխարների և այծերի ծաղկից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

դ) մանր չորոճող երկկճղակավորների համար՝

- խոզերի աֆրիկական ժանտախտից՝ գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- դաբաղից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խոզերի ռեպրոդուկտիվ-ռեսպիրատոր սինդրոմից՝ վերջին 12 ամիսների ընթացքում որսորդական հանդակի տարածքում կամ բնակության այլ վայրում,

- խոզերի դասական ժանտախտից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- Աուեսկի հիվանդությունից՝ գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- խոզերի տեղաճարակային էնցեֆալոմիելիտից (Տեշենի հիվանդությունից)՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

ե) միասնբականիների համար՝

- դաբաղից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- ինֆեկցիոն անեմիայից, զուգավորման հիվանդությունից, էպիզոոտիկ լիմֆանգիտից՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսության (աճեցման ձեռնարկության), որսորդական հանդակի տարածքում կամ բնակության այլ վայրում,

- խլնախտից՝ վերջին 36 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- ձիերի ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտների բոլոր տիպերից, ինֆեկցիոն անեմիայից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- զուգավորման հիվանդությունից՝ վերջին 24 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- էպիզոոտիկ լիմֆանգիտից՝ վերջին 2 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում.

զ) ճագարների և նապաստակների համար՝

- միքսոմատոզից, տուլյարեմիայից, պաստերելոզից, լիստերիոզից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության (աճեցման ձեռնարկության), որսորդական հանդակի տարածքներում կամ բնակության այլ վայրում,

- ճագարների վիրուսային հեմոռագիկ հիվանդությունից՝ վերջին 12 ամիսների ընթացքում տնտեսությունում.

է) փետրավոր որսի (թռչունների) համար՝

- թռչունների գրիպի բոլոր շճատիպերից՝ վերջին 6 ամիսների ընթացքում երկրի տարածքում,

- թռչունների Նյուկասյան հիվանդությունից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- ծաղիկ-դիֆտերիտից, օրնիտոզից և ասպերգիլոզից, տուբերկուլոզից, բադերի ժանտախտից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության (աճեցման ձեռնարկության), որսորդական հանդակի տարածքներում կամ բնակության այլ վայրում:

Վայրի կենդանիները (փետրավոր որսը) և էկզոտիկ կենդանիները, որոնց միսը նախատեսված է Մաքսային միության տարածք արտահանելու համար, ենթակա են նախասպանդային անասնաբուժական զննման, իսկ գլուխները, ներքին օրգանները և մսեղիքը (բուլոր կենդանիների)՝ հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության:

Միսը պետք է լինի սննդի մեջ օգտագործելու համար պիտանի:

Մսի վրա պետք է լինի պետական անասնաբուժական վերահսկողության դրոշմ (կնիք)՝ մսի վերամշակման այն ձեռնարկության անվանման և համարի հստակ նշումով, որտեղ իրականացվել է վայրի կենդանիների վերամշակումը: Մասնատված միսը և այլ սննդային մսային հումքը փաթեթվածքի կամ կիսաբլոկի վրա պետք է ունենա մականշվածք (անասնաբուժական դրոշմ): Մականշված պիտակը պետք է փաթեթվածքի վրա փակցված լինի այնպես, որ անհնար լինի փաթեթվածքը բացել առանց մականշված պիտակի ամբողջականությունը խախտելու:

Մսի և այլ սննդային մսային հումքի անասնաբուժասանիտարական փորձաքննություն անցկացնելիս չպետք է հայտնաբերվեն վարակիչ հիվանդություններին բնորոշ փոփոխություններ, ինչպես նաև հելմինթներով ախտահարվածություն, չմաքրված շճաթաղանթ, չհեռացրած ավշահանգույցներ:

Կենդանիների միսը (յուրաքանչյուր մսեղիք) պետք է հետազոտվի տրիխինելլոզի համար՝ բացասական արդյունքի գրանցմամբ:

Միսը չպետք է ունենա հեմատոմաներ, չհեռացրած թարախակույտեր, բոռերի թրթուրներ, մեխանիկական աղտոտումներ, մսին ոչ բնորոշ ձկան, բուժական խոտերի, միջոցների և այլնի համ ու հոտ:

Միսը պետք է պահպանվի և տրանսպորտային եղանակով փոխադրվի՝ պահպանելով ջերմաստիճանային ռեժիմը, ազդրի մկանների շերտում ունենա

Յելսիուսի սանդղակով – 8-ից ոչ բարձր ջերմաստիճան սառեցրած մսի դեպքում (Յելսիուսի սանդղակով –18 աստիճանում պահպանելու դեպքում) և Յելսիուսի սանդղակով + 4-ից բարձր ջերմաստիճան՝ պաղեցրած մսի դեպքում. դեֆրոստացիայի ենթարկված չլինի, չպարունակի պահածոյացման միջոցներ, ախտոտված չլինի սալմոնելաներով կամ մանրէաբանական այլ վարակների հարուցիչներով, մշակված չլինի ներկող նյութերով, իոնացնող ճառագայթմամբ կամ ուլտրամանուշակագույն ճառագայթներով:

Մսի միկրոկենսաբանական, ֆիզիկաքիմիական, քիմիաթունաբանական և ռադիոլոգիական ցուցանիշները պետք է համապատասխանեն Մաքսային միության տարածքում գործող անասնաբուժական և սանիտարական կանոններին և պահանջներին:

Գլուխ 29

ԱՆԱՍՆԱՐՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք ձկից, խեցգետնակերպերից, կակղամորթներից սննդային արտադրանք, արդյունագործության այլ օբյեկտներ և դրանց վերամշակումից ստացված արտադրանք ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել ջրային կենսաբանական ռեսուրսներից ստացված արտադրանք (կենդանի, պաղեցրած, սառեցրած ձուկ, ձկնկիթ, խեցգետնակերպեր, կակղամորթներ, կաթնասուններ և ջրային այլ կենդանիներ ու արդյունագործության օբյեկտներ) (այսուհետ՝ ձկնային արտադրանք), որոնք աճեցվել կամ արդյունահանվել են էկոլոգիապես մաքուր ջրամբարներում (ջրային տարածքներում), ինչպես նաև ձեռնարկություններում դրանց վերամշակումից ստացված սննդամթերքը:

Ձկնային արտադրանքը պետք է ենթարկվի մակաբույծների, մանրէաբանական և վիրուսային վարակների առկայությունը ստուգող հետազոտության:

Թույլատրելի նորմերի սահմաններում մակաբույծների առկայության դեպքում ձկնային արտադրանքը պետք է վարակազերծվի գոյություն ունեցող մեթոդներով:

Չի թույլատրվում Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել ձկնային այնպիսի արտադրանք, որը՝

- սառեցված է, մթերքի շերտում ունի Ցելսիուսի սանդղակով -18-ից բարձր ջերմաստիճան,

- ախտոտված է սալմոնելաներով կամ մանրէաբանական այլ վարակների հարուցիչներով,

- մշակված է ներկող նյութերով, իոնացնող ճառագայթամբ կամ ուլտրամանուշակագույն ճառագայթներով,

- ունի վարակիչ հիվանդություններին բնորոշ փոփոխություններ,

- զգայորոշման (օրգանոլեպտիկ) ցուցանիշներով համարվել է անորակ,

- պահման ժամանակ ենթարկվել է դեֆրոստացիայի (հալեցման),

- (Tetraodontidae, Molidae, Diodontidae և Canthigasteridae) ընտանիքների թունավոր ձկները,

- պարունակում է մարդու առողջության համար վտանգավոր կենսաթույներ (Ciguatera):

Երկփեղկ կակղամորթները, փշամորթները, թաղանթավորները և ծովային փորոտանիները (այսուհետ՝ կակղամորթներ) մաքրման կենտրոններում պետք է անցնեն անհրաժեշտ պահման գործընթաց:

Անասնաբուժասանիտարական փորձաքննություն անցկացնելիս ձկնային արտադրանքը պետք է համարվի պիտանի՝ սննդի մեջ օգտագործելու համար, և չպետք է պարունակի բնական կամ սինթետիկ էստրոգեն, հորմոնալ նյութեր,

թիրեոստատիկ պատրաստուկներ, հակաբիոտիկներ, թունաքիմիկատներ և այլ դեղորայքային միջոցներ:

Ձկնային արտադրանքի միկրոկենսաբանական, քիմիաթունաբանական և ռադիոլոգիական ցուցանիշները, ֆիկոտոքսինների և այլ աղտոտիչների պարունակությունը (կակղամորթների համար) պետք է համապատասխանեն Մաքսային միության տարածքում գործող անասնաբուժական և սանիտարական կանոններին և պահանջներին:

Գլուխ 30

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք բնական մեղր և մեղվաբուծական մթերքներ ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել բնական մեղր և մեղվաբուծական մթերքներ, որոնք ստացվել են գոտիավորմանը համապատասխան այնպիսի տնտեսություններից (մեղվանոցներից) և վարչական տարածքներից, որոնք զերծ են գյուղատնտեսական և ընտանի կենդանիների վտանգավոր վարակիչ հիվանդություններից, ինչպես նաև ամերիկյան փտախտից, եվրոպական փտախտից, նոզեմատոզից՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում:

Մեղրը և մեղվաբուծական մթերքները պետք է համարվեն պիտանի՝ սննդի մեջ օգտագործելու համար:

Չի թույլատրվում Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել բնական մեղր և մեղվաբուծական մթերքներ, որոնք՝

– ունեն զգայորոշման, ֆիզիկաքիմիական փոփոխված ցուցանիշներ կամ փաթեթվածքի խախտված ամբողջականություն,

- պարունակում են բնական կամ սինթետիկ էստրոգեն, հորմոնալ նյութեր, թիրեոստատիկ պատրաստուկներ:

Բնական մեղրում և մեղվաբուծական մթերքներում չի թույլատրվում այնպիսի դեղերի մնացորդների առկայությունը, ինչպիսիք են քլորամֆենիկոլը, քլորֆարմազինը, կոլխիցինը, դապսոնը, դիմետրիդազոլը, նիտրոֆուրանները, ռոնիդազոլը, ինչպես նաև կումաֆոսը՝ 100 մկգ/կգ-ից ոչ ավելի, և ամիտրազը՝ 200 մկգ/կգ-ից ոչ ավելի պարունակությամբ:

Մեղրում և մեղվաբուծական մթերքներում չի թույլատրվում այլ դեղերի մնացորդների պարունակություն, որոնք օգտագործվել են մեղուների բուժման և մշակման համար: Արտադրողը պետք է նշի այն բոլոր թունաքիմիկատները, որոնք օգտագործվել են մեղրի հավաքման և մեղվաբուծական մթերքի արտադրության ընթացքում:

Մեղրի և մեղվաբուծական մթերքների քիմիաթունաբանական (ծանր մետաղներ, թունաքիմիկատներ), ռադիոլոգիական և այլ ցուցանիշները պետք է համապատասխանեն Մաքսային միության տարածքում գործող անասնաբուժական և սանիտարական կանոններին և պահանջներին:

Գլուխ 31

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք ձվի փոշի, մելանժ, ալբումին և հավի ձվի վերամշակումից ստացված այլ սննդամթերք ներմուծելու և (կամ) Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել ձվի փոշի, մելանժ, ալբումին և հավի ձվի վերամշակումից ստացված այլ սննդամթերք, որոնք ստացվել են առողջ

թռչուններից՝ կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տնտեսություններից, և արտադրվել ձեռնարկություններում:

Վերամշակման համար օգտագործվող ձուն պետք է ստացված լինի կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տնտեսություններից, այդ թվում՝

- ՄԱԲ-ի Կանոններին համապատասխան՝ պարտադիր հայտարարագրման ենթակա գրիպից՝ վերջին 6 ամիսների ընթացքում,

- գրիպի այլ վիրուսներից՝ վերջին 3 ամիսների ընթացքում տնտեսությունում,

- թռչունների Նյուկասյան հիվանդությունից՝ վերջին 12 ամիսների ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- օրնիտոզից (պսիտտակոզից), պարամիկսովիրուսային վարակից, հավերի ինֆեկցիոն բրոնխիտից, Գամբորո հիվանդությունից, ինֆեկցիոն լարինգոտրախեիտից, ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտից՝ վերջին 6 ամիսների ընթացքում տնտեսության տարածքում:

Չի թույլատրվում Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել ձվից այնպիսի սննդային արտադրանք, որը՝

- ունի զգայորոշման, ֆիզիկաքիմիական փոփոխված ցուցանիշներ կամ փաթեթվածքի խախտված ամբողջականություն,

- ախտոտված է սալմոնելաներով կամ մանրէաբանական այլ վարակների հարուցիչներով,

- մշակված է քիմիական նյութերով, իոնացնող ճառագայթմամբ կամ ուլտրամանուշակագույն ճառագայթներով:

Ձվից կամ ձվի պարունակությամբ մատակարարվող մթերքները պետք է ենթարկվեն վերամշակման, ինչի արդյունքում երաշխավորվում է կենսունակ ախտածին ֆլորայի բացակայությունը:

Ձվից սննդային արտադրանքն արտահանող երկրի իրավասու պետական ծառայության կողմից պետք է համարվի պիտանի՝ մարդկանց կողմից սննդի մեջ օգտագործվելու և առանց սահմանափակումների ազատ վաճառքի համար:

Ձվից սննդային արտադրանքի միկրոկենսաբանական, քիմիաթունաբանական, ռադիոլոգիական և այլ ցուցանիշները պետք է համապատասխանեն Մաքսային միության տարածքում գործող անասնաբուժական և սանիտարական կանոններին և պահանջներին:

Գլուխ 32

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մաքսային միության մաքսային տարածք սննդային ձու ներմուծելու և (կամ)

Կողմերի միջև տեղափոխելու դեպքում

Թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածք ներմուծել և (կամ) Կողմերի միջև տեղափոխել սննդային ձու, որն ստացվել է առողջ թռչուններից՝ կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տնտեսություններից, և արտադրվել ձեռնարկություններում:

Ձուն պետք է ստացված լինի կենդանիների և թռչունների վարակիչ հիվանդություններից զերծ տնտեսություններից, այդ թվում՝

– ՄԱԲ–ի Կանոններին համապատասխան՝ պարտադիր հայտարարագրման ենթակա գրիպից՝ վերջին 6 ամիսների ընթացքում,

